2338

9(47)
Г-95

1926

ՅՈՍՋ ԱԿՐ ԳՀ

Ն. ԲՈՒԽԱՐԻՆ

Ապիտակների ուղին

ԵՎ

ԲԱՆՎՈՐԱ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ԴԱՇԻՆՔԸ

ՄՈՍԿՎԱ 1926

ԽՍԶՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

9(47)
Ф-95

91471
Ը-95

30 MAY 2011

Ն. ԲՈՒԽԱՐԻՆ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻՆ

ՅԵՎ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ 1926

ГОС. ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА Ленинград ОБГАШЕНО

11.03.2013

2338

Напечатано в типог. Госиздата
„Красный Пролетарий"
Москва, Пименовская ул.
д. № 16, в количестве 3.500 экз.
Главлит
№ 64086.

3327-89

I. ՄԵՆՔ ԴՈՒՐՍ ԵՆՔ ԳԱԼԻՍ ԱՂՔԱՏ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ. ՄԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՆՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԿԱՎՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՑԵՎ ԽՈՇՈՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ.

Սկսած 1924 թվից, մենք՝ նախկին ցարական Ռուսաստանի բանվոր դասակարգը և գյուղացիությունը, սկսեցինք շատ արա՛գ դուրս գալ սարսափելի վիղումից, սկսեցինք բուժել ծանր վերքերը, սկսեցինք վերացնել այն խառնաշփոթությունն ու անկարգությունը, որ իշխում եր անցյալ տարիներում։ Ամենքին—մեր թե՛ բարեկամներին և թե՛ չարակամներին—այժմ արդեն պարզ է դառնում, որ մեր հսկայական յերկրի տնտեսությունն այժմ վոտքի յե կանգնում։ Արտադրության ինչ ճյուղ էլ վերցնելու լինենք, ամեն տեղ մենք նկատում ենք աշխուժություն, վերելք, առաջադիմություն։

Մեր յերկրում ամբողջ տնտեսության հիմքը հանդիսանում է գյուղական տնտեսությունը։ Արդյունաբերությունը մեզ մոտ համեմատաբար թույլ է զարգացած, և նա էլ իր զարգացման խնդրում կախված է գյուղական տնտեսության աճումից։ Իսկ գյուղի տնտեսությունը մեր պայմաններում—դա գյուղացիական տնտեսությունն է, որը ընդգրկում է քսան միլիոնից ավելի գյուղացիական ծխեր։

Իմպերիալիստական պատերազմի տարիներում, քաղաքացիական կռվի տարիներում, մեծ վիղումի տարիներում գյուղացիական այդ տնտեսությունը ավերվեց, աղքատացավ։ Բայց այժմ ամենքը տեսնում են, որ մեր գյուղը քիչ-քիչ սկսում է ուժեր հավաքել, ավելանում է

ցանքսը, աճում է արդյունաբերությունը, մշակվում են նոր կուլտուրաներ, գյուղացիները յեռադաշյան սիստեմից անցնում են բազմադաշյանին, տեղ-տեղ յերևան են գալիս նոր մեքենաներ և տրակտորներ. մի խոսքով՝ կամաց-կամաց այստե՛ղ ևս սկսվում է առաջադիմություն։ Ճիշտ է, դեռևս սարսափելի աղքատություն և թանձր խավար է տիրում։ Բայց բավական է համեմատել այժմյան դրությունը քաղաքացիական կռվի տարիների հետ,—կասած չկա, որ մենք դուրս ենք պրծնում աղքատ վիճակից։

Վերհիշենք անցած տարիները։ Քաղաքներում ֆաբրիկանների ու գործարանների մեծ մասը կանգ եյին առած, լավագույն բանվորները կռվում եյին ֆրոնտներում, քաղաքներում վառելիք չկար, հումնյութ չկար, հաց չկար։ Հակայական ֆաբրիկանեըն ու գործարանները չեյին աշխատում, խանութների դարակները դատարկ եյին. քաղաքներն արադորեն հալվում եյին, և մարդիկ այդ տեղերից, մի կտոր հաց ձեռք ձգելու համար, փախչում եյին հեռավոր գյուղերը, որ մո՛տ լինեն հողին, մի տեղում նստեն ու մի կտոր հաց կամ մի պարկ կարտոֆիլ ձեռք ձգեն։ Կարելի յե ասել, որ բոլոր քաղաքների բնակիչները թափառում եյին ամբողջ յերկրում և մի կտոր հաց մուրում։

Իսկ այժմ մենք տեսնում ենք, թե ինչպես քաղաքն արա՛գ է ծաղկում, թե ինչպես աշխուժանում են ֆաբրիկանեըն ու գործարանները, թե ինչպես նոր տներ են սկսվում կառուցվել, թե ինչպես յեռում է քաղաքային կյանքը։ Բանվոր դասակարգը, քաղցից հյուծվելով, ընդհանուր փլուզումի սարսափելի տարիներից սկսում է կազդուրվել։ Բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը, նա (բանվոր դասակարգը) իր համար հետզհետե ավելի ու ավելի՛ յե ապահովում բարվոք կյանք։ Քիչ-քիչ՝ մենք սկսում ենք քկատուցել նաև նոր գործարաններ։ Քիչ-

քիչ՝ առաջ է գնում ելեքտրոշինարարության գործը, և ելեքտրական լամպը այլևս այնպիսի հազվադյուտ բան չէ նաև գյուղակա՛ն խրճիթի համար։

Արա՛գ է առաջադիմում նաև տրանսպորտի զարգացման գործը։ Արժե միայն համեմատել անցյալ տարիների հետ,—և կտեսնենք, որ շատ առաջ ենք անցել։ Ամենքս հիշում ենք, թե ի՜նչպես եյին սողում հազվադյուտ գնացքները՝ ապակիները կոտրտված վագոններով, որոնց մեջ, մրջյունների պես, իրար վրա եյին թափվում մեշոքները շալակներին անհաշիվ մարդիկ։ Ամբողջ յերկիրն այն ժամանակ կարծես կտրտված եր և հաճախ միանգամայն անհնարին եր՝ յերկար ու յերկար ժամանակի ընթացքում՝ մի տեղից մյուսը տեղափոխվել։ Իսկ այսպես կոչված «շոգեմեքենաների գերազմանատները» (հին, փչացած, կոտրտված, ժանգոտած հանգուցյալ-շոգեմեքենաների, կոտրված, փշրված, այլանդակված վագոնների կույտերը) վկայում եյին այն քաոսի մասին, այն մեծ խառնափնթորության մասին, որ այն ժամանակ իշխում եյին մեր տրանսպորտում։

Այժմ մենք կարդի յենք դցել մեր տնտեսությունը նաև այդտեղ։ Յե՛վ յերկաթուղին, և՛ ջրային տրանսպորտը հետզհետե ավելի և ավելի հաջողություններ է ունենում, սկսում են պետությանը ուղղակի շահ բերել։ Հավիտենականության ծո՛ցն անցան փլզումի տարիները, ընդմի՛շտ անհետացան հին խառնափնթորությունները։

Վերհիշենք նաև՝ մեր խորհրդային փողերի բախտը։ Հիշում ենք, թե ինչպես ավելի և ավելի՛ եր ընկնում մեր խորհրդային դրամանիշների արժեքը, դրամանիշներ, որոնք առնում եյին արդեն ֆունտերով, որպես անպետք թղթե փաթթոցներ. Խորհրդային այդ դժբախտ դրամանիշների վրա պահվում եր պետական դրամատունը։ Դա մի այնպիսի շրջան եր, յերբ տնտեսությունն ու պետական

դրամատունը բոլորովին մոտ եյին գանվում իրենց կատարյալ խորտակմանը։

Իսկ այժմ մենք ունենք «հասատատուն դրամ», քաղաքներում ու գյուղերում արդեն վաղուց շրջանառության մեջ է արծաթե ու պղնձե փողը, ամո՛ւր է կանգնած մեր չերվոնեցը։ Յե՛վ գյուղացին, և՛ բանվորը, և՛ գյուղական ընտանիքը, և՛ գործարանը, և՛ ֆաբրիկան, և հանքը—այժմ կարող են հաշվել, իրենց տնտեսության պլանը կազմել, առաջուց իմանալ, թե իրենք ինչքան պետք է ծախսեն և ինչքան կարելի յե ծախսել, ինչքան պետք է վճարեն։ Պետական դրամատունը կարող է իր յեկամուտներն ու ծախսերը ուղի՛ղ հաշվել, իր սեպհական հրատկայական տնտեսության մեջ ուղիղ պլան կազմել։

Այդպիսով՝ ամեն կողմով մենք առաջադիմում ենք դեպի լավագույն ապագան։ Մեր յերկիրը հարստանում է, մենք սկսում ենք հարվածել չքավորությունն ու աղքատությունը։

Ճնշող մեծամասնությունն այն ամենի, ինչ որ մենք ունենք մեր յերկրում, պատկանում է բանվոր դասակարգին և գյուղացիությանը։ Ճիշտ է, մենք թույլատրեցինք մասնավոր առևտրականին, վաճառականին, միջնորդին,—մենք մի շարք հարցերում թույլ տվինք (ուր մենք անկարող եյինք գլուխ հանել), որ մասնավոր կապիտալիստները իրենց գործը վարեն։ Տեղ-տեղ՝ ոտարյերկրյա կապիտալիստներին մենք կոնցեսիայով (կապալով) տվինք մի քանի ձեռնարկություններ, որոնք մենք մեր ուժերով չեյինք կարող վոտքի կանգնեցնել, և այդ կապալի համար՝ ոտարյերկրյա կապիտալը մեր պետությանը վճարում է։ Բայց յեթե մեր տնտեսությունը քննելու լինենք ընդհանուր առմամբ, կտեսնենք, որ մասնավոր, կապալով ու ու կոնցեսիայով տված ձեռնարկությունները—արդյունաբերական և առևտրական—այնքան էլ շատ չեն։ Տնտեսությունների ճնշող մեծամասնությունը—դա բանվորական պետության տնտեսությունն է, կամ գյուղացիների տնտեսությունը, կամ տնայնագործների ու արհեստավորների մանր տնտեսությունները։

Ինչի՞ մասին են ամենից առաջ վկայում այս փաստերը։

Այս փաստերն ամենից առաջ վկայում են այն մասին, որ բանվորներն ու գյուղացիները միայնակ, առանց կալվածատերերի ու կապիտալիստների ոգնության, առանց նախկին տերերի և կառավարողների, առանց նրանց, ովքեր տասնյակ և հարյուրավոր տարիների ընթացքում հրամատարություն եյին անում,—բանվորներն ու գյուղացիները միայնակ, հասարակ ժողովուրդը, կարո՛ղ են հիմնել իրենց տնտեսությունը։

Այս հանգամանքն իրոք որ հսկայական նշանակություն ունի։ Աշխարհումս դեռ յերբեք չեր յեղել այսպիսի մեծ հեղաշրջում, ինչպիսին տեղի ունեցավ մեզ մոտ 1917 թվի հոկտեմբերին։ Վոչ մի անգամ և վոչ մի տեղ, վոչ մի յերկրում, ժողովրդի աշխատավոր մասսաներին դեռ չեր հաջողվել՝ տաք տեղերից դուրս քշել բուրժուական հասարակարգի հրամանատարներին։ Դեռ վոչ մի տեղ բանվորներն ու գյուղացիները ի վիճակի չեյին յեղած իրենք ձեռնարկելու իրենց սեպհական բախտը կռելու գործին։ Յեվ բուրժուական հասարակակարգի պաշտպանները, կալվածատերերի ու կապիտալիստների պաշտպանները, շարունակ շընջում եյին ամենքի ականջին, որ աշխատավոր մասսաները—բանվորները և գյուղացիները—անզոր կլինեն, յեթե նույն իսկ ցանկանան էլ, տնտեսություն վարել, յերկիրը կառավարել։ Ծուսվում եր ու գրվում, որ «հասարակ», «տգետ» ժողովուրդը յերբեք չի կարող վարել

այդ բարդ գործը։ Ցեվ հոկտեմբերյան հեղաշրջումից հետո նախագուշակում էին մեր անխուսափելի խորտակումը։ Հոկտեմբերյան հեղաշրջումից դեռ մի քանի որ առաջ, ռուսական բուրժուազիայի ամենախելոք ներկայացուցիչը, կադետ Միլյուկովը, գրում եր, որ բոլշևիկները չեն համարձակվի իշխանությունն իրենց ձեռքը վերցնել։ Իսկ յերբ բոլշևիկները, այսինքն՝ բանվոր դասակարգի կուսակցությունը, հիմնվելով գյուղացիության վրա, այդ իշխանությունը «վերցրին»,—աշխատավորության բոլոր թշնամիները չարախնդածությամբ սպասում էին դրա անկմանը։ Ցեվ սակայն բանվոր դասակարգն ու գյուղացիությունը ի վիճակի գտնվեցին գործը տանելու առանց կալվածատերերի, վորոնք ընդմիշտ ջնջվել ու արմատախիլ են յեղած մեր յերկրի յերեսից, ինչպես նաև առանց խոշոր կապիտալիստների, վորոնք իրենց վերջին որերն են ապրում արտասահմանյան մայրաքաղաքներում։

Այն հանգամանքը, վոր աշխատավոր մասսաները իրենք են կառավարվում, հսկայական նշանակություն ունի վոչ միայն մեզ համար, այլ և ամբողջ աշխարհի աշխատավորության համար։ Այդ չլսված և չտեսնված որինակը ուրիշ յերկրների աշխատավորներին շարունակ կոչ կանի աշխարհի մեծ վերաշինման, նրա մեծ վերակառուցման։ Այդ որինակը փորձով, գործով, ժխտո՛ւմ և բուրժուական հասարակակարգի պաշտպանների ամեն հնություրանք և հեքիաթ, վոր իբր չի կարելի յոլա գնալ առանց կապիտալիստների և կալվածատերերի։ Այդ որինակը կոչով ու հավատ և ներշնչում բոլոր հեղափոխական մարտիկներին, նոր հասարակության բոլոր շինարարներին։

II. ԻՆՉՈՒ ՄԵՆՔ ՄԻՆՉԵՎ ԱՑԺՄ ՀԱՂԹԵԼ ԵՆՔ։ (ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԸ).

Յեթե մենք մինչև այժմ ի վիճակի յենք յեղած ամեն դժվարություններից դուրս գալու, ամենածանր զրկություններից դուրս պրծնելու,—այդ, գլխավորապես, կարող եր լինել այն պատճառով, վոր մեր յերկրում կալվածատերերի ու կապիտալիստների դասինքի հանդեպ ստեղծվեց մի ուրիշ դասինք՝ բանվորների և գյուղացիների դասինքը։

Բոլոր յերկրներում հարուստները (բանկիրները, գործարանատերերը, ֆաբրիկանտները, խոշոր կալվածատերերը, յերկաթուղների, հանքերի սեփականատերերը և այլն) իրենց դոյությունը պահպանում են նրանով, վոր ստրկացնում, իրենց են յենթարկում աշխատավոր մասսաների մեծագույն մասի կամքը։ Ցեվ միայն այն ժամանակ է հասնում կապիտալի թագավորության և կալվածատերերի թագավորության մահվան ժամը, յերբ բանվոր դասակարգն ամբողջովին դուրս է գալիս բուրժուազիայի ազդեցության տակից, և յերբ նա, այդ բանվոր դասակարգը, գյուղացիության լայն խավերին դուրս է բերում բուրժուազիայի այդ ազդեցության տակից, ոգնում է գյուղացիությանը ազատվել նրանից, ոգնում է նրան կանգնել նո՛ր ռելսների վրա, նոր ինքնուրույն ուղիների վրա։ Ցեվ միայն ա՛յն դեպքում, յերբ կապիտալիստների և կալվածատերերի դեմ, հարուստների դասակարգերի այդ դաշինքի դեմ, վո՛չ աշխատավոր դասակարգերի դեմ ծառանում է աշխատավոր դասակարգերի դաշինքը, բանվորների և գյուղացիների դաշինքը, — միայն ա՛յդ դեպքում է հնարավոր դառնում հաղթանակ տանել հին հասարակակարգի վրա և ամրացնել նոր հասարակակարգը։ Այդ ճշմարտությունը մի՛շտ

պետք է հիշել, այդ չպետք է անգամ մի՛ րոպե մոռանալ։ Յեվ ամեն մի գիտակից բանվոր ու գյուղացի պետք է այդ հաստատ յուրացնի, քանի վոր միայն ա՛յդ պայմանով է, վոր մենք կարող կլինենք հուսա դնել մեր հետագա հաջողություններւի վրա։

Այդ ճշմարտությունն հաստատվում է, ամենից առաջ, մեզ մոտ տեղի ունեցած հեղափոխության ընթացքով։ Վերցնենք մեր հոկտեմբերյան հաղթանակը և տեսնենք, թե շնորհիվ ինչի՞ մենք ի վիճակի գտնվեցինք հաղթելու։ Դժվար չի լինի համոզվել, վոր հոկտեմբերյան հաղթանակը հնարավոր դարձավ հատկապես շնորհիվ նրա, վոր պայքարի ընթացքում բանվորը ձեռք մեկնեց գյուղացուն, իսկ գյուղացին ձեռք պարզեց բանվորին։ Ի՞նչ էր գյուղացու գլխավոր պահանջը։ Գյուղացին գլխավորապես պահանջում էր—հող և խաղաղություն։ Ի՞նչ էր բանվորի գլխավոր պահանջը։ Բանվորը գլխավորապես պահանջում էր, վոր ֆաբրիկաներն ու գործարանները կապիտալիստներից անցնեն ժողովրդի սեպհականություն, պահանջում էր—խաղաղություն, պահանջում էր—խորհրդային իշխանություն։ Գյուղացիները յերբեք չէյին կարող իրենց նպատակին հասնել, յեթե նրանք չպաշտպանեյին բանվորներին, իսկ բանվորներն էլ չէյին կարող իրենց նպատակին հասնել, յեթե նրանք, իրենց հերթին, իրենց ուժով չպաշտպանեյին գյուղացիների պահանջները։ Այդպիսով, բանվոր դասակարգի և գյուղացիության միջև ստեղծվեց և կռիվեց այն դաշինքը, այն «բլոկը», վորն համեմատաբար թեթև դարձրեց հաղթանակը հոկտեմբերյան մեծ որերին։ Գործը վճռվեց բանվորների և զինվորների միահամուռ և հազվագյուտ համերաշխ գործակցությամբ, զինվորների, վորոնք մեր գյուղացիության արյունն ու միսը, ուղն ու ծուծն էյին կազմում։ Զինվորները ցանկանում էյին խաղաղություն. գյուղացիներ՛ն էլ ցանկանում էյին խաղաղություն։ Գյուղացիները ցանկանում էյին հող։ Զինվորնե՛րն էլ ցանկանում էյին հող։ Գյուղացիները ցանկանում էյին բնաջնջել կալվածատերերին։ Զինվորնե՛րն էլ ցանկանում էյին բնաջնջել կալվածատերերին։ Բոլոր այդ պահանջները պաշտպանվում էյին, տարածվում էյին, մարտական լոզունգներ դառնում բանվոր դասակարգի և նրա կուսակցության ձեռքին։ Գյուղացիների պահանջները հյուսվում-միանում էյին բանվորների պահանջների հետ։ Բանվորների պահանջները հյուսվում-միանում էյին գյուղացիների պահանջների հետ։ Յեվ մեր յերկրի բնակչության հսկայական, չնչին մեծամասնության այդ միացյալ դիմադրության հանդեպ չէր կարող դիմանալ և վո՛չ մի ուժ։ Դրանումն է գտնվում մարտի հոկտեմբերյան հաղթանակի։

Ինչո՞ւ մենք հաղթեցինք, այնուհետև, քաղաքացիական պատերազմում, վոր մի քանի տարի շարունակվեց։ Չե՞ վոր, հոկտեմբերյան մեր հաղթանակից հետո, մեր դեմ միացան նաև ոտարյերկրյա կապիտալիստները, վորոնք շտապեցին ոգնության գալ ռուսական բուրժուազիային։ Չե՞ վոր մեր բուրժուազիան և նրա զինված ուժերը ամեն կերպի—և՛ զինվորա-քաղաքական, և՛ ֆինանսական—աջակցություն էյին ստանում մի շարք բուրժուական ուժեղ պետությունների կողմից։ Մի անգամ չէր, վոր մեր խորհրդային յերկիրը գտնվեց կրակների ողակում, չորս կողմից շրջապատվեց թշնամու զորքերով։ Չե՞ վոր յեղել են րոպեներ, յերբ Խորհրդային Հանրապետության մեջ միացել էյին ընդամենը միայն մի քանի նահանգներ, վորոնց սեղմում էյին թշնամիների հարձակվող զորագնդերը։ Չե՞ վոր յեղել են րոպեներ, յերբ անմիջական սպառնալիքի տակ է գտնվել Պետրոգրադը,—պրոլետարական հեղափոխության այդ առաջավոր քաղաքը։ Չե՞ վոր մի ժամանակ Դենիկինը մոտեցավ Օրյոլին, իսկ Մոսկվայում սպիտակ դավադիրները արդեն կազմել էյին իրենց

շաբնները և իրենց աֆիցերական կաղրերը, վոր շուտով բնաջնջեն «կոմունիստական շներին»։ Չե՞ վոր մենք մի անգամ չե, վոր ապրել ենք այնպիսի ամիսներ, յերբ կորված էյինք նաֆթից, ածուխից, հացից։ Չե՞ վոր ամբողջ տարիներ մենք ապրում էյինք այն դրության մեջ, վոր մեր յերկիրը նմանում եր չորս կողմից պաշարված բերդի, ուր արդեն սկսվեց քաղցն ու համաճարակը։ Յեվ չնայած դրան, մենք, բայց և այնպես հաղթեցինք շահագործողների և շահագործվողների միջև մղվող քաղաքացիական պատերազմում,—մի կողմից՝ կալվածատերերի և կապիտալիստների, և մյուս կողմից՝ բանվորների ու գյուղացիների միջև՝ իր դաժանությամբ և իր լարվածությամբ բացառիկ՝ քաղաքացիական պատերազմում։ Իսկ վո՞րտեղ են գտնվում արմատները այդ հաղթության։

Այդ արմատները գտնվում են նախ այն հանգամանքում, վոր Աբևմուտքի պրոլետարական մասսաները, յերբեմն գիտակցաբար, իսկ յերբեմն էլ հնազանդվելով լոկ իրենց դասակարգային բնազդի ձայնին, մեր կողմն էյին պահում, դիմադրությունն էյին ցույց տալիս իրենց տերերին, իրենց կառավարություններին, իրենց պետերին, և տարբեր ձևով, ամեն կերպ խանգարում էյին այդ կառավարություններին գլուխ բերել իրենց դահճական գործը—Ռուսաստանում հաղթանակած հեղափոխությունը խեղդել։ Մի շարք անգամ ե պատահել, վոր ոտարյերկրյա զորագնդերը բարձրացնում էյին կարմիր դրոշակներ և մեր ֆրոնտներից հեռանում։

Մեր հաղթանակի յերկրորդ, ներքին պատճառը կրկին հանդիսանում եր զինվորական ամուր դաշինքը՝ մեր յերկրի բանվորների և գյուղացիների միջև։ Գյուղացիները պաշտպանում էյին բանվորներին, վորոնք կռվում էյին իրենցը չորս կողմից շրջանակած թշնամիների դեմ։ Այս զինվորական դաշինքը բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, շարունակությունն ու զարգացումն եր այդ դասակարգերի՝ հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ կնքած դաշինքի։

Այդ զինվորական դաշինքը, ինքնին հասկանալի յե, կախված չեր ոդի մեջ,—նա հենվում եր հիմնական շահերի կապի վրա։ Գյուղացիությունը, կռվելով թշնամիների դեմ, պաշտպանում եր նորերս կալվածատերերից իր խլած հողը։ Թշնամի զորքերը իրենց յետևից բերում էյին կապիտալիստների, խոշոր հողատերերի, իշխանների, բարոնների ու կոմսերի մի ամբողջ շարան, վորոնք գյուրս էյին վռնդված իրենց կալվածներից և ծարավում էյին յետ ստանալու իրենց հին, տոհմական, դարերի ընթացքում դրած իշխանական բները։ Յեվ յերբ գյուղացիության զավակները—մեր կարմիր բանակի զինվորները, տանելով ցուրտ ու քաղց, հիվանդանալով տիֆով, վոտաբոբիկ պաշտպանում էյին Խորհրդային յերկրի սահմանները և նիզակներով դեն էյին շպրտում թշնամուն,—նրանք պաշտպանում էյին կալվածատերերի լծից ազատագրելու մեծ գործը։ Նրանք տեսնում էյին, վոր խլած հողը պահել կարող են՝ միմիայն դաշնակցելով բանվոր դասակարգի հետ, վորը ֆրոնտ եր ուղարկում իր լավագույն վորդիներին։ Նրանք յենթարկվում էյին բանվոր դասակարգի ղեկավարությանը, վորովհետև տեսնում էյին, թե ինչպես հեղափոխական, դասակարգային ընդհարման մեջ ֆաբրիկանների ու գործարանների զավակները հերոսաբար պաշտպանում էյին հեղափոխական գործը, զոհաբերելով ամեն ինչ՝ թշնամու վրա հաղթանակ տանելու համար։ Նրանք տեսնում էյին նույնպես, վոր միայն Խորհրդային իշխանությունն ե հանդիսանում հուսալի նեցուկ այդ չտեսնված պայքարում։ Իր հերթին, բանվոր դասակարգը նույնպես տեսավ, վոր կալվածատերերի գալուստը կնշանակեր նաև կապիտալիստների գալուստը, նաև վերադարձը ամբողջ հին ռեժիմի, նաև՝ հոկ-

տեմբերյան կռվում նվաճած ֆաբրիկանների ու գործարանների կորուստը, նաև՝ Խորհրդային իշխանության վոչնչացումը։ Բանվոր դասակարգի և գյուղացիության զինվորական դաշինքը քաղաքացիական կռվում, այդպիսով, հիմնվում եր հիմնական և արմատական խնդիրների ընհանուր լինելու վրա, վորոնք հերթի եյին կանգնած մեր յերկրի յերկու աշխատավոր դասակարգերի առաջ։ Ճիշտ ե, այդ ժամանակաշրջանի դժվարությունները,—յերբ անսովոր հաստատակամությամբ պետք եր հավաքել այն ամենը, ինչ անհրաժեշտ եր կարմիր բանակին կերակրելու համար, ֆրոնտը պահելու համար, քաղցած քաղաքներում մնացած բանվորներին ալյակցելու համար, — այդ ժամանակաշրջանի դժվարությունները մեկ, յերկու անգամ չե, վոր տատանեցին գյուղացիության մի քանի խավեր։ Մեկ, յերկու անգամ չե, վոր գյուղացիության այդ խավերը, պայքարի ծանրությունից տանջվելով և հակայական զոհեր տալու անհրաժեշտությունը չհասկանալով, անցնում եյին թշնամու կողմը, սպիտակների կողմը, «ուչրեդիլկայի» (հիմնադիր ժողովի) կողմնակիցների կողմը, կուլչակյանների կողմը։ Բայց քաղաքացիական կռվի դաժան փորձը ամեն անգամ նրանց ցույց եր տալիս, վոր սպիտակների բանակում վերադարձություն գոնել չի կարելի, քանի վոր այդ բանակը հանդիսանում եր վոչ միայն բանվոր դասակարգի վոխերիմ թշնամի, այլև գյուղացիության։ Կուլչակները ու Դենիկինները իրենց հրացանների ղունդն եյին ցցում դեպի բոլշևիկյան գործի արդարությունը ունեցած հավատի և բանվոր դասակարգի հետ սերտ գործակցության անհրաժեշտության հասկացողության մեջ։ Այդ տանջալից փորձի—արյունով նվաճված փորձի—հետևանքն այն յեղավ, վոր մեր յերկրի գյուղացիությունն ավելի՛ և ավելի՛ համոզվեց զոհողություններ տալու անհրաժեշտության մեջ՝ թշնամու վրա մեծ հաղթանակը տանելու համար։ Այսպես կռվվեց գոդումը բանվոր դասակարգի և գյուղացիության միջև՝ ընդհանուր թշնամու դեմ մղած կռվում։ Յեվ այստեղ թաղնված և մեր բոլոր թշնամիների՝ թե հայրենական և ոտարյերկրյա թշնամիների վրա մեր տարած հաղթանակի յերկրորդ արմատը։ Կալվածատերերի ու կապիտալիստների դաշինքի վրա տարած հաղթանակը—բանվորների ու գյուղացիների դաշինքի հաղթանակն ե։

Յերբ բուրժուական - կալվածատիրական զորքերի վերջին գնդերը ծովը շպրտվեցին, և խորհրդային դրոշակի ներքո, հեղափոխության կարմիր դրոշակի ներքո, նոր հիմքերի վրա, խաղաղ և ինքնակամ համակեցության հիմքերի վրա նորից համախմբվեցին մեր յերկրի բազմաթիվ աշխատավոր ժողովուրդները,—մեր յերկրում սկսվեց նոր շրջան, հերթի դրվեցին նոր խնդիրներ։ Մենք արդեն դադարեցինք լինել պաշարված, դադարեցինք կռվել. մեր բերդը փրկված եր։ Քաղաքացիական կռիվը վերջացավ։ Հարկավոր եր ըստ կարելույն շո՛ւտ անցնել խաղաղ աշխատանքի։ Հարկավոր եր սկսել կարգի բերել քայքայված տնտեսությունը։ Իսկ այդ բոլորի համար անհրաժեշտ եր անցնել տնտեսական ա՛յլ քաղաքականության, վոր համապատասխաներ այն նոր ժամանակին և այն նոր խնդիրներին, վոր ծառացած եյին մեր յերկրի աշխատավոր դասակարգերի հանդեպ։ Մասնատուման հարկավոր եր նրա համար, վոր ինչ գնով ել լինի՝ կերակրվեր զորքը և քաղցած մնացորդները բանվոր դասակարգի, առանց վորի հեղափոխության ամբողջ գործը կխորտակվեր։ Բայց մասնատուման և առևտրի արգելումը միանգամայն անպետք եյին այն ժամանակի համար՝ յերբ պետք եր անցնել գյուղական տնտեսության արտադրական ուժերի վերելքին և մեր արդյունաբերության ծավալման։ Այդպե՛ս կատարվեց անցումը դեպի նոր տնտեսական քաղաքականություն։ Քիչ-

քիչ՝ նահանջեցին վերջին պլանի վրա, իսկ հետո նաև բոլորովին անհետացան կապիտալիստական պետությունների կողմից մեր դեմ ուղղած զինված պայքարի ձնագործները։ Մեր տնտեսությունը սկսեց բարձրանալ։ Մենք սկսեցինք հետզհետե ավելի մեծ չափով առևտուր անել կապիտալիստական պետությունների հետ, և յերկար տատանումներից հետո նրանք, տատմները կրճատեցնելով, մեկը մյուսից հետո սկսեցին ճանաչել Խորհրդային իշխանությունը վորպես «որինական» իշխանություն՝ նախկին ցարական կայսրության հողերի վրա։ Յեվ ահա այստեղ մեր առաջ նոր ձևով մի ուրիշ հարց է ծառանում—մենք ի՞նչպես պետք է ապահովենք մեր վերջնական հաղթանակի գործը, աշխատավորության իշխանության ամրապնդման գործը, մեր տնտեսության աճման գործը, նոր հասարակության, նոր կարգերի, նոր հարաբերությունների շինարարության գործը։ Այդ հարցին մենք պետք է պատասխանենք հետևյալը. մենք կհաղթենք վերջնականապես, մենք կհաղթենք լիովին և ամբողջովին, մենք կկառուցենք իրո՛ք նոր աշխատավորական հասարակություն միայն ա՛յն դեպքում, յեթե վոր այդ նոր խաղաղ, վոչ զինվորական պայմաններում կարողանանք կրկին ամրապնդել բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև այնպիսի դաշինք, վորը մեզ ապահովեր հաղթանակ՝ մեր հեղափոխության ամբողջ ընթացքում։ Ահա՛ թե ինչու մենք կրկին ու կրկին անգամ պետք է մեր առաջ դնենք պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի հարցը։ Այդ լոկ կրկնություն չե հին հարցի, քանի վոր խոսքը վերաբերում է նոր պայմաններին, վորոնք ավելի բարդ են, քան առաջ։ Մենք աճում ենք, մենք տնտեսական կողմով ավելի և ավելի ուժեղ ենք դառնում։ Բայց դրա դիմաց՝ մեր ընդհանուր թշնամին այնպես չի յերևում, ինչպես քաղաքացիական կռվի անցյալ ժամանակն եր։ Յեվ պետք է մեր ճանապարհին ընկած բոլոր վտանգները հասկանալ,

վոր չսայթակղենք, ձեռքից բաց չթողնենք այն գործը, վորի համար այսքան տարիների ընթացքում մենք մարտնչել ենք։

III. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՑԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ.

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մեջ,—դաշինքի, վորի շնորհիվ մենք կանգուն մնացինք թշնամիների դեմ մղած կռվում և սկսեցինք մեր յերկրի տնտեսությունը բարձրացնել նո՛ր ձևով,—ղեկավարող դերը բանվոր դասակարգին եր պատկանում։ Բանվոր դասակարգը մեր յերկրում չի՛ կազմում աշխատավոր բնակչության մեծամասնություն։ Այդ աշխատավոր բնակչության հսկայական մեծամասնությունը կազմում են գյուղացիները։ Յեվ չնայած դրան, բանվոր դասակարգը յեղել է և կմնա վորպես ղեկավարող ուժ։ Վորպես զի հասկանալի լինի, թե այդ ինչո՞ւ յե այդպես, և թե ինչո՞ւ յե այդ հարկավոր՝ կալվածատերերի ու կապիտալիստների վրա հաղթանակ տանելու համար,—անհրաժեշտ է մանրամասն քննել այդ դասակարգերի դերությունը կապիտալիստական հասարակության մեջ։

Կապիտալիստական կարգերում, բուրժուազիայի տիրապետության կարգերում, նաև մեզ մոտ — քաղաքը գյուղի նկատմամբ միշտ գտնվել է արյուն ծծողի դերում։ Տեխնիկայի և գիտության բոլոր նվաճումները, կուլտուրայի բոլոր նվաճումները կենտրոնացել եյին գլխավորապես և ամենից առաջ քաղաքում։ Գյուղը, գյուղական տնտեսությունը յեղել են և են յերկրորդ պլանի վրա։ Նրանք իրենց զարգացման մեջ անխուսափելիորեն շատ յետ եյին մնում քաղաքից։ Քաղաքը դեպի իրեն եր քաշում բոլոր լավագույն ուժերը, ավելի յեռանդուն, գործունյա և ընդունակ մարդկանց։ Գյուղը շարունակ դատարկվում եր՝

քաղաքին տալով իր հյութերը։ Քաղաքում եր կենտրոնանում ամբողջ գրագիտությունը, արդի հասարակության ամբողջ լուսավորության գործը։ Քաղաքումն եյին թափվում բոլոր տեղեկությունները այն մասին, թե ինչ ե կատարվում աշխարհի զանազան անկյուններում։ Քաղաքում եյին գտնվում և գտնվում են պետական ապարատի հիմնական հանգույցները, կառավարական հիմնարկությունները, բուրժուական պետությունների ուժեղ և կարող բոլոր գործիքները։ Գյուղն անխուսափելիորեն դատապարտվել ե մեկուսացած կյանք վարելու, գյուղն իր ուսումով, իր գրագիտությամբ ամբողջ դարերով յետ ե մնացել քաղաքից։

Ահա այդ հիմնական տարբերությունը իր կնիքն ե դրել՝ մի կողմից՝ բանվորների վրա, մյուս կողմից՝ գյուղացիների վրա։ Բայց բանը, իհարկե, միայն դրանում չե։ Ֆաբրիկանների ու գործարանների բանվոր դասակարգը կապված չե վորևե սեփականության հետ։ Կապիտալիստական հասարակության մեջ նա իր բանվորական ձեռքերը ծախում ե տիրոջը։ Նա տեսնում ե ամեն որ, ամեն ժամ, վոր ինքն այդ տիրոջ համար ե աշխատում։ Նա սկսում ե ատել բուրժուազիային, նրան չհավատալ։ Իսկ մյուս կողմից՝ ամեն մի բանվոր ընտելանում ե կողք-կողքի աշխատել ուրիշ՝ նույնպիսի բանվորի հետ։ Բանվորներն ապրում են ու աշխատում՝ ահագին մասսաներով կուտակված լինելով հսկայական ֆաբրիկաներում ու գործարաններում, շախտաներում ու հանքերում։ Նրանք վոչ միայն սովորում են բուրժուազիային ատել, նրան չհավատալ, բայց անել նրա կատարած ամեն մի կեղծիքը, այլև նրանք սովորում են բուրժուազիային ընդհանուր դիմադրություն ցույց տալ։ Նրանք ամբողջ ժամանակն ընտելանում են այն մտքին, վոր թշնամուն հաղթել կարելի յե միայն մի հատ մատ ուժերով, վոր միայն մի հատ մատ ուժերով կարելի յե, տապալելով թշնամուն, անտեսությունը նո՛ր ձևով վարել, բուրժուազիայից խլած յերկիրը նո՛ր ձևով կառավարել։ Քաղաքային կուլտուրան բայց և այնպես նրանց ձեռքը տվել ե միքիչ միջոցներ, վորոնք բանվորին թույլ են տալիս իրենց շարքերից կազմելու կանոնավոր զորք, վոր ընդունակ ե կալվածատերերի և կապիտալիստների տիրապետության դեմ կռվի գուրս գալու, գուշակելով թշնամու բոլոր խորամանկությունները։ Այլ ե գյուղացու դրությունը։ Գյուղացին ինքն իր առանձին անտեսություն ունի, աշխատում ե իր ընտանիքի, իր անեցիների հետ միասին։ Նա անսովոր ե, բացի մի քանի բացառություն կազմող դեպքերից (որինակ՝ հունձքը և այլն) —միասին աշխատելու իր համագյուղացիների հետ միասին։ Նա ունի իր առանձին, մասնավոր անտեսությունը։ Նա, ամենից առաջ, տեսնում ե իր այդ մասնավոր անտեսության շահերը։ Գյուղական կյանքի պայմանները նրան շատ սակավ են դուրս բերում գյուղական շրջապատից։ Մինչև այժմ էլ դեռ կան այնպիսի գյուղացիներ, վորոնք յերբեք դուրս չեն գնացել նույնիսկ իրենց գավառական քաղաքը, կան և այնպիսիները, վորոնք յերբեք ճանապարհ չեն գնացել յերկաթուղով։

Ի հարկե, այդ — գյուղացու «մեղքը» չե, այլ նրա դժբախտությունը։ Բայց և այնպես—դա փաստ ե, և այդ փաստը, այդ իրականությունը պետք ե հաշվի առնել, պետք ե ուշադրության առնել։

Բացի այդ՝ գյուղացիությունը բոլորովին միատարը չե։ Գյուղացի յե կոչվում և հարուստ տրակտիրշչիկը (ողեվաճառը), գյուղական վաշխառուն, կուլակը. գյուղացի յե կոչվում և ուժեղ սեփականատերը, վորն ունի մի քանի բատրակ, շահ ե ստանում նրանց աշխատանքից և նրանց պահում ե սանձի վրա. գյուղացի յե

կոչվում և աշխատավոր սեփականատերը, վորն աշխատում է իր ընտանիքի հետ միասին իր համար, չի՛ ապրում ուրիշի աշխատանքի հաշվին. գյուղացի չե կոչվում և չունևորը, լծկան չունեցողը, հազիվ ծայրը-ծայրին հասցնողը և հաճախ ուրիշ տեղ ոժանդակ աշխատանք ունեցողը. վերջապես, գյուղացի չե կոչվում և կիսաբաժարակը, կիսաբանվորը, վորի համար նրա գյուղացիական տնտեսությունը նրա գոյությանը լոկ ոժանդակող աղբյուր է ծառայում։

Կապիտալիստական հասարակակարգում գյուղացիների հսկայական մեծամասնությունը մատնված է, եյապես, այնպիսի գոյության, յերբ մարդիկ հազիվ կարողանում են ծայրը-ծայրին հասցնել։ Բայց յուրաքանչյուր գյուղացի, ունենալով իր տնտեսությունը, իր սեփականությունը, յելք է վորոնում, գլխավորապես այն ուղղությամբ, վորպես զի, ավելացնելով իր տնտեսությունն ու իր սեփականությունը, ընկնի գյուղացիական տնտեսության հետևյալ՝ ավելի բարձր կարգը և այդպիսով աստիճանաբար բարձրանա։ Ունենալով իր տնտեսությունը և հուսալով այդ ավելացնել (թեև այդ հույսերը, եյապես, հսկայական մասով հանդիսանում են դատարկ հույսեր), գյուղացին հետևապես վորոշ հարգանք և վորոշ վստահություն է տածում դեպի ավելի խոշոր սեփականատերը, ուրեմն և դեպի բուրժուան։ Ուստի և նա չի ստվորում հարուստ դասակարգն ատել այնպիսի ատելությամբ, ինչով վոր բանվոր դասակարգն է տարբերվում՝ կանգնած լինելով կապիտալին դեմ առ դեմ։ Գյուղացիների մի մասը նույնիսկ մի առանձին տեսակի հարգանք է զգում դեպի խոշոր սեփականատերերը, ու հարկավոր է ունենալ դասակարգային պայքարի և թշնամու հետ ուղղակի ընդհարումների վորձ՝ իր դասակարգային թշնամիներին դահավեժ անելու համար։ Այդ պատճառով էլ

կալվածատերերն ու կապիտալիստները շատ ավելի հեշտությամբ են կարողանում խաբել գյուղացուն, քան բանվորին։

Իսկ մյուս կողմից, գյուղացին, վոր սովոր չե միաբան աշխատանքի և միաբան պայքարի, անկարող է լինում սիստեմատիկ մշտական դիմադրություն ցույց է տալ իր թշնամիներին։ Ցրված լինելով գյուղերում և գյուղակներում, ինչպես ավազը գետի, գյուղացիությունը իրենից չի ներկայացրել և չեր կարող ներկայացնել այնպիսի կանոնավոր ու կազմակերպված բանակ, վորպիսին հաջողվել է կազմել քաղաքային բանվորին։

Իսկ յեթե դրան ավելացնենք նաև այն, վոր քաղաքային կյանքը քաղաքային բնակչին ավելի յե տալիս ամեն տեսակի դիտողություններ, գրագիտություն, թշնամիների խորամանկությունները հասկանալու ընդունակություն և այլն, այդ դեպքում դժվար չի լինի հասկանալ, վոր գյուղացիների և բանվորների դաշինքի մեջ ղեկավարությունն անխուսափելիորեն պետք է պատկաներ բանվոր դասակարգին։ Ձե՞ վոր այն ամենից, ինչ վոր մինչև այժմ ասացինք, հետևում է, վոր բանվոր դասակարգը շատ ավելի գիտակից, շատ ավելի կազմակերպված և շատ ավելի ընդունակ ուժ է հանդիսանում՝ բնակչության լայն աշխատավորական խավերը իր յետևից տանելու համար։ Կրկին և կրկին պետք է ընդգծել, վոր նրա «մեղքը» չե, վոր նա քի՛չ է գիտակից, այլ այդ նրա դժբախտությունն է։ Բայց նույնպես պարզ է, վոր ղեկավարությունը պրոլետարիատի կողմից ոգտակար կլինի վոչ միայն իրեն՝ բանվոր դասակարգի, այլ և գյուղացիության համար։ Առանց այդ ղեկավարության՝ տանուլ կտա-

յին վոչ միայն բանվորները, այլ և գյուղացիության լայն խավերը։

Այսպես է դրությունը՝ յերթե մենք քննում ենք հարցը մի այնպիսի ժամանակի վերաբերյալ, յերբ բանվոր դասակարգն ու գյուղացիությունը գնում են զրոհ տալու կալվածատերերի ու կապիտալիստների դասինքի դեմ։ Իսկ ի՞նչպես է դրությունը, յերբ, այդ կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետության խորտակումից հետո, հարկավոր է պետություն կառավարել և բուրժուաներից ու կալվածատերերից կռվով խլած յերկրի ամբողջ տնտեսությունը վարել։

Այստեղ ևս կրկին պետք է ուշադրությամբ քննել հարցը։ Բանվոր դասակարգն ու գյուղացիությունը յերկնքից չեն իջնում՝ յերբ նրանք առաջին անգամ նվաճում են իշխանությունը։ Նրանք դուրս են գալիս կապիտալիստական հասարակության խորքերից։ Կապիտալիստական այդ հասարակության մեջ և՛ բանվոր դասակարգը, և՛ գյուղացիությունը գոնվում եյին ճնշված դասակարգերի վիճակում։ Նույն իսկ բանվոր դասակարգը կապիտալիստական հասարակակարգի ժամանակ ի վիճակի չե բարձրանալու այն աստիճան, վոր կառավարելու գործը սովորե։ Չե՞ վոր բոլոր բարձրագույն դպրոցները գոնվում եյին բուրժուազիայի ձեռքում, բոլոր հրամանատարական բարձունքները՝ կառավարության մեջ, բանակում, տնտեսության մեջ, գիտության մեջ և այլն, գոնվում եյին տիրապետող դասակարգերի ձեռքերում։ Այդ պատճառով էլ՝ բանվոր դասակարգը վոչ մի կերպ չեր կարող, կապիտալիստական հասարակության սահմաններում, իր միջավայրից առաջ բերել այն բոլոր ուժերը, վորոնք անհրաժեշտ են նրա՝ համար, վորպես զի իրե՛նք կարգավորեն—և բացառապես իրենց սեփական ուժերով—յերկրի պետական ու տնտեսական բոլոր հսկայական և բարդ ապարատը։ Յերբ աշ-

խատավորական մասսաները դեն են շպրտում կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետությունը, նրանց ուսերի վրա իսկույն այնպիսի ծանր պարտականություններ, վորոնց հանդիպելու նրանք առաջ առիթ չունեյին։ Բանվոր դասակարգը և առհասարակ աշխատավոր մասսաները այժմ արդեն պետք է մտածեն տնտեսության և կառավարական բոլոր բնագավառների մասին։ Նրանց հարկավոր են տիխնիկներ և բժիշկներ, քիմիկոսներ և ագրոնոմներ, դատավորներ և ադմինիստրատորներ, գիտնականներ և ուսուցիչներ,—մի խոսքով բոլոր այն ուժերը, առանց վորոնց չի կարելի յերկիրը տանել տնտեսական և ամեն տեսակի այլ կատարելության ուղիով։ Յեվ քանի վոր բանվոր դասակարգը իր տրամադրության տակ չունեը և չեր կարող ունենալ այդ տեսակի ուժեր, ապա ուրեմն բնական է, վոր աշխատավոր մասսաների կողմից իշխանությունը գրավելուց հետո անմիջապես հերթի յե դրվում նաև այդ ուժերից շատերին ոգտագործելու հարցն, ուժեր, վորոնք առաջ, ընդհանուր առմամբ, հավատով և ուղիղ կերպով, վոչ թե վախից ստիպված, այլ խղճմտանքով ծառայում եյին հին, իսկ այժմ արդեն գոնկեց բուրժուական ռեժիմին։ Հետևապես, աշխատավոր մասսաների առաջ ծագում է նոր տեսակի բարդ խնդիր, բոլոր վերոհիշյալ ուժերին իրենց նպատակներին յենթարկելու խնդիրը, ինչպես նաև այն խնդիրը, վոր դրանց պետք է վերամշակել այնպիսի վոգով, ինչպես վոր անհրաժեշտ է՝ նոր հասարակակարգի հաստատման և ամրապնդման համար։

Յեթե բանվոր դասակարգն իր մեջ իսկույն բավական ուժ չի գտնում և նա ստիպված է, թշնամիների դեմ կռվելով և նրանց հայտնի ու գաղտնի դիմադրությունը անդադար արմատախիլ անելով, ոգտագործել այն ուժերը, վորոնք առաջ նրան թշնամի կամ կիսաթշնամի եյին և մի-

այն վերջերս են նրա կողմն անցել,—ապա ավելի ևս քիչ ուժեր կգտնվեն գյուղացիության մեջ, որը, ինչպես գիտենք տեսանք, կապիտալիստական ռեժիմի պայմաններում շատ ավելի չետացված է և շատ ավելի պակաս ընդունակ՝ թշնամու ծրագրները գուշակելու և ուղիղ քաղաքականություն տանելու համար։

Բանվոր դասակարգը, համենայն դեպս, չնայած իր՝ կապիտալիստական հասարակության պայմաններում ճընշված լինելուն, ընդունակ է դուրս գալիս ղեկավարելու ընդհանուր քաղաքականությունը, այդ քաղաքականության ընդհանուր ուղղությունը և, անխուսափելիորեն կատարելով մի շարք սխալներ, սակայն, վերջ ի վերջո, սովորում է հաղթել և այն դժվարությունները, որ հանդիպում են իր նոր ճանապարհին։

Ինքնին հասկանալի չե, որ վաղ թե ուշ նաև գյուղացիությունը փորձի վրա հետզհետե ավելի ու ավելի կսովորի տնտեսական և քաղաքականության շինարարության գործը։ Եվ չեթե այն ժամանակ, երբ աշխատավոր դասակարգերի խնդիրը միայն կազմում եր կալվածատերերի ու կապիտալիստների դաշինքի կործանումը, չեթե այն ժամանակ պրոլետարիատի ղեկավարող դերը անհրաժեշտ եր՝ բանվորների և գյուղացիների դաշինքի խնդրում, հապա իշխանությունը նվաճելուց հետո այդ ղեկավարությունը չեր քաոնում ավելորդ կամ պակաս չափով կարևոր։ Ընդհակառակը, կարելի չե ասել, որ, մանավանդ առաջին շրջանում, նոր հասարակակարգի ամրապնդման և զարգացման առաջին շերտում, երբ չերևան են գալիս հսկայական քանակությամբ նոր և չափազանց բարդ խնդիրներ,—այդ ղեկավարությունը, ինչպես ել լինի, պետք է ապահովվի։ Բանը չերբեք նրանում չե, որ բանվոր դասակարգն անպայման «ցանկանում է» լինել առաջին տեղում։ Բանը նրանումն է, որ

—այս մասին ինչպես ել մտածելու լինենք գյուղացիության մի քանի խավերը—այդ ղեկավարությունն անհրաժեշտ է նաև գյուղացիական ամենալայն մասսաների ոգուտի տեսակետից։ Եթե բանվոր դասակարգը, որևե պատճառով, կորցներ իր ղեկավարությունը գյուղացիության նկատմամբ, այն ժամանակ, միանգամայն անխուսափելիորեն, բանը կվերջանար բուրժուազիայի հաղթանակով։

Այդպիսով, ղեկավարությունը բանվոր դասակարգի կողմից հանդիսանում է ամենաանհրաժեշտ պայմանը բանվորա-գյուղացիական գործի հաղթանակի համար։ Բայց հարցը շատ ավելի դժվար է, քան այդ թվում է առաջին հայացքից։ Բանը նրանումն է, որ ինքը բանվոր դասակարգն ևս միատարը չե։ Նրանում և նրա ներսում կան պանապան բաղկացուցիչ մասեր, որոնք թեև այնքան ել խիստ չեն տարբերվում միմյանցից, ինչպես այդ տեղի ունի գյուղացիության մեջ գոյություն ունեցող տարբեր խավերի, դրուպպաների ու դասակարգերի միջև, բայց և այնպես դա պետք է ուշադրության առնվի։ Վերցնենք, որինակ, բանվոր դասակարգի այնպիսի խավը, ինչպիսին են գյուղա-տնտեսական բանվորները—բատրակները։ Նրանք վարձու բանվորներ են, նրանք մեծ մասամբ կապված չեն վոչ մի սեփականության հետ, բայց և միաժամանակ նրանց աշխատանքի ընդհանուր պայմանները (գյուղը և ընդհանրապես գյուղական պայմանները. դրա հետ կապված՝ կուլտուրական և քաղաքական հետամնացությունը. մեծ ցրվածությունը աշխատանքի մեջ. մեծ նմանությունը գյուղացիական տնտեսության աշխատանքի պայմանների հետ և այլն) չափազանց դժվարացնում են նրանց գիտակցականության աճումը քաղաքային բանվորների համեմատությամբ, որոնք չերկրի կուլտուրական կենտրոններում ապրում ու աշխատում են խմբովին։ Ես-

թե մենք քննելու լինենք բոլոր բանվորական դասակարգն ամբողջովին վերցրած, ապա կտեսնենք, որ այստեղ կան և՛ գյուղացիությունից դուրս յեկածները, և՛ արհեստավորների, և՛ մանր առևտրականների միջից դուրս յեկածները և այլն։ Մյուս կողմից, կան նաև այնպիսի բանվորներ, որոնք արդեն հանդիսանում են բանվորներ՝ շատ կարելի յե՝ յերկու կամ յերեք սերնդից և մոր կաթի հետ արդեն ծծել են մտածողության պրոլետարական կերպը, պրոլետարական սովորույթները ու հայացքները։ Տարբեր պայմանների մի ամբողջ շարք տարբեր կերպով և ազդում բանվոր դասակարգի զանազան խավերի վրա։ Յեվ այդ իսկ պատճառով հասկանալի յե, որ իր գիտակցականությամբ բանվոր դասակարգը յերբեք չի յեղել—և մինչև այժմ էլ դեռ չի հանդիսանում—բոլորովին միատարր։ Ավելի գիտակից բանվորները, որոնք ուրիշներից ավելի պարզ և ավելի լավ են տեսնում աշխատավոր մասսաների ուղիներն ու հիմնական շահերը, համախմբվում են աշխատավորության ամենաառաջավոր կազմակերպության՝ կոմունիստական կուսակցության մեջ, կուսակցություն, որ ամենահետևողական և ամենախելացի ձևով է տանում պայքարը՝ կապիտալի իշխանության վոչնչացման և ապագայի նոր հասարակության կառուցման համար։ Յեթե կուսակցության մեջ համախմբվում է պրոլետարիատի ավելի գիտակից մասը, ապա միանգամայն ակնհայտ է, որ իրեն՝ պրոլետարիատի ներսում նրան պետք է պատկանի, իր հերթին, ղեկավարող դերը։ Յեվ այստեղ մենք նույնպես կարող ենք ասել—ի հարկե, ավելի հետաքրքիր բանը չվորները «մեղավոր» չեն նրանում, որ իրենք հետաքրքիր են, «մեղավոր» չեն, որ իրենց գիտակցականությամբ տեղի յեն տալիս բանվոր դասակարգի ուրիշ խավերին, — դա նրանց հանցանքը չե, այլ «դժբախտությունը»։ Մյուս կողմից, միանգամայն հասկանալի յե և ակնհայտ, որ, յե-

թե ղեկավարությունը կուսակցության կողմից թողնվեր, յեթե այդ ղեկավարությունը վորևե կերպ վոչնչացվեր, — այդ հանգամանքը մեծ չափով կվնասեր ամբողջ բանվոր դասակարգին ընդհանուր առմամբ, քանի որ այդ կնշանակեր՝ բանվոր դասակարգի ավելի գիտակից, ավելի առաջավոր և ավելի կազմակերպված մասի կողմից ունեցած ղեկավարության վոչնչացում։

Յեվ այդպես՝ մենք ինչի՞ հանգեցինք։ Մենք հանգեցինք այն բանին, որ բանվորա-գյուղացիական գործի հաղթանակի, աշխատավոր մասսաների գործի համար անհրաժեշտ են հետևյալ հիմնական պայմանները.—առաջին՝ անհրաժեշտ է բանվորների և գյուղացիների դաշինքը, նրանց բլոկը. յերկրորդ՝ այդ դաշինքի մեջ ղեկավարող դերը պետք է պատկանի բանվոր դասակարգին. յերրորդ՝ իրեն, բանվոր դասակարգի ներսում, ղեկավարող դերը, իր հերթին, պետք է պատկանի կոմունիստական կուսակցությանը։ Յեթե բանվոր դասակարգի ներսում կոմունիստական կուսակցության ղեկավարող դերը վոչնչանա, կամ յեթե վոչնչանա բանվոր դասակարգի ղեկավարող դերը գյուղացիության նկատմամբ, այն ժամանակ միանգամայն կպայթի ամբողջ բանվորա-գյուղացիական գործը, այն ժամանակ անխուսափելիորեն կհաղթեն յերդվյալ թշնամիները և՛ բանվոր դասակարգի, և՛ գյուղացիության։

Կարելի յե, սակայն, հարց դնել այնպիսի բաների մասին, ուր բանվոր դասակարգի և գյուղացիության շահերը չեն համապատասխանում, իսկ յերբեմն նույն իսկ հակասում են միմյանց։ Որինակ, կարելի յե ցույց տալ, որ գյուղացին իր հացը ծախում է, իսկ բանվորն այդ հացը գնում է։ Հացը ծախող գյուղացին ուրեմն շահագրգռված

ե, վոր գնները բարձր լինեն. հայը գնող բանվորը շահագրգռված ե, վոր գնները ցածր լինեն։ Այս հակասությունը, իրոք, գոյություն ունի կյանքում։ Բայց չե՞ վոր մենք չասացինք, վոր բանվոր դասակարգն ու գյուղացին —դրանք միևնույն դասակարգն են կազմում։ Մենք յերբեք չենք ասել, վոր բանվոր դասակարգի և գյուղացիության միջև վոչ մի տարբերություն չկա։ Պետք ե ճշմարտության յերեսին նայել և բանը չաղավաղել զանազան դատարկաբանություններով։ Այդ տարաձայնությունները բանվոր դասակարգի և գյուղացիության մի ջև գոյություն ունեն, բայց դրանք յետին պլանի վրա յեն անցնում այնպիսի շահերի և այնպիսի հարցերի հանդեպ, վորոնք ավելի արմատական և ավելի հիմնական նշանակություն ունեն յերկու դասակարգերի համար։ Ճիշտ այդպես և կալվածատերերն ու կապիտալիստները յերբեք չեն կազմել միևնույն դասակարգը. նրանց միջև յեղել են շահերի շատ խոշոր հակասություններ.—քաղաքային բուրժուազիան հացը և հում նյութը ճիշտ նույնպես գնում եյին կալվածատերերից, կալվածատերերը նրանց վաճառում եյին այդ հացը և այդ հում նյութը. և ընդհակառակը, բուրժուազիան կալվածատերերին վաճառում եր արդյունաբերության պրոդուկտները, իսկ կալվածատերերը նրանից գնում եյին այդ պրոդուկտները։ Յեվ չնայած դրան, չնայած այդ բավական եյական հակասությանը, կապիտալիստների և կալվածատերերի դաշինքը, մանավանդ վերջին ժամանակներս, հասարակական կյանքի հիմնական փաստն եր կազմում, և ամենուրեք՝ կալվածատերերի ու կապիտալիստների բլոկը, բուրժուազիայի ղեկավարությամբ, այսինքն՝ այդ կապիտալիստների ղեկավարության տակ, հանդիսանում եր տիրապետող ուժ, վորի դեմ բանվոր դասակարգն ու գյուղացիությունը ստիպված եյին և ստիպված են պայքար մղել։ Ճիշտ այնպես, ինչպես կալվածատերերն ու կապիտալիստները՝ չպատկանելով միևնույն դասակարգին և միմյանցից տարբերվելով՝ միմյանց հետ բլոկ, դաշինք են կազմում տնտեսական կյանքում և բանվոր դասակարգի ու գյուղացիության հանդեպ մղվող դասակարգային պայքարում, ավելի ու ավելի՛ յեն սերտ միանում, ճիշտ այնպես ել պրոլետարիատը և գյուղացիությունը, պատկանելով տարբեր դասակարգերի, բայց և այնպես պետք ե առաջ ընթանան միմյանց հետ բլոկ կազմած, միմյանց հետ սերտ դաշինք կնքած. իսկ գյուղացիությունը, իր կողմից, պետք ե, իր սեփական հիմնական շահերի համար, աջակցի պրոլետարիատին, նրա հետ դաշինքի մեջ լինի, ինքնակամ համաձայնվի՛ բանվոր դասակարգի ղեկավարող դերին, քանի վոր միայն ա՛յդ պայմաններում ե հնարավոր բանվորա-գյուղացիական գործի ընդհանուր հաղթանակը։

IV. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԱՅՔԱՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԵՄ՝ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

Այն հանգամանքը, վոր գյուղն իր զարգացման խընդրում յետ ե մնում քաղաքից, այդ հանգամանքն առաջ ե բերում մի շատ կարևոր յերևույթ, այսինքն՝ գյուղացիությունը սովորաբար ի վիճակի չե լինում միանգամայն ինքնուրույն դեր խաղալու, նա անխուսափելիորեն ընկնում ե կամ բուրժուազիայի ազդեցության տակ, կամ պրոլետարիատի ազդեցության տակ։ Գյուղացիությունը շատ հաճախ տատանվում ե կապիտալիստական հասարակության այդ յերկու հիմնական դասակարգերի մեջև։ Իր հերթին, բուրժուազիան, ոգտագործելով իր դերքի բոլոր առավելությունները, ոգտագործելով բոլոր ֆինանսական միջոցները, իր քաղաքական տիրապետությունը, իր մոնոպոլիան պետության

վրա, դպրոցի, լրագրների վրա և այլն, տանում է սիստեմատիկ, համառ, յերբեք չընդհատվող պայքար նրա՛ համար, վորպես զի իր տիրապետությանը, նաև իր իդեյական տիրապետությանը յենթարկի գյուղացիության լայն խավերին, ըստ վորում գյուղացիության վրա ունեցած բուրժուական այդ ազդեցության հաղորդիչները սովորաբար հանդիսանում են գյուղացիության ավելի հարուստ խավերը, վորոնք՝ բնականաբար ձգտում են դեպի բուրժուազիան։ Բանվոր դասակարգը, իր հերթին, պայքարում է նրա՛ համար, վորպես զի ազատագրի գյուղացիությունը բուրժուազիայի ազդեցությունից, գյուղացիությանը բացատրի՛ կապիտալիստական հասարակակարգի դեմ պայքարելու անհրաժեշտությունը, մի հասարակակարգի, վոր հակասում է գյուղացիական չքավորության և մասամբ միջակ-գյուղացիության լայն մասսաների հիմնական շահերին։ Նայած թե դեպի ուր է թեքվում, դեպի վոր կողմն է տատանվում գյուղացիությունը,—պրոլետարիատի կողմը թե՞ բուրժուազիայի կողմը,—ըստ այնմ էլ վճռվում է հարցը—արդյոք ամբապի՞նդ է կալվածատերերի և կապիտալիստների բլոկը, թե՞ դրան, իրոք, լուրջ վտանգ է սպառնում բանվորների և գյուղացիների բլոկի կողմից։ Մեր հեղափոխության որինակի վրա կարելի յե հրաշալի կերպով տեսնել, թե ինչպես բուրժուազիան փորձեց ոգտագործել գյուղացիության խավարամտությունը և նրա ավելորդ վստահությունը դեպի խոշոր սեփականատերերը, փորձեց ոգտագործել նրա՛ համար, վորպեսզի գյուղացիությունից դարձնի թնդանոթի մի՝ պրոլետարիատի հանդեպ։ Յեվ ճիշտ այդպես էլ մեր հեղափոխության փորձի և նրա զարգացման վրա կարելի յե հրաշալի կերպով տեսնել, թե ինչպես պրոլետարական կուսակցության կողմից տարվող ուղիղ քաղաքականության հետևանքով կարելի յե գյուղացիությանը, հենց սրա սեփական շահերի համար, դուրս բերել

բուրժուազիայի ազդեցության տակից և գյուղացիությունից ստեղծել լրացուցիչ, շատ նշանակալից և ամուր ուժ, վորի սայրն ուղղված է կապիտալիստական շահագործական հասարակության դեմ։

Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո, բուրժուազիան փորձեց գյուղացիությանը խաբել պատրաստի հարցում։ Բուրժուազիան, խաղալով գյուղացիության խավարամտության վրա, գյուղացիության՝ հայրենիքին նվիրված լինելու հանգամանքի վրա, փորձեց իմպերիալիստական պատերազմը ներկայացնել վորպես բացառապես պաշտպանողական պատերազմ. մինչդեռ բուրժուազիան այդ պատերազմը վարում էր անգլիական և ֆրանսական իմպերիալիստների ուղղակի ցուցմունքով և առաջ քշում կապիտալիստների մարտակով։ Բուրժուազիան խաղում էր գյուղացիության հայրենասիրական և սեփականատիրական լարերի վրա, բուրժուազիան փորձեց մեր հեղափոխության ամենահեղափոխական կուսակցությունը՝ բոլշևիկների կուսակցությունը ներկայացնել վորպես գերմանական շպիոնների, գերմանական ագենտների խումբ, վոր իբրև իբր նպատակ են դրել մեր յերկիրը վաճառելու գերմանական իմպերիալիզմին։ Յեվ պետք է ասել, վոր մի ժամանակ, շնորհիվ բուրժուական ամբողջ մամուլի կողմից տեղի ունեցած կատաղի հարձակման, նրան հաջողվեց հասնել վորոշ—իր տեսակետից լավ—հետևանքների։ Մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը ստիպվեցան ծանր ժամանակներ ապրելու, յերբ սոցիալիստ-հեղափոխականների մանր բուրժուական կուսակցությունը գյուղացիության գլուխն անցավ և մենշևիկների՝ մեր յերկրում մի այլ մանր բուրժուական կուսակցության հետ միասին լիովին անցկացրեց այն քաղաքականությունը, վոր նրանց թելադրում էր մեր բուրժուազիան։ Յեվ միայն մեր կուսակցության յեռանդուն գործնեությունը և պատերազմի

ու հեղափոխության վորձը, վորից իրենք մասսաները հետզհետե համոզվել էին բոլշևիկների լիովին իրավացի լինելու մեջ, արեցին այն, վոր բուրժուական խաբեությունն ու բուրժուական սուրը պատերազմի վերաբերմամբ մինչև վերջ մերկացվեցին։

Բուրժուազիան վորձեց նմանապես շատ վարպետորեն ոգտագործել գյուղացիության շրջանում նաև վորոշ նախապաշարմունքները՝ հողային հարցի վերաբերմամբ։ Գյուղացիության լայն մասսաները ցանկանում էին ստանալ (և այդ՝ մեր գյուղի դարավոր չերազն էր) կալվածատերերի հողերը, սաստիկ և հաստատակամորեն ցանկանում էին խլել այդ հողը կալվածատերերից։ Սակայն գյուղացիության մի քանի խավերը, առաջին հերթին՝ ավելի ունևոր խավերը, վորոնք, մի կողմից՝ կալվածատիրական հողերի մեջ քի՛չ կարիք էին զգում և մյուս կողմից՝ շատ ավելի պատիվ ու հարգանք էին տածում առհասարակ դեպի խոշոր սեփականատերերը, բնականաբար դանվում էին տատանման և անվճռական դրության մեջ։ Բուրժուազիան իր լակեյների կուսակցության միջոցով, սոցիալիստ-հեղափոխականների միջոցով, վորձեց կանգնեցնել գյուղացիության բնական ձգտումը կալվածատիրական հողերը խլելու։ Ամեն կերպ պնդում էին, վոր չի կարելի հողը խլել՝ մինչև վոր չդումարվի «հիմնադիր ժողովը», վոր չի կարելի կալվածատիրոջը իր կալվածատիրական գույքերից վռնդել՝ առանց հատուկ որենքի. վախեցնում էին սարսափելի կոտորածով և հողային սարսափելի քաոսով, վոր պետք է առաջ գար, յեթե գյուղացիները «ինքնագլուխ», այսինքն՝ առանց սպասելու վորևե կարգադրության վերևից, այդ հողերը խլեին, կալվածատերերին դուրս քշեին, նրանց հետ արժանի հաշիվ տեսնեին։ Միայն մեկ կուսակցություն՝ բոլշևիկների կուսակցությունը, բանվոր դասակարգի կուսակցությունն էր

պնդում, վոր կալվածատիրական հողերը պետք է անմիջապես կոնֆիսկացիայի յենթարկվեն. բոլոր միտինգներում և ժողովներում կոչ էր անում գյուղացիներին, վոր գյուղացիները պետք է՝ վոչնչի չսպասելով և վոչվոքի չլսելով՝ իրե՛նք խլեն այդ հողերը կալվածատերերից։ Մենք հիշում ենք այն ժամանակը, յերբ կառավարության մեջ նստած էին բուրժուազիայի ներկայացուցիչները՝ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության ներկայացուցիչների հետ միասին, և յերբ այդ կառավարությունը բանտարկում էր գյուղացիական հողային կոմիտեները՝ դեպի կալվածատիրական հողերն ունեցած նրանց վոչ այնքան քաղաքավարի վերաբերմունքի համար։ Իսկ մեր կուսակցությունն, ընդհակառակը, յեռանդուն աշխատանք էր տանում՝ գյուղացուն հասկացնելով ամբողջ անհրաժեշտությունը կալվածատիրոջն ավերելու, նրան դուրս քշելու հողից։ Վորովհետև միայն ազա՛տ արձակելով գյուղացիության հեղափոխական եներգիան (իսկ այդ ազատ արձակել պետք էր ամենից առաջ և առաջին հերթին հողային հարցի վերաբերմամբ), մենք կարող էինք հեղափոխական հաղթանակի համար իրոք ամուր յերաշխիքներ ստեղծել։ Բուրժուազիայի, եսերների, մենշևիկների և ուրիշների միասնական ծրագիրը, հողային հարցի վճռման ձգձգելու ծրագիրը, վորը եյական վոչ այլ ինչ էր, յեթե վոչ՝ ընդհանուր առմամբ աջակցություն հին ռեժիմին, այդ ծրագիրը տապալվեց այն պատճառով, վոր գյուղացիությունը հողային հարցում գնաց վոչ թե բուրժուազիայի յետևից, այլ գնաց բանվոր դասակարգի յետևից, գնաց վոչ թե բուրժուազիայի և համաձայնողական կուսակցությունների չափավոր լոզունգների յետևից, այլ գնաց այն հեղափոխական հետևողական լոզունգների յետևից, վոր գնում էր բանվոր դասակարգի կուսակցությունը։

Իսկ այդ կառաղի պայքարը բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև՝ գյուղացիության վրա ազդեցության ձեռք բերելու համար՝ շարունակվեց նաև հետագայում։ Բուրժուազիայի համար ամենից վտանգավորը, իհարկե, հանդիսանում էր իշխանության նվաճումը բանվոր դասակարգի կողմից և այդ իշխանության ապրապնդումը։ Բուրժուազիան շատ լավ էր հասկանում, որ այդ անխուսափելիորեն կկատարվի՝ եթե գյուղացիությունը վճռական վայրկյանին պաշտպանի բանվոր դասակարգին։ Մեր բուրժուազիան շատ լավ հաշվի էր առնում այն փորձը, որ նրան ժառանգություն էր թողել կործանված ցարական ռեժիմը, նա հիշում էր, որ եթե կալվածատիրական ցարին հաջողվեց 1905 թվին ջարդել հեղափոխական ժողովրդի ուժերը, այդ հենց այն պատճառով էր, որ գյուղացիությունն այն ժամանակ բանվոր դասակարգին հարկավոր վայրկյանին աջակցություն ցույց չտվեց.— գյուղացիությունը դուրս չեկավ բավական ուշ, արդեն այն ժամանակ, երբ ջարդված ու ցրիվ եր տված հեղափոխական շարժման առաջընթաց գունդը—քաղաքի բանվոր դասակարգը։ Ցարիզմին այն ժամանակ հաջողվեց վերջ տալ հեղափոխությանը հատկապես այն պատճառով, որ նրան հաջողվեց ջարդել հեղափոխական բանակը մաս-մաս։ Ուստի և հասկանալի չե, որ բուրժուազիան ամեն ջանք գործ էր դնում, որպեսզի բանվորներին և գյուղացիներին անջատի։ Հոկտեմբերյան օրերից անմիջապես առաջ և հետո, Սուրհրդային իշխանության գոյության պահպանման պայքարի միջոցին, բուրժուազիան իր ագենտների՝ եսերների և մենշևիկների ոգնությամբ փորձեց խաբել գյուղացիությունը «դեմոկրատիայի» լոզունգով. նա հորդորում էր դուրս չեկնել Սուրհրդային իշխանության դեմ, այսինքն՝ պրոլետարիատի դեկավորության դեմ. հայտարարվեց այսպես կոչված «դեմոկրատիայի» և «հիմնադիր ժողովի» լոզունգը, այսինքն՝ ըստ էության՝ բուրժուական տիրապետության և դեկավարության լոզունգը—մասամբ՝ ուղղակի դեկավարության, մասամբ էլ՝ եսերների և մենշևիկների միջոցով։ Բանվոր դասակարգն ու նրա կուսակցությունը մեղադրվում էին նրանում, որ նրանք դավաճանում են «հավասարության» լոզունգին, «ազատության» լոզունգին և այլն։ Դրությունն այն ժամանակ զինվորական եր։ Անհրաժեշտ եր, ինչ գնով էլ լիներ, ամուր բազուկով, անխնա և քաջաբար խեղդել բոլոր հակա-հեղափոխական փորձերը բուրժուազիայի և կալվածատերերի կողմից։ Բուրժուազիան և կալվածատերերը մեր յերկրում ունեյին իրենց բազմաթիվ կողմնակիցները՝ հանձինս ոչ միայն մենշևիկների ու եսերների կուսակցության, այլ և հանձինս չինովնիկության, ծառայողների, այսպես կոչված ինտելիգենցիայի (բժիշկների, իրավաբանների, ուսուցիչների, պրոֆեսորների, հոգևորականության և այլն) հակայական խավերի, եվ չենք խոսում նախկին ցարական զորքի սպայական կադրերի մասին, որոնք իրենց չափազանց մեծամասնությամբ հրապարակով կողմնակից եյին հին կարգերի վերադառնալուն։ Ձեվ ահա այսպիսի ժամանակ, երբ անհրաժեշտ եր բոլոր միջոցներով անխնա պայքար մղել և թշնամուն զինաթափ անել, բուրժուազիան, եսերները և մենշևիկները դնում եյին «հավասարության» և «ազատության» լոզունգները, այսինքն՝ ազատություն դավադիրներին՝ իրենց աշխատանքը տանելու, ազատություն նախկին կալվածատերերին՝ գյուղացիներին խաբելու, ազատություն կապիտալիստներին՝ ոգտագործելու իրենց ղրամական միջոցները՝ իրենց կողմնակիցներին կաշառելու և կազմակերպելու համար և այլն։ Յեթե մենշևիկները և եսերները այնքան էլ լավ չեյին հասկանում, որ այդպիսի պայ-

մաններում «դեմոկրատիայի» պահանջը—վոր դրվում էր Սորհրդային իշխանության և պրոլետարիատի դիկտատուրայի դեմ—փաստորեն նշանակում էր ոչ այլ ինչ, եթե ոչ՝ ամեն տեսակի ազատություններն պահանջ բուրժուազիայի համար, ապա այս վերջինը հրաշալի հասկանում էր թե բանն ինչումն է։ Բուրժուազիան նախապատրաստել էր արյունոտ գեներալների զինվորական դիկտատուրա, բայց նրա համար անհրաժեշտ էր ամենից առաջ խաբել ժողովրդական լայն մասսաների թեկուզ մի մասին, գյուղացիությունը անջատել բանվոր դասակարգից, այդպիսով՝ «դեմոկրատիայի» և «հիմնադիր ժողովի» խաբեական լոզունգով ողջ ցնդեցնել Սորհրդային իշխանության բերդը։ Բուրժուազիան չէր սխալվում և հույսը, վոր եթե էրեն հաջողվի իր կամակատարների միջոցով կործանել Սորհրդային իշխանությունը, վոչնչացնել պրոլետարիատի դեկավարությունը, ապա էերբեք դժվար չի լինի իսկույն այեթ հաշիվ տեսնել եսերների ու մենշևիկների հետ, վորոնք միանգամայն անընդունակ են վոր և էե հաստատուն դեկավարության։

Իրական պայքարի փորձը ցույց տվեց, վոր այնտեղ ուր գյուղացիության մի մասը գնաց այդ խաբեական լոզունգների հետևից, հիմնադիրը ժողովի կողմնակիցների կողմն անցավ, այնտեղ դեպքերի ընթացքն անխուսափելիորեն հանգեց այն բանին, վոր կարճ ժամանակից հետո թագավորեց և անսահման իրավունքներով սկսեց իշխել ցարական գեներալներից մեկն ու մեկը։ Այդպես պատահեց հարավում (Դենիկին, Վրանգել և ուրիշները), այդպես պատահեց արևելքում (Կոլչակ և այլն)։ Գյուղացիները, սեփական փորձի վրա համոզվելով այն բանում, թե դեպի ո՞ւմ է տանում «ուչրեդիլկայի» (հիմնադիրը ժողովի) «դեմոկրատիան», նորեն շուռ էեկան դեպի Սորհրդային իշխանությունը, նորեն ազատվեցին բուրժուազիայի դեկավարու-

թյան տակից և անցան պրոլետարիատի կողմը,—այս անգամ շատ ավելի հաստատուն, վճռական և անարգել։ Յեվ բանվոր դասակարգի ու գյուղացիության կրկին վերականգնվող դաշինքը նորեն իսկապես վոր մեծ հրաշքներ կատարեց կալվածատերերի, կապիտալիստների և ոտարյերկրյա միացյալ ուժերի դեմ մղվող պայքարում։

Յեվ այժմ, փաստորեն, գյուղացիության վրա ազդեցությունն ձեռք բերելու այդ պայքարը բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև չի դադարում։ Չնայած մեր տնտեսության աճմանը, մենք հսկայական դժվարությունների առաջ ենք կանգնած։ Հին վլզումի ժառանգությունը կապարի ծանրությամբ դեռևս կախ է ընկած մեր վոտքերից։ Բանվոր դասակարգն ու քաղաքային արդյունաբերությունը իսկույն չէ, վոր կարող են տալ բավական քանակությամբ ապրանք՝ բավական եժան գներով։ Սորհրդային իշխանությունը և դեկավարող կուսակցությունը գործ են դնում ամեն ջանք, վորպես զի ըստ կարելույն շուտո՛վ բարձրացվի արտադրությունը, իջեցվի ինքնարժեքը և գյուղ ուղարկվի ըստ կարելույն եժան ապրանք։ Բայց անկարելի է իր գլխից վեր թռչել, ուստի և մեր պետական արդյունաբերությունը միայն հետզհետե է ի վիճակի լինում լուծել իր առաջ դրած խնդիրները։

Պետական ապարատի հսկայական կառուցումը, յերկրի պաշտպանության անհրաժեշտ գործը, կառավարական ամբողջ գործի կարգավորումը և այլն, բավական ծախսեր են պահանջում։ Այդ ծախսերն էլ, իր հերթին, առաջացնում են հարկադրություն (հարկի տակ դնելը), դրա հետ միասին նաև գյուղացիության հարկադրություն։ Գյուղացիական ավերված ու աղքատացած տնտեսությունների վրա այդ հարկերը մեծ բեռն են։ Յեվ բանվոր դասակարդը վոչ թե իսկույն, այլ միայն հետզհետե պետք է իջե-

ցնի այդ հարկերը, նա միայն աստիճանաբա՛ր կարող է բարելավել հարկադրման սիստեմը՝ փորձի վրա հաշվի առնելով, թե ինչ կերպ գյուղացիությանը թեթևացնի՝ նրան մատն ընկած հարկերի ծանրությունից։

Ցերիտասարդ պետությունն իր ծննդյան առաջին շրջանում չունեը բավական քանակությամբ կարող և իրենց գործը գիտցող, հեղափոխության գործին նվիրված մարդիկ. բանվոր դասակարգն ու գյուղացիությունը առաջ չեր բե՛ք չեն սովորել պետություն կառավարել։ Ուստի և զարմանալի չե, որ և՛ բանվորները, և՛ գյուղացիները, վորոնք մասնակցում են ընդհանուր - պետական շինարարության մեջ, կարող եյին անել մի շարք սխալներ, վորոնք իր հերթին ծանր անդրադարձան գյուղացիության վրա։ Պատրաստել բավական քանակությամբ մարդիկ, վորոնք անհրաժեշտ են՝ կառավարելու համար այնպիսի մի հսկայական յերկիր, ինչպիսին մերն է,—յերբեք հեշտ գործ չե։ Անցյալում իշխող դասակարգերը իրենց համար պատրաստել են իրենց անհրաժեշտ մարդկանց՝ ամբողջ հարյուրավոր տարիների և մի շարք սերունդների ընթացքում։ Իսկ Ռուրհրդային իշխանությունը, աշխատավորության իշխանությունը մեր յերկրում ընդամենը մի քանի տարի յե ինչ գոյություն ունի։ Այս իսկ պատճառով անխուսափելի յեն թերությունները մեր կառավարության սիստեմի մեջ, այս իսկ պատճառով տեղի յեն ունենում մի շարք ցավալի յերևույթներ և այսպես ասած «մեխանիզմի թերություններ»։

Ցեվ ահա այդ բոլոր թերությունները ոգտագործում են բուրժուազիայի կողմնակիցները նրա՛ համար, վորպես զի սեպեր խփեն բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, նրա՛ համար, վորպեսզի ճեղքեն ու կոտրեն բանվորների և գյուղացիների դաշինքը, գյուղացիներին դո՛ւրս բերեն պրոլետարիատի ղեկավորության

տակից և գյուղացիության թեկուզ բավական մասին զրոսվ յենթարկեն բուրժուազիայի կողմնակիցների ղեկավարությանն ու իդեյական ազդեցությանը։

Պետք է հիշել նաև այն մասին, վոր գյուղացիության վրա ազդեցություն ձեռք բերելու պայքարը, դասակարգային այդ պայքարը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, ներկայումս տարվում է, ի դեպ, մեր յերկրում միանգամայն ուրիշ, միանգամայն յուրահատուկ ձևով, այսինքն՝ գյուղացիության հետ տնտեսական, եկոնոմիական սմիչկայի (զոդումի) համար մղվող պայքարի ձևով։ Այդ պայքարը տարվում է մեր պետական արդյունաբերությամբ և պետական առևտրով՝ ընդդեմ մասնավոր կապիտալի, մասնավոր առևտրականի և վաճառականի, վորն իր կողմից կատաղի պայքարում է՝ գյուղացիության վրա իր ունեցած եկոնոմիական, տնտեսական ազդեցության աճման համար, այսինքն՝ պայքարում է նրա՛ համար, վոր գյուղացիության հետ եկոնոմիական սմիչկա կնքելու պայմաններ ձեռք բերի։ Պրոլետարիատի և բուրժուազիայի միջև տեղի ունեցող այդ պայքարը տարվում է հատուկ միջոցներով, և պրոլետարիատը այդ պայքարում կարող է հաղթել միայն այն չափով, ինչ չափով վոր նրան իսկապես կհաջողվի բարձրացնել իր արդյունաբերությունը, ստեղծել առևտրական լավ և եժան ապարատ և ամբողջ գյուղացիությանը ցույց տալ, վոր պետական տնտեսությունը կարող է գյուղացիական բնակչության եկոնոմիական կենսական պահանջներն ու կարիքները ավելի լավ բավարարել, քան մասնավոր կապիտալիստը, մասնավոր առևտրականը, մասնավոր վաճառականը, մասնավոր միջնորդը։

V. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՀԻՆ ՌԵԺԻՄԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՑԵՏԿԻ ԴՈՒՆԻՑ.

Բանվոր դասակարգի ձեռքում, պետական իշխանության տրամադրության տակ են այժմ գտնվում ամբողջ խոշոր արդյունաբերությունը, տրանսպորտը և խոշոր մեծաքանակ առևտուրը: Նոր բուրժուազիայի և հին բուրժուազիայի ճնացորդների ձեռքում գտնվում են համեմատաբար աննշան կապիտալներ, բայց նրանք ունեն հսկայական փորձ, ճկունություն, խորամանկություն, հմտություն: Մասնավոր կապիտալն այդ միջոցներով մեր դեմ մղում է սիստեմատիկ, հուսահատական, ուղղակի կատաղի պայքար: Այդ պայքարը արյունահեղ ընդհարումների կերպարանք չունի, սակայն նա հսկայական նշանակություն ունի մեր յերկրի ամբողջ բախտի համար: Ուստի և բանվոր դասակարգի ու գյուղացիության համար առանձնապես կարևոր է հիշել, թե ո՞րպիսի պայմաններն են ապահովում բանվոր դասակարգի և գյուղացիության հաղթանակը և ո՞րպիսի պայմանները կարող են առաջ բերել կուլակածատերերի ու կապիտալիստների դաշինքի հաղթանակ:

Մենք արդեն ասացինք, որ բանվոր դասակարգի խնդիրը և քաղաքային արդյունաբերության խնդիրը հանդիսանում է արտադրության այնպիսի զարգացում, որը լիովին և եժան բավարարեր գյուղացիական բնակչության կարիքները: Յեթե այդ չկա, և յեթե մասնավոր ձեռնարկողը, որինակ, մասնավոր մանր ֆաբրիկանտը ավելի լավ և ավելի եժան է արտադրում, քան պետական գործարանները,—ինքնին հասկանալի յե, որ իսկական սմիչկան գյուղացիության հետ՝ ձեռք է բերում այդ մասնավոր ձեռնարկողը, որը գյուղացու աչքում բարձրացնում է իր տնտեսական կշիռը, իր հեղինակությունը. և ընդհակառակը, այդպիսի դեպքում, պետական ձեռնարկությունների տնտեսական հեղինակությունը, դրա հետ միասին նաև ամբողջ պետության հեղինակությունը, գյուղացիության աչքում ընկնում է: Յեթե մեր պետական առևտուրը, մեր առևտրական ագենտները—շնորհիվ իրենց անկաշառության, շնորհիվ իրենց ապարատի վերադիր բարձր ծախսերի, շնորհիվ այն հանգամանքի, որ գործն անփույթ են վարում և այլն—ապրանքը թանկ են ծախում այն միջոցին, յերբ մասնավոր առևտրականը, որ սովոր է ոգտագործել ամեն չնչին բան, եժան է ծախում,—այդ դեպքում գյուղացիությունը բայց և այնպես ավելի շատ կգնահատի մասնավոր առևտուրը, քան պետականը: Մասնավոր առևտրականի տնտեսական հեղինակությունը ավելի բարձր կլինի, քան պետական հիմնարկությունների տնտեսական հեղինակությունը: Իսկական եկոնոմիական սմիչկա, իսկական ազդեցություն ձեռք կբերի մասնավոր կապիտալը, իսկ այդ բոլորը նշանակում է վոչ այլ ինչ, յեթե վոչ—բուրժուազիայի հաղթանակը բանվոր դասակարգի նկատմամբ՝ գյուղացիության վրա եկոնոմիական ազդեցություն ունենալու պայքարում:

Կարելի յե ասել, որ հարցն այժմ այսպես է դրված—թե ով ում հետ սմիչկայի (զոդման) մեջ կլինի,—մասնավոր առևտրականը և կապիտալի՞ստը գյուղացիության հետ, թե՞ պրոլետարական արդյունաբերությունը այդ նույն գյուղացիության հետ: Այս հարցի պատասխանից և բղխում է դասակարգային պայքարի ընթացքը: Միանգամայն կարևոր չէ, որ այդ պայքարը տարվում է խաղաղ ձևերով, որ այդ պայքարը մենք տանում ենք առանց մետաղե զենքերի շաչյունի: Ջնայած դրան, նա իսկապես հսկայական նշանակություն ունի, նա, այդ պայքարը, իրականապես վճռում է ամեն ինչ:

Յեթե մասնավոր առևտրականը և կապիտալիստը մեր

անտեսական կյանքում իրենց համար ավելի և ավելի տեղեր գրավեն, և յեթե այդ դասակարգերը իրենց տնտեսական սմիչկան գյուղացիության հետ սահմանեն, ապա այդ կնշանակե՝ պայթյուն և ճեղքվածք այն հիմքում, վորի վրա ներկայումս պետք է կառուցել բանվոր դասակարգի ու գյուղացիության ամբողջ դաշինքը։ Յեթե բուրժուազիային իրոք հաջողվեր տնտեսապես ավելի ու ավելի ճնշել պետական արդյունաբերությունն ու պետական առևտուրը, ապա դրա անխուսափելի հետևանքը կլիներ այդ բուրժուազիայի զորացող քաղաքական ազդեցությունը գյուղացիության վրա։ Ներկայումս, յերբ քաղաքացիական պատերազմը վերջացել է, և յերբ գլխավոր խնդիրը հանդիսանում է տնտեսության ամրապնդումը, միանգամայն հասկանալի յե, վոր բանվոր դասակարգի՝ գյուղացիության վրա ունեցած քաղաքական ազդեցության զորացումը, այդ գյուղացիության՝ դեպի Խորհրդային իշխանությունն ունեցած վստահության զորացումը կարելի կլինի ապահովել լոկ այն չափով, ինչ չափով վոր Խորհրդային իշխանությունը իրեն ընդունակ ցույց կտա ամբողջ յերկրի տնտեսական ղեկավարության գործում։ Յեթե այդ չլինի, յեթե հակառակը լինի, ապա այն ժամանակ պրոլետարիատը գյուղացիության վրա իր ունեցած քաղաքական ազդեցությունը անխուսափելիորեն կկորցնի և նույն այդ գյուղացիությունը կընկնի բուրժուազիայի՝ քաղաքական ազդեցության տակ։

Յեթե վոր գյուղացիությունը դուրս գար պրոլետարիատի քաղաքական ղեկավարության տակից և ընկներ բուրժուազիայի ու մանավոր կապիտալի ազդեցության տակ, ապա դրա հետևանքը կլիներ Խորհրդային իշխանության կործանումը և բուրժուական ռեժիմի վերականգնումը, այսինքն՝ նոր բուրժուազիայի և մեծ հեղափոխու-

թյան ժամանակ ջարդված հին բուրժուազիայի ճնշողների քաղաքական տիրապետության հաստատումն։ Այդպիսի նոր կառավարության առաջին գործը կլիներ ամեն տեսակի ազգայնացման անպայման վերացումը,—ֆաբրիկաներն ու գործարանները կանցնեին մասնավոր մարդկանց ձեռքը, մասնավոր գործարանատերերին ու ֆաբրիկանտներին. իսկույն կվերացվեր հողի ազգայնացումը և թուլ կտվվեր այդ հողի ազատ առևտուրը և սպեկուլյացիա. կսկսվեր տեղի ունենալ խելագար, կատաղի՝ մեծաքանակ գնումն այդ հողի, առաջին հերթին նրա այն մասի, վորը գտնվում է բավական չափով ինվենտար չունեցող չքավոր գյուղացիության ձեռքին։ Շատ կարճ ժամանակամիջոցում տեղի կունենար գյուղացիության սարսափելի հողազրկություն և հողային խոշոր ֆոնդերի (պաշարների) կենտրոնացում՝ հողային ճարպիկ սպեկուլյանտների ձեռքը, վորոնց մի մասն իրենք կդառնային նոր կալվածատերեր, ձեացածները, այդ հողերն ուրիշ հարուստ մարդկանց վրա ծախելով, կնպաստեին այն հանգամանքին, վոր այդ վերջիններից ևս կստեղծվեին կալվածատերերի լրացուցիչ խավեր։ Այդ նոր կալվածատերերը, ինքնին հասկանալի յե, կսկսեյին իրենց հողի մի մասը կապալով տալ գյուղացիներին, նրանց ստիպելով մեծ գումարներ վճարել վորպես կապալառուական գին։ Այդպիսով, մենք նորից կվերադառնայինք այն կարգերին, վորոնք չափազանց նման կլինեյին ա՛յն կարգերին, վոր սրբեց մեր հեղափոխությունը, և վորոնց միանգամայն վերջ տալու համար այնպե՛ս հերոսաբար կռվեցին և՛ բանվոր դասակարգը, և՛ գյուղացիությունը։

Կառավարող նոր դասակարգերը ստիպված պետք է լինեյին լիովին վճարելու ցարական կառավարության բոլոր պարտքերը, կերենսկու կառավարության բոլոր պարտքերը, և վորպես զի ի վիճակի լինեյին այդ իրո՛ք հսկա-

յական գումարները վճարելու, նրանք ստիպված պետք է լինեին գյուղացիության վրա անլսելի հարկեր նշանակել՝ շա՛տ ավելի բարձրացնելով հարկադրության չափը և անխնա ճնշելով բանվոր դասակարգին նրա՛ համար, որպես դի վորձեն, սեփականատիրական հիմունքների վրա, ընթացք տալ մասնավոր արդյունաբերությանը։ Ինքնին հասկանալի չե, վոր միանգամայն կվոչնչացվեյին վոչ միայն խորհրդային որգանները, այլև բանվոր դասակարգի ամեն տեսակի միջամտությունը՝ արտադրության ընթացքի մեջ. կվոչնչացվեյին ամեն տեսակի գործարանային կոմիտեները, արհեստակցական միությունները կզրկվեյին իրավունքներից, բանվոր դասակարգը ամբողջովին ու լիովին կհեռացվեր՝ արտադրության մեջ վորևե կարգադրական դեր ունենալուց։ Գյուղացիությունը ևս շատ շուտով կհասկանար, վոր նա գործը տանուլ է տվել, վոր բանվոր դասակարգի և գյուղացիության միջև չեղած դաշինքի վոչնչացումը հակայական վնաս կպատճառեր գյուղացիության լայն խավերին և վոր այդ դաշինքի վոչնչացումը ձեռնտու կլիներ միմիայն և բացառապես կուլակային տարրերին, շահագործող խավերին, այսինքն՝ գյուղատնտեսական բուրժուազիային։ Մասսաները նորից մեծ շարժման մեջ կզրվեյին, գյուղացիությունը նորից կկսեր կացինները սրել և նոր կալվածատերերի վրա յեղանները բարձրացնել, և ամբողջ պատմությունը կկսվեր սկզբից, հակայական կորուստներով՝ բանվոր դասակարգի ուժերի սպառումով, գյուղացիության ուժերի սպառումով, բուրժուազիայի շատ ավելի մեծ փորձառությամբ. և այդ բուրժուազիային ավելի՛ մեծ չափով ոգնության կհասներ ամբողջ ոտարյերկրյա կապիտալը (այս անգամ վո՛չ բաժան-բաժան, ինչպես այդ կատարվեց 1917 թ.)՝ իր սեփական իմպերիալիստական խորամանկ նկատառումներով։

Ի հարկե, այս ամենն իսկապես տեղի չի ունե-

նա։ Հասատատ կարելի յե ասել, վոր կկատարվի մի ուրիշ բան։ Մեր պետական արդյունաբերությունը, մեր պետական առևտուրը, մեր կոոպերացիան հետզհետե ավելի ու ավելի կզարգանան, ավելի ու ավելի կճնշեն մասնավոր առևտուրը ու մասնավոր միջնորդին, և վերջիվերջո, բանվոր դասակարգը այդ հողի վրա ավելի ու ավելի մեծ հաջողությամբ իր ազդեցության և իր ղեկավարության տակ կառնի գյուղացիական լայն խավերին, դրանց մասնակից անելով նորեժիմի, նոր հասարակակարգի ակտիվ ղեկավարության գործին։ Մենք առաջ կընթանանք վոչ թե սովորական կապիտալիստական ուղիով, մենք կընթանանք և արդեն ընթանում ենք միանգամայն ինքնուրույն ուղիով, մեր սեփական, հատուկ, սոցիալիստական ճանապարհով։ Այդ հնարավոր է դառնում, քանի վոր բանվոր դասակարգը՝ գյուղացիության կողմից աջակցություն ստանալով՝ նվաճեց ու ամրապնդեց իր պետական իշխանությունը։

VI. ՄԵՐ ՑԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆ.

Բանվոր դասակարգի և գյուղացիության թշնամիները պնդում եյին, վոր սոցիալիստական հասարակակարգը իրականացնելու ամեն մի փորձը իսկապես նշանակում է վոչ այլ ինչ, յեթե վոչ՝ ընդհանուր չքավորություն և «հավասարություն՝ աղքատության մեջ»։ Բանվոր դասակարգի թշնամիները, վոր քաղաքացիական պատերազմի տարիներում մեր յերկիրը խեղդում եյին ու տանջում և հենց դրանով էլ նրան աղքատացնում ու ավերում, ասում եյին, վոր այդ աղքատացումը և ավերումը բղխում է սոցիալիզմի և կոմունիզմի իսկական եությունից։ Ի հարկե, այդ բոլորը միանգամայն անմիտ բան է։ Մեր կուսակցության խնդիրը կայանում է նրանում, վոր մեր յերկրի հարստությունները չեղած բարձրության հասցվեն, իսկ

այնուհետև — նաև ամբողջ աշխարհինը, — բայց վոչ թե առանձին անհատների հարստությունը, վոչ թե միլիոնատերերի առանձին գրուպաների, մանավոր կապիտալիստների, սպեկուլյանտների, բանկիրների, բերժևիկների և նմանների հարստությունները, այլ ամբո՛ղջ ժողովրդի, ամբողջ աշխատավորության հարստությունը, հարստությունը այն յերկրի ու յերկրների, վորոնք արդեն նվաճված են նախկին տիրապետող դասակարգերի ձեռքից։ Մենք պետք է լինենք լավագույն տեխնիկայի, հողի մշակության լավագույն միջոցների, աշխատանքի կազմակերպության լավագույն մեթոդների հաղորդիչներ. մի խոսքով մեր դերը, մեր նշանակությունը այսպիսի ժամանակում, յերբ մենք կապիտալիստներից ու կալվածատերերից իշխանությունը նվաճել ենք, կայանում է նախ նրանում, վոր տնտեսական ամեն տեսակի բարելավումների կրողները լինենք։ Իսկ ինչ վերաբերում է արդյունաբերությանը,—այդ բարելավումները կայանում են նրանում, վոր կառուցվեն նոր և խոշոր գործարաններ, վոր անցնենք ելեքտրական եներգիային, վոր ամբողջ արդյունաբերական աշխատանքը հիմնված լինի ելեքտրոֆիկացիայի վրա և այդ արդյունաբերության կազմակերպությունը ավելի ուղիղ, ավելի պլանաչափ լինի. վոր հետզհետե ավելի ու ավելի՛ մոտենանք այնպիսի կարգերին, յերբ ամբողջ արդյունաբերությունը մեկ պիտի լինի ընդհանուր պլանով, վորի ժամանակ վոչինչ իզուր տեղը չի կորչում, մի ավելորդ վատնում ու ծախս չի կատարվում և վորի ժամանակ, այդ իսկ պատճառով, պրոդուկտների ինքնարժեքը հետզհետե ավելի ու ավելի փոքր է դառնում։ Սակայն այդ տեսակի պլանային տնտեսություն արդյունաբերության մեջ անիրագործելի յե, քանի վոր մեր արդյունաբերությունը իր նկատի ունի մեծագույն մասամբ գյուղացիական շուկան, արդյունաբերական արտադրության պրոդուկտների սպառողները հանդիսանում են, առաջին հերթին, մեր գյուղացիական տնտեսությունները։ Վորպես զի արդյունաբերության մեջ ճիշտ պլան լինի, դրա համար անհրաժեշտ է իմանալ, թե գյուղացիական տնտեսությունները վո՞րքան կպահանջեն. դրա համար պետք է խիստ հաշվի առնել — թե պետական արդյունաբերությունից գյուղացիական այդ տնտեսությունները ի՞նչպիսի պրոդուկտներ և վո՞րքան կպահանջեն։ Վորպեսզի արդյունաբերությունը իր զարգացման համար ավելի ու ավելի հնարավորություններ ունենա, անհրաժեշտ է, վոր զարգանա նաև ինքը գյուղացիական տնտեսությունը. իսկ մյուս կողմից, նույնպես անհրաժեշտ է, վոր գյուղացիական այդ տնտեսությունն ինքը ավելի ու ավելի լավ կազմակերպված լինի, այնպիսի՛ տնտեսություն լինի, ուր առանձին ծխերը և առանձին մանր տնտեսությունները հետզհետե ավելի ու՛ ավելի ընթանային իրար հետ փոխադարձաբար կապվելու ուղիով։ Գյուղացիները հաճախ են դանգատվում այն մասին, վոր իրենք բանվորներից վատ են ապրում, որվա մեջ ավելի՛ յեն աշխատում, յերազե՛լ անգամ չեն կարող որեկան միայն 8 ժամ աշխատելու մասին և այլն և այլն։ Բայց չե՞ վոր դժվար չե հասկանալ, վոր այդ ամենը տեղի յե ունենում հենց գյուղացիական տնտեսության սարսափելի հետամնացությունից՝ համեմատած ֆաբրիկայի կամ խոշոր արտադրության հետ։ Գյուղացիական տնտեսությունը—այդ նույնն է թե՝ արհեստավորի կամ մանր ապրանքագործի փոքրիկ տնտեսությունը՝ արդյունաբերության արտադրության բնագավառում,—նա՛ ևս նստած է իր փոքրիկ տնտեսության վրա, որ ու գիշեր շարունակ աշխատում է և, սակայն, նրան յերբեք չի կարելի համեմատել խոշոր գործարանի հետ, ուր կան և՛ լավագույն մեքենաներ, և՛ աշխատանքի լավագույն կազմակերպություն,

և՛ վառելիքի, հում նյութի լավագույն ոգտագործումն և այլն։ Այդպիսով, յեթե գյուղացիությունը ցանկանում է իր կյանքը լուրջ և յերկար ժամանակով բարելավել, նա պետք է ընթանա գյուղացիական տնտեսությունները միացնելու ուղիով։ Ինքնին հասկանալի յե, որ անհնար է մտածել, թե կարելի յե համոզել, կամ նույնիսկ ստիպել թե պե՛տք է համոզել գյուղացիությանը, որ բոլորը՝ մինչև վերջին գյուղացին՝ միանգամից անցնեն իրենց հողաբաժինները միացնելուն։ Հին սովորույթյուններն ու տնտեսավարության հին միջոցները մարդկանց մեջ այնպես են արմատացել, որ այդ սովորույթյունները միանգամից հիմնովին փոխել հնարավոր չե։ Ցեվ չնայած դրան, գյուղացիությունը, յեղնելով իր մասնավոր տնտեսության, առանձին և մանր տնտեսության շահերից, անխուսափելիորեն կգնա իր այդ մանր տնտեսությունները միացնելու ուղիով և դրանով ե՛լ ավելի սերտ կկապվի պետական պրոլետարական արդյունաբերության հետ։ Ի՞նչ կերպ կարելի յե պատկերացնել այդ զարգացումը։ Այդ զարգացումը տեղի կունենա կոոպերացիայի միջոցով։ Ամեն մի գյուղացիական տնտեսություն շահագրգռված է նրանում, որ իր արտադրության նյութերը ավելի լավ ու ավելի ձեռնտու գներով վաճառի, ամեն մի գյուղացիական տնտեսություն շահագրգռված է նրանում, որ քաղաքային արդյունաբերության՝ իր համար անհրաժեշտ պրոդուկտները ըստ կարելույն ձեռնտու և եժան գնի — և՛ սպառողական պահանջի գծով (մանուֆակտուրայի, վոտնամանի և նման պրոդուկտների գնումն), և՛ արտադրողական պահանջի գծով (արտադրության ամեն տեսակի միջոցների գնումն, որինակ՝ լավացրած սերմացու, գյուղատնտեսական գործիքները և այլն)։ Այնպես և գյուղացիական ամեն մի փոքրիկ տնտեսություն շահագրգռված է նրանում, որ կարիքի դեպքում ըստ կարելույն ավելի եժան վարկ ունենա։ Ցեվ ահա այս հանգամանքը, որ մանրավոր տնտեսության շահերին վոչ միայն չի հակասում, այլ բղխում է անմիջականապես այդ շահերից և թելադրվում է այդ շահերի տեսակետից, այդ հանգամանքը գյուղացիությանը մղում է դեպի կոոպերատիվ համախմբման ուղին։ Այդպե՛ս է յեղել ամեն ուրեք, այդպե՛ս է յեղել աշխարհի բոլոր յերկրներում։ Վորպես զի արդյունաբերության պրոդուկտները կամ ուրիշ յերկրների գյուղատնտեսության պրոդուկտները (որինակ՝ լավագույն սերմացու կամ տավարի լավագույն ցեղեր և այլն) ավելի ձեռնտու գնով ձեռք բերի, գյուղացիությունը կազմակերպել է գնողական կոոպերատիվային ընկերություններ։ Առանձին գյուղացիները կազմակերպվում էին, միասին հիմնում իրենց համար կոոպերատիվ, ընտրում էին իրենց կոոպերատիվի վարչություն, մուծում էին բաժնեդրամար (պայ) և այդպիսով ձեռք էին բերում հնարավորություն՝ շա՛տ ավելի կազմակերպված ճանապարհով գնելու իրենց համար անհրաժեշտ առարկաները։ Այստեղ առանձին անհատների փոխարեն, որոնք ցրված էին գործում՝ իրենց ստացվածքը վտանգի յենթարկելով, ոխակ անելով, հանդես յեկավ արդեն մի ամբողջ կազմակերպություն, որը հնարավորություն ուներ ավելի լավ իմանալու, թե ուր է ձեռնտու և ինչ է ձեռնտու գնել. այդպիսի կազմակերպությանը վաճառողը, բնականաբար, ավելի՛ եր հավատ ընծայում, քան առանձին անհատին, ուստի և պատրաստ եր վորոշ վարկ բաց թողնելու. և վորովհետև, մյուս կողմից, այդպիսի կազմակերպությունը շատ ավելի՛ եր գնում, քան առանձին անհատը, առանձին գյուղացին, և վորովհետև մեծաքանակի գները միշտ ավելի եժան են, քան հատավաճառի գները, ուստի միանգամայն հասկանալի յե, որ այս կերպի կոոպերատիվային գնումների դեպքում գյու-

դացի - գնորդները բավական գումարներ էին խնայողություն անում. և չէին ի նկատի առնենք այն հանգամանքը, որ ընդհանուր փոխադրություններն ու կազմակերպված բաշխումն ևս քիչ շահ չեն տալիս՝ համեմատած այն դեպքերի հետ, երբ ամեն մի գյուղացի առանձին պետք է իր լծկանը լծի ու քաղաք գնա, ամեն մեկն առանձին պետք է կրի իր համար անհրաժեշտ ապրանքը,—հասկանալի է դառնում, որ այս տեսակի ծախսերն էլ նույնպես շատ ավելի անգամ են պակասում կոոպերատիվային գնումների դեպքում։ Այդպիսով, գյուղացիական առանձին տնտեսությունը, ամենևին չխանգարելով տնտեսավարության իր համար սովորական յեղանակները, միևնույն ժամանակ, հենց իր սեփական, մասնավոր, մանր - սեփականատիրական շահերի ազդեցության տակ առաջ է բերում հասարակական կազմակերպություններ, այն է՝ գնումները անելու համար կոոպերատիվներ։

Կամ վերցնենք ուրիշ որինակ — գյուղացիական արտադրության պրոդուկտների վաճառումն, այն է՝ կաթի, ձվի, մսի, հացի և այլն վաճառումն։ Յերբ առանձին գյուղացին կամ գեղջկուհին իրենց սափորներով ու կողովներով անջատ - անջատ քարշ են գալիս քաղաքային շուկա, — այդ չի՛ տալիս այն արդյունքը, ինչ որ տալիս է այն դեպքում, յերբ գյուղացիները միանում են և իրենց ապրանքը վաճառելու համար մի ընդհանուր կոոպերատիվ են կազմում. այս վերջին դեպքում, շնորհիվ շուկայի պահանջները լավ ծանոթ լինելուն, շնորհիվ մատակարարության գործի լավ կազմակերպման, շնորհիվ վերադիր ծախսերի, փոխադրության, պահպանման և այլ ծախսերի խնայողության, անխուսափելիորեն շահվում են և դրանով ավելի՛ յեկամուտ են ստանում, քան այն դեպքում, յերբ նրանք հանդես են գալիս առանձին - առանձին և անկազմակերպ դրությամբ։ Սեփական արտադրության

պրոդուկտների ընդհանուր վաճառքը արտադրության մի քանի բնագավառներում բավական արագ կերպով ստեղծում է նաև իրա արտադրության կազմակերպություն։ Այսպես, որինակ, համարյա բոլոր յերկրներում, դրանց թվում և մեզ մոտ, նկատվել է և նկատվում է, որ այն գյուղացիները, որոնք ունեն կաթը վաճառելու համար կոոպերատիվները, շուտով շահագրգռվում են նրանում, որպես զի իրենց կոոպերատիվների միջոցով անցնեն նաև ամեն տեսակի կաթնային պրոդուկտների, այն է՝ պանրի, յուղի և այլն միահամուռ վաճառմանը։ Իսկ այստեղից մի քայլ է ճիում անելու, որպես զի անցնեն յուղ և պանիր պատրաստելու կոոպերատիվային գործարաններ հիմնելուն։ Գյուղացիական առանձին ծախերը հիմնում են յուղ պատրաստելու ընդհանուր գործարան, բերել են տալիս և միասին գնում են հարկավոր մեքենաներ—սեպերատորներ և այլն։ Յուղի այդ ընդհանուր գործարաններին են հանձնում իրենց առանձին տնտեսություններում ստացած կաթը և այնուհետև կազմակերպված կոոպերատիվային ձևով վաճառքի յեն հանում յուղը, պանիրը և այլն ու համապատասխան ոգուտ ստանում։ Ի վերջո՝ ստացված գումարից հանելով ընդհանուր կոոպերատիվի ռոճիկները ու նրա զարգացման վրա պրած ծախքերը, դուրս է գալիս, որ մասնավոր տնտեսությունն այս դեպքում շատ ավելի յե շահ ստանում, քան այն շահը, որ ստանում են առանձին, կոոպերատիվների մեջ չկազմակերպված արտադրողները։ Այսպիսով, հետևապես, տեղի յե ունենում մի յերևույթ, յերբ գյուղացիները առևտրի կազմակերպություններից արդեն անցնում են արտադրության միահամուռ կազմակերպության։

Նույնպես է դրված գործն, որինակ, այնպիսի շրջաններում, ուր արտադրվում է գետնախնձոր (կարտոֆիլ)։

Այնտեղ գյուղացիները հաճախ անհրաժեշտ են համարում հիմնել գեռնախնձորի մշակության (կրախմալ պատրաստելու և այլն) սեփական գործարանները։ Նման ընդհանուր կոոպերատիվային ձեռնարկություններ կան նաև ուրիշ բնագավառներում,—որինակ՝ մրգեր և բանջարեղեն չորացնելու գործը, գինու կոոպերատիվային արտադրությունն այն շրջաններում, ուր գյուղացիները պարապում են խաղողագործությամբ, ձկան կոնսերվների արտադրությունն այն վայրերում, ուր գյուղացիները պարապում են գլխավորապես ձկնորսությամբ և այլն և այլն։

Վերջապես վարկի կոոպերատիվային կազմակերպությունը նմանապես մոչ մի կերպ չի հակասում մասնավոր արտադրող - գյուղացու շահերին։ Ընդհակառակը, վարկային կոոպերատիվ ընկերությունները նույն կերպ, ինչպես և վաճառման ու գնման գործով զբաղվող կոոպերատիվները, այդպես և արտադրական առանձին ճյուղերի կազմակերպության գործով զբաղվող կոոպերատիվները, գյուղացիական այդ տնտեսություններին անխուսափելիորեն շահ են բերում. ուստի և միանգամայն պատահական չէ, որ բոլոր յերկրներում գյուղացիությունն այդ ճանապարհով է գնում։

Սակայն եյական, ուղղակի հակայական տարբերություն կա՝ մի կողմից՝ կապիտալիստական յերկրներում և, մյուս կողմից, Խորհրդային Միության մեջ գոյություն ունեցող գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման պայմանների միջև։ Կապիտալիստական ռեժիմի դեպքում գյուղացիական կոոպերացիայի բոլոր տեսակները անխուսափելիորեն ընկնում են կապիտալիստական տնտեսության ազդեցության տակ։ Հակա ուժեղ արդյունաբերությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքում, որը իրեն վարկային սիստեմը, իրեն գլուխ ունենալով չափազանց

ուժեղ բանկերը, պատկանում է մի բուռն խոշոր կապիտալիստներին, տրանսպորտը, յերկաթուղին նմանապես գրավում են կամ մասնավոր կապիտալիստների և կամ բուրժուական պետության ձեռքում։ Ամբողջ քաղաքը, փաստորեն, գտնվում է բուրժուազիայի տրամադրության տակ. նրա ազդեցությունը գյուղում, ուր, բացի նրանից, հրամանատարություն են անում կալվածատիրական-կապիտալիստական վերին մասը, հակայական գույքերի սեփականատերը,—այդ ազդեցությունն հանդիսանում է վճռողական։ Կոոպերատիվային կազմակերպություններն այդ պայմաններում, յեթե նրանք զարգանում են, անխուսափելիորեն ընկնում են բուրժուազիայի և կապիտալիստների տնտեսական ղեկավարության տակ, հետզհետե աճում են այդ կապիտալիստների ու կալվածատերերի տնտեսական կազմակերպությունների հետ և իրենք բավական չափով դառնում են առանձին տեսակի կապիտալիստական կազմակերպություններ, վորոնք հենվում են վարձու աշխատանքի ոգտագործման և շահագործման վրա։ Յենթադրենք թե գյուղատնտեսական վորևե կոոպերացիա ունի ազատ կապիտալ. կապիտալը անխուսափելիորեն գոյանում է այն ղեպքում, յեթե այդ կոոպերացիան զարգանում է, և վո՛չ թե թուլանում։ Ինքնին հասկանալի յե, վոր մի շարք ղեպքերում — և հետզհետե՝ ավելի շատ չափով—այդ ազատ կապիտալը անմիջականորեն կամ միջնորդավոր ղրվում է զանազան տեսակի բանկային հիմնարկությունները (կամ մասնավոր բանկերը, կամ պետական բանկը, վոր գտնվում է բուրժուական պետության տրամադրության տակ)։ Այդ ղեպքում՝ կոոպերատիվային կազմակերպության և բուրժուական բանկի միջև առաջ է գալիս կապիտալների «միասին աճեցում»։ Կոոպերացիան ընկնում է այդ բանկի անպայման ազդեցության տակ և այս ձևի

եկոնոմիական ամիչկայի միջոցով յենթարկվում է տնտեսական (իսկ դրա հետևանքով—քաղաքական) ղեկավարությանը բուրժուազիայի կողմից։ Եթե մենք ունենք գնումներ անելու գործով զբաղվող կոոպերատիվներ, ապա այդ կոոպերատիվները ստիպված են գործ ունենալ բուրժուական սինդիկատների և տրեստների հետ, այսինքն խոշոր գործարանատերերի ու ֆաբրիկանտների կազմակերպությունների հետ։ Այստեղ էլ, այսպիսով, անխուսափելիորեն առաջ է գալիս եկոնոմիական ամիչկա և եկոնոմիական կախումն խոշոր կապիտալի կազմակերպություններից, որոնք կոոպերատիվների հետ կապվում են մի ամբողջ շարք փոխադարձ պայմանագրերով՝ մատակարարման, վարկային պարտավորությունների վերաբերյալ և այլն։

Ճիշտ նույն վիճակի մեջ են գտնվում նաև վարկային ընկերությունները, որոնք էլ ավելի սերտ են կապված բուրժուական բանկերի հետ և նրանցից անմիջական կախման մեջ են դրվում։ Այդպիսով, կոոպերացիայի զարգացման ընդհանուր պայմանները կապիտալիստական հասարակակարգում, նույն իսկ այն դեպքում, յեթե կոոպերատիվ կազմակերպություններն հանդիսանում են գյուղացիության շահագործվող խավերի կազմակերպություններ, այսինքն՝ վոչ-կուլակային կազմակերպություններ, այլ աշխատավո՛ր գյուղացիության կազմակերպություններ,—նույն իսկ այս դեպքում այդ կոոպերատիվները անխուսափելիորեն, հենց իրերի ընթացքով, իրենց զարգացման ընդհանուր պայմանների հետևանքով, շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանք ստիպված են աշխատելու այն շրջանակներում, վոր նրանց համար գծում է կապիտալիստական հասարակակարգի տիրապետությունը,— դառնում են որգաններ՝ կապիտալիստական կարգի տնտեսական հսկայական մեքենայի,

վորի մասերն են նրանք անպայման դառնում։ Կոոպերատիվային կազմակերպություններն, այդպիսով, ընդհանուր-կապիտալիստական մեխանիզմի մեջ են աճում, դառնում են նրա բաղկացուցիչ մասը, զորանում են նրա հետ միասին, իրենք դառնում կապիտալիստական յուրատեսակ ձեռնարկություններ։

Վերջապես, հակայական նշանակություն ունի այն հանգամանքը, վոր կապիտալիստական հասարակակարգի պայմաններում, ուր ամբողջ գիտությունը, ամբողջ տեխնիկան, ուսումնական ամբողջ գործը, բոլոր դպրոցները և ամբողջ մամուլը (տպագրական գործը) գտնվում են բուրժուազիայի տրամադրության տակ, կոոպերատիվների կադրային կազմը (վարչության անդամները, ղեկավարող և կարգադրող մարդիկ, խորհրդատուները, ագրոնոմները, հաշվապահները և այլն) առաջ է գալիս սովորաբար բուրժուական խավերից։ Այդ պատճառով էլ նրանք կոոպերատիվներում այնպիսի՛ գիծ են տանում, վոր ձեռնտու է տիրապետող բուրժուազիայի համար, այնպիսի գիծ, վորն ամեն կերպ զոհում է շահերի հակադրությունը՝ աշխատանքի ու կապիտալի միջև, գյուղացիների ու կալվածատերերի միջև։ Արևմտյան Յեվրոպայում և Ամերիկայում հաճախ կարելի է տեսնել, վոր գյուղացիական կոոպերատիվային կազմակերպությունների գլուխ են անցած նույն իսկ խոշոր կալվածատերեր, տերտերներ և սրանց հավատարիմ ազենտները։

Յեթե կոոպերատիվային վորևե կազմակերպություն ցանկանար վարել իր առանձին, ինքնուրույն, կապիտալիզմի դեմ ուղղված, քաղաքականություն, ապա նա դրանով անխուսափելիորեն մատնված կլիներ կործանման, նա կհենթարկվեր անտեսական առանձնահատուկ բոյկոտի՝ կապիտալիստական զորեղ կազմակերպությունների կողմից, այսինքն նա վարկ չեր ստանա կամ կստանար վատթա-

րագուչն պայմաններով, քան մի ուրիշ կոոպերատիվային կազմակերպությունը, որը հավատարիմ հպատակություն և ցույց տալիս դեպի կապիտալիզմը. նա չեր կարող վոչ մի տեղ գնել արդյունաբերության իր համար անհրաժեշտ պրոդուկտները նույնպիսի պայմաններով, ինչպես այդ կոոպերատիվները, և այլն։

Այս բոլոր պատճառներն ինքնին վորոշում են գյուղացիական կոոպերացիայի զարգացման ճանապարհը՝ կապիտալիստական տնտեսության պայմաններում։

Մի ամենամայն ուրիշ պայմաններ են մեր հասարակակարգի մեջ, այսինքն՝ պրոլետարական դիկտատուրայի կարգերում։ Կոոպերատիվային զարգացման ընդհանուր շրջանակները մեզ մոտ վորոշվում են վոչ թե նրանով, վոր ֆաբրիկանները, գործարանները, հանքերը, յերկաթուղինները և բանկերը գտնվում են բուրժուազիայի ձեռքը, այլ նրանով, վոր ամբողջ խոշոր արդյունաբերությունը, տրանսպորտը և վարկային սիստեմը գտնվում են պրոլետարական պետության տրամադրության տակ։ Ուրեմն, յեթե մեզ մոտ, մեր յերկրի արտադրական ուժերի ընդհանուր զարգացմամբ, քաղաքը հետզհետե ավելի մեծ չափով դառնա գյուղի տնտեսական ղեկավարը և հետզհետե ավելի մեծ չափով կարգավորի եկոնոմիական սմիչկան, ապա, յեթե մեր պետական տնտեսությունը զորեղանա, այդ ցույց կտա պրոլետարիատի աճող ամիչկան՝ գյուղացիության հետ։ Գյուղացիական կոոպերացիան անպայման կանճի՝ պրոլետարական տնտեսական որգանների սիստեմի մեջ, ճիշտ այնպես, ինչպես բուրժուական ռեժիմի պայմաններում նա աճում է կապիտալիստական տնտեսության որգանների սիստեմի մեջ։ Յեթե կապիտալիստական ռեժիմում կոոպերատիվային վորևե կազմակերպություն, ցանկանալով կանգնել զարգացման այնպիսի

ուղղի վրա, վոր հակասեր կապիտալիզմին, հետզհետե պիտի խեղդվե՛ր բուրժուական վարկային և տնտեսական ուրիշ որգանների կողմից, ապա, պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, ընդհակառակը, ամեն տեսակի պաշտպանություն կվայելեյին մանավանդ աշխատանքային կոոպերատիվները, չքավոր և միջակ գյուղացիների կոոպերատիվները, վորոնք ավելի՛ արտոնություններ կստանան, քան կուլակների և գյուղական ունևորների կոոպերատիվները, այսինքն՝ գյուղատնտեսական բուրժուազիայի կոոպերատիվները։ Վերջապես, կոոպերացիայի կադրի կազմը, կոոպերատիվային աշխատողները, կոոպերատիվային ծառայողները և ամեն տեսակի ղեկավարները, պրոլետարական դիկտատուրայի կարգերում, լինում են վոչ թե բուրժուական ներկայացուցիչներից, այլ հատկապես սովորում ու պատրաստվում են համապատասխան դպրոցներում և պրակտիկայում, այնպիսի ձևով, վոր հետզհետե ավելի ու ավելի՛ լավ առաջ տանեն անհրաժեշտ աշխատանքը՝ նո՛ր հասարակության շինարարության տեսակետից, և վո՛չ թե խոշոր կապիտալին ծառայելու տեսակետից։ Այստեղ տեսնվում է ամբողջ հսկայական տարբերությունը կապիտալիզմի տիրապետության տակ գտնված գյուղի զարգացման պայմանների և պրոլետարական դիկտատուրայի իշխանության տակ գտնվող նույն գյուղի զարգացման պայմանների միջև։ Չի կարելի յերևակայել, վոր մեր կարգերում զարգացումը կլինի այնպես, ինչպես կապիտալիստական կարգերում։ Ֆորհուրդների իշխանությունը, բանվոր դասակարգի դիկտատուրան յերբեք միայն քաղաքական իշխանություն չէ, և մեր պետությունը բուրժուական պետությունից տարբերվում է վոչ միայն նրանով, վոր նա գտնվում է ուրիշ դասակարգի տրամադրության տակ, այլ և նրանով, վոր նա իր ձեռքում է պահում ամբողջ խոշոր արդյունաբերությունն ու տրանս-

պրոլը, ուստի և հանդիսանում ե հսկայական, եկոնոմիական տնտեսական գործող ուժ, մի այնպիսի ուժ, որն իր կնիքն ե դնում ամբողջ յերկրի զարգացման վրա ընդհանուր առմամբ, դրանց թվում և գյուղական հարաբերությունների ամբողջ զարգացման վրա։

Յեթե գյուղացիական կոոպերատիվները, ընդհանուր առմամբ վերցրած, կաճեն պրոլետարական պետության տնտեսական օրգանների սիստեմի մեջ, այդ կնշանակի՝ տնտեսական դեկավարությունը պրոլետարիատի կողմից, այդ կնշանակի՝ բանվորների և գյուղացիների դաշինքի ամրապնդում, այդ կնշանակի, որ մենք խորը քայլերով ընթանում ենք դեպի սոցիալիզմ տանող ուղիով։

Յեվ իսկապես, ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի դեպքում մեզ մոտ ավելի ու ավելի՛ կաճի ընդհանուր արդյունաբերությունը, որը հետզհետե շատ ավելի սերտ կերպով, կոոպերացիայի միջոցով, կսկսի ծաղկել գյուղացիական տնտեսության հետ զուգահեռ։ Ինքը գյուղացիությունը՝ իր համար աննկատելի կերպով և իրենը միշտ ոգուտ բերելով՝ հետզհետե և դանդաղ կվերադաստիարակվի ու կվերամշակվի։ Առաջ՝ ցրված ու միմյանցից անջատ, տնտեսապես միմյանց հետ վոչնչով չկապված՝ գյուղացիական ծխերը հետզհետե ավելի ու ավելի՛ կմիանան իրար՝ գնումները անելու խնդրում, վաճառքի ու վարկի խնդրում, այդ գործի համար կապվելով պրոլետարական պետության տնտեսական օրգանների հետ։ Մյուս կողմից, հասարակական գնումներից և հասարակական վաճառքից, վարկի ընդհանուր կազմակերպությունից գյուղացիները աստիճանաբար կանցնեն իրենց կազմակերպություններին—յուղ պատրաստելու գործարաններին և ընդհանրապես կոոպերատիվային այնպիսի գործարաններին ու ֆաբրիկաներին, որոնք կմշակեն յերկրագործական տնտեսության և կենդանաբուծության պրոդուկտները։

Կազմակերպման այդ պրոցեսը ավելի ու ավելի առաջ կգնա և կխորանա՝ նայած թե գյուղացիությունը ինչպես սեփական փորձի վրա ավելի ու ավելի՛ կհամոզվի աշխատանքի կոլեկտիվ ձևերին անցնելու ոգտակարության մեջ։ Գյուղացիները մեքենաները միահամուռ ուժերով գնելուց կանցնեն սրանց նաև կոլեկտիվ ձևով ոգտագործելուն։ Գյուղացիական տնտեսության բոլոր ճյուղերը, մեկը մյուսի յետևից, այդպիսով, նման յուղ պատրաստելու գործարանների, կսկսեն կազմակերպվել արդեն նո՛ր հիմունքների վրա։ Սրա հետ միասին՝ քաղաքային խոշոր արդյունաբերության զարգացումը և պետական տնտեսության նյութական միջոցների աճող կուտակումը հնարավորություն կընձեռեն գյուղական տնտեսությունը ուժեղ էլեկտրոֆիկացիայի յենթարկելու։ Գյուղացիական մի շարք տնտեսություններին էլեքտրական էներգիա բաց թողնելը իր հերթին ե՛լ ավելի ուժեղ խթան կհանդիսանա հողի մշակության կոլեկտիվ ձևերին անցնելու, վորովհետև էլեքտրական էներգիային անցնելով՝ արդեն միանգամայն պարզ կդառնա այդ էլեքտրական էներգիայի ոգտագործման կոլեկտիվ ձևերի ամբողջ ոգուտը, վորովհետև գյուղացիական ամեն մի ծխին, գյուղացիական ամեն մի առանձին տնտեսությանը ծախքերի շատ ավելի քի՛չ մաս բաժին կընկնի, յեթե գյուղացիական ծխերն էլեքտրական էներգիան ծախսեն վո՛չ թե առանձին - առանձին, այլ այդ բոլոր ծխերի միացած, համախմբված դրությամբ։ Այդպիսով, գյուղացիական տնտեսության կազմակերպման պրոցեսը, վոր սկսվում ե առևտրի կոոպերատիվային կազմակերպումից, հետզհետե, գյուղացիական տնտեսության արտադրության պրոդուկտների մշակման կազմակերպության միջոցով, փոխադրվում ե նաև գյուղատնտեսական արտադրության վրա՝ այս բառի ուղղակի իմաստով։ Անցնելով էլեքտրոֆիկացիային, այդ պրոցեսը ստանում ե իր

առավել լրիվ ավարտումը։ Այսպես է զարգանում՝ հետզհետե ավելի ու ավելի կազմակերպված ձև ընդունող սիստեմը գյուղացիական տնտեսություններին, որոնք առանձին ցրված միավորներից դառնում են մեկ կազմակերպված ամբողջ։ Գյուղացիական տնտեսությունները շարունակ վերամշակում են իրենց սեփական բնությունը, միանում են միմյանց հետ և զարգանում մի ավելի ևս հակայական ամբողջի մեջ — պետական արդյունաբերության հետ միասին։ Իսկ տնտեսական այս կերպի շղթան, որը իր բոլոր մասերում կազմակերպված է, ըստ էության և է—սոցիալիզմ։

Այսպիսի ճանապարհով մենք հասնում ենք սոցիալիզմին, չնայած այն տնտեսական ու տեխնիկական հեռաստացությանը, որով այժմ աչքի է ընկնում մեր կերկերը։ Ի հարկե, այս ճանապարհը տեխնիկական և եկոնոմիական հեռատեսության պայմաններում շատ կերկար ճանապարհ է։ Բայց և այնպես այդ—ուղիղ ճանապարհն է, մի ճանապարհ, որով մենք կհասնենք սոցիալիզմին՝ եթե միայն ուղի՛ղ քաղաքականություն կտանենք գյուղացիության նկատմամբ։

VII. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՈԳՆԵՆ ՄԻՄՅԱՆՑ.

Ժողովրդական տնտեսության մեր ընդհանուր վերելքը, արդյունաբերության վերելքը՝ մի կողմից, և գյուղացիական տնտեսության վերելքը՝ մյուս կողմից, ցույց են տալիս մեկը այն մեծագույն հաղթանակներից, որ կատարեց մեր հեղափոխությունը։ Բայց միևնույն ժամանակ տնտեսական այդ զարգացումը ուղեկցվում է զարգացման առանձին տեսակի «հիվանդություններով», այսինքն իր մեջ թագցրած ունի մի քանի յուրահատուկ

հակասություններ, որոնք կարող են վտանգավոր լինել, եթե աշխատավորության ավելի գիտակից մասը, բանվոր դասակարգի ավանգարդը—մեր կուսակցությունը, չկարողանա ժամանակին դրանց նկատել և դրանք բավականաչափ պարզ բացատրել աշխատավորության լայն խավերին։ Բանը նրանումն է, որ արդեն անցել է այն ժամանակը, յերբ գյուղացին պարզ հիշում եր և յերբեք չէր մոռանում, որ բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը նրան տվեցին կալվածատիրական հողը և ոգնեցին՝ մեր յերկրի յերեսից սրբելու կալվածատիրական դասակարգն ամբողջովին։ Յերբ տնտեսական խաղաղ աշխատանքի անցանք և յերբ սկսվեց գյուղացիական տնտեսության, ինչպես նաև պետական արդյունագործության վերելքը, գյուղացիական տնտեսությունն հետզհետե ավելի ու ավելի յե դառնում ապրանքային տնտեսություն, այսինքն նա իր պրոդուկցիայի հետզհետե աճող մասը դուրս է բերում շուկա վաճառելու համար։ Գյուղացիական տնտեսությունը քանի շատ է դուրս գալիս աղքատ վիճակից, այնքան և մե՛ծ մասն այն ամենի, ինչ վոր այդ տնտեսության ներսում արտադրվում է, գնում է շուկա, փոխարկվում է փողի, և այդ փողերով, իր հերթին, կատարվում է ուրիշ այնպիսի ապրանքների գնումն, վորոնք գյուղացիական տնտեսության մեջ չեն արտադրվում, բայց վորոնք նրան պետք են։ Այդ պրոդուկտները տալիս է, առաջին հերթին, մեր պետական արդյունաբերությունը։ Այդպիսով գյուղացին շուկայում բախվում է պետական արդյունաբերության հետ, վոր գտնվում է բանվոր դասակարգի ձեռքը։ Սակայն, յերբ խոսքը վերաբերում է գյուղական տնտեսության պրոդուկտներին, գյուղացին հանդես է գալիս վորպես վաճառող, իսկ քաղաքի բնակչությունը, առաջին հերթին բանվոր դասակարգը, հանդես է գալիս վորպես գնող։ Իսկ յերբ խոսքը վերաբերում է

պետական արդյունաբերության պրոդուկտներին, ապա բանվոր դասակարգը՝ կազմակերպված որպես պետական իշխանություն՝ հանդես է գալիս վաճառողի դերում, մինչդեռ այդ ժամանակ գյուղացին այստեղ հանդես է գալիս գնողի դերում։ Բայց, ինչպես հայտնի է, գնողի և վաճառողի շահերը շուկայում հակադիր են,—գնողը շահագրգռված է նրանում, որ ապրանքը ըստ կարելվույն ավելի էժան գնի, մինչդեռ այդ ժամանակ վաճառողը անմիջականորեն շահագրգռված է նրանում, որ իր ապրանքը ավելի բարձր գնով վաճառի։ Տվյալ ժամանակաշրջանում տնտեսությունը վորքան ավելի է զարգանում, այսինքն՝ մինչև որ իրագործվի միասնական կազմակերպված — և գյուղացիական ծխերի, և պետական ֆաբրիկանների — տնտեսություն, այնքան ավելի է էական դառնում գների հարցը,—գյուղական տնտեսության պրոդուկտների գների հարցը՝ մի կողմից, պետական արդյունաբերության պրոդուկտների գների հարցը՝ մյուս կողմից։ Մենք այդպիսով տեսնում ենք, որ այստեղ կա բանվոր դասակարգի և գյուղացիության շահերի անմիջական հակասություն։ Այս հակասությունը մեր յերկրի այդ յերկու հիմնական աշխատավորական դասակարգերի միջև անխուսափելիորեն առաջ է բերում բաղխումներ, վորոշ տեսակի վտանգ են ներկայացնում բանվորա-գյուղացիական դաշինքի համար։

Սակայն այստեղ բանն ինչո՞ւմն է։ Բանվոր դասակարգի և գյուղացիության շահերի միջև կա՞ արդյոք հակասություն—անլուծելի հակասություն։ Յեվ արդյո՞ք այդ հակասության տակ միաժամանակ չե՞ն թաղնված այնպիսի՝ ավելի հիմնական շահեր, վորոնք ընդհանուր են բանվոր դասակարգի և գյուղացիության համար։ Մենք արդեն տեսանք, որ յերկու դասակարգերի հիմնական և ամենաընդհանուր շահը պարունակ-

վում է նրանց միասնական առաջխաղացության մեջ դեպի սոցիալիզմ, մի հանգամանք, վոր հնարավոր չի լինել՝ առանց բանվորա գյուղացիական դաշինքի և առանց բանվոր դասակարգի՝ այդ դաշինքի մեջ ղեկավարող դերի։ Բայց բանվոր դասակարգի և գյուղացիության այդ հիմնական և ամենաարմատական շահը իր արտահայտությունը գտնում է արդյունաբերության և գյուղական տնտեսության փոխադարձ ոգնության անհրաժեշտության մեջ, վորոնք հիմնովին կախում ունեն միմյանցից։ Մեր արդյունաբերությունը գործում է, ինչպես արդեն ասացինք, ամենից առաջ և առաջին հերթին գյուղացիական շուկայի համար։ Նա առաջ ել իր զարգացման խնդրում կախված էր այդ շուկայից, բայց պրոլետարական դիկտատուրայի պայմաններում նա անխուսափելիորեն կախում ունի այդ շուկայից ավելի մեծ չափով, քան հին ռեժիմի որոք էր, —նախ՝ մեզ մոտ արտաքին շուկայի հարցը ընկնում է, վորովհետև մենք չենք վարում այն քաղաքականությունը, նոր շրջաններ բռնագրավելու քաղաքականությունը, վոր վարում էր ցարիզմը. յերկրորդ՝ մեզ մոտ ընկնում է նաև մի ուրիշ հարց,—չկան մեծ պաշարներ նավատորմիղի, զինվորա-ծովային սպառազինման համար և ընդհանրապես մի շարք ահագին զինվորական պատվերներ, քանի վոր մենք չափազանց քիչ ենք ծախսում մեր զինվորական կարիքների վրա, վորովհետև մենք ստիպված ենք մեր յերկրի միայն պաշտպանությամբ, յերբեք չունենալով վորևե նվաճողական նպատակներ. ահա այս հանգամանքի շնորհիվ անհրաժեշտ է դառնում մի շարք գործարաններ վերասարքել, վոր դրանք, զինվորական առարկաներ արտադրելու փոխարեն, արտադրեն խաղաղ ժամանակի առարկաներ, առաջին հերթին՝ գյուղատնտեսական աշխատանքի համար անհրաժեշտ առարկաներ—

գյուղատնտեսական գործիքները և գյուղատնտեսական լինվենտար. յերբորդ՝ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման և բանվոր դասակարգի՝ գյուղացիության նկատմամբ ունեցած ազդեցության քաղաքական նշանակությունը մեզ թելադրում է նույնպես շատ ավելի մեծ ուշադրություն դարձնել գյուղացիական շուկայի վրա։

Մեր արդյունաբերությունը, այդպիսով, իր զարգացման խնդրում կախում ունի գյուղացիական տնտեսությունից։ Մեր արդյունաբերությունը արագ է ծաղկում այն չափով, ինչ չափով վոր վճարընդունակ պահանջ կա գյուղացիության կողմից։ Մեր արդյունաբերության մեջ կուտակումն արագ է ընթանում այն չափով, ինչ արագությամբ վոր կուտակումն տեղի ունի մեր գյուղացիության տնտեսության մեջ, այսինքն՝ գյուղացիական այդ տնտեսությունը վորքան շո՛ւտ է դուրս գալիս աղքատ վիճակից, վորքան ավելի՛ յե նա հարստանում, վորքան նա ավելի է գնում գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ, վորքան շո՛ւտ է բարելավում իր տեխնիկան, վորքան շո՛ւտ է անցնում հողի մշակության նոր ձևերին, այդ իսկ պատճառով էլ նա այնքան ավելի՛ յե ի վիճակի դառնում քաղաքային արդյունաբերությունից գնումներ անելու։ Գյուղացիական տնտեսության զարգացումն, իր հերթին, մտածելի չե առանց քաղաքային արդյունաբերության զարգացման։ Վորպեսզի առաջ գնա, գյուղական տնտեսությունը կարիք ունի այնպիսի պրոդուկտների, վորոնք նրանում չեն արտադրվում, այլ ստացվում են մեր արդյունաբերության զանազան ճյուղերից։ Յեթե մի գեղեցիկ որ մեր արդյունաբերության կյանքին վերջ տրվի, այն ժամանակ գյուղական տնտեսությունը կմատնվի խեղճության. նա պետք սահմանափակվեր հողի մշակության ամենապրիմիտիվ, ամենանախնական ձևերով. լավագույն

դեպքում՝ նա կանգնած կլիներ իր տեղում և ի վիճակի չեր լինի անգամ մի նկատելի քայլ առաջ շարժվելու։ Յեվ ընդհակառակը, յեթե զարգանում է արդյունաբերությունը (մետաղագործականը՝ գյուղատնտեսական մեքենաները շինելով. քիմիականը՝ պարարտացման ամեն տեսակի միջոցներ պատրաստելով և այլն), ապա գյուղական տնտեսությունը այդ արդյունաբերության մեջ սկսում է տեսնել իր զորեղ ոգնականին և իր նեցուկը, վոր վերջ ի վերջո կարող կլինի հողի մշակության հին ձևերը փոփոխել և գյուղական ամբողջ տնտեսության արտադրողական ուժերի զարգացման գործը արագ առաջ մղել։ Այդպիսով, արդյունաբերությունը իր զարգացման համար կարիք ունի գյուղական տնտեսության հաջողությունների և ընդհակառակը, գյուղական տնտեսությունը իր հաջողությունների համար կարիք ունի՛ արդյունաբերության զարգացման։ Միմյանցից ունեցած այդ փոխադարձ կախումը—ամենաարմատականն է, վորը հիմք ընդունելով պետք ուղիղ քաղաքականություն ընտրի դեկավարող կուսակցությունը, վորի պարտականությունը, առաջին հերթին, կայանումն նրանում, վորպես դի մանավոր և անցողական, րոպեական և ժամանակավոր շահերը յենթարկի մշտական, ավելի ընդհանուր, ավելի արմատական և հիմնական շահերին։

Մենք այժմ չպետք մոռանանք, վոր մեր քաղաքականությունը պետք նկատի առնի, պետք հարմարեցված լինի վոչ թե մեկ, այլ մի շարք տարիների համար։ Ներկայումս մեր հոգսը նրանում չե կայանում, վոր իշխանությունը մի կերպ մեր ձեռքում պահենք (քանի վոր ներկայումս Յորհրդային իշխանությունը ամուր է և հաստատուն),—մենք պետք մտածենք այն մասին, վորպես դի անցկացնենք քաղաքական այնպիսի պլան, վոր կազմ-

ված լինի յերկար-յերկար տարինների համար։ Յեթե խոսքը լինեը միայն այն մասին, վոր բանվոր դասակարգի և գյուղացիության միջև բաժանվի ազգային յեկամտի այն մասը, վոր մեր յերկրում ստացվում է տարվա աշխատանքի հետևանքով, և յեթե խոսքը միմիայն սրան վերաբերեր և վո՛չ թե մի այլ բանի, ապա այն ժամանակ, հասկանալի յե, անմիտ բան կլինեը բանվոր դասակարգին ասել՝ «չափազանց շատ մի՛ վերցրուս», և կամ գյուղացիությանը համոզել, վոր նա զբաղվի ինքնասահմանափակմամբ,—իրերի այդպիսի դրության դեպքում, ի հարկե, դասակարգերից յուրաքանչյուրն անխուսափելիորեն կղեկավարվեր իր անմիջական շահերով և կձգտեր իրեն համար ըստ կարելույն ավելի մեծ բաժին վերցնել ազգային ամբողջ յեկամտից, այսինքն յերկրի բոլոր յեկամտից։

Սակայն մենք ապրումենք և հույս ունենք ապրել վո՛չ յերբեք մեկ տարի. մենք հույս ունենք ապրել յերկա՛ր-յերկա՛ր տարիներ, մենք հույս ունենք շարունակ առաջ գնալ սոցիալիզմի ուղիյով։ Ուստի և այն խնդիրը, վոր դրված է մեր առաջ, այն խնդիրը, վոր դրված է յերկու դասակարգերի առաջ, յերբեք այնպես հասարակ չե, ինչպես հենց նո՛ր հիշատակածս դեպքում։ Յեթե այդ խնդիրը կայանար միայն տվյալ յեկամուտը, յերկրի ամբողջ յեկամուտը (վորը միանգամ ընդմիշտ վորոշ ե, վորը ներկայացնումե վորոշ չափով չփոփոխվող, մշտական մեծություն) միանգամից և առմիշտ բաժանելու մեջ, այն ժամանակ, ի հարկե, անկարելի կլինեը վորևի արագ զարգացում, մենք շարունակ կանգնած կլինեյինք մի տեղում։ Բայց, ի հարկե, հարցը այդ մասին չե։ Ընդդիրը կայանում ե նրանում, վորպես զի ազգային ընդհանուր յեկամուտը շարունակ բարձրացվի, շարունակ ավելացվի և ավելացվի քանակն ու արժեքավորությունը այն ապրանքների, վոր

ամեն տարի արտադրվում են մեր յերկրում, և հետևապես, ավելացվի ազգային յեկամուտը, ամբողջ հասարակության բոլոր յեկամուտն ընդհանուր առմամբ։

Յեթե ազգային յեկամտի ընդհանուր գումարը ավելանումե, ապա այն ժամանակ կա՛ մի բան, վոր կարելի յե բաժանել. յեթե ազգային յեկամտի այդ գումարը տարեցտարի շարունակ ավելանումե և աճում, ապա այն ժամանակ ամեն տարի և՛ բանվոր դասակարգին, և՛ գյուղացիությանը բաժին կընկնի արժեքների ավելի ու ավելի մեծ գումար, և յերկու դասակարգերի տնտեսական դրությունը արագ կբարելավվի։ Ուստի և բանվոր դասակարգի տեսակետից, նաև գյուղացիության հիմնական շահերի տեսակետից, խորհրդային իշխանության պայմաններում իր տնտեսությունը զարգացնողը պետք տանի այնպիսի քաղաքականություն, վորը ապահովեր գլխավորապես և առաջին հերթին պետական արդյունաբերության և գյուղացիական տնտեսության արտադրողական ուժերի զարգացումը, հետևապես, տարեցտարի ավելի արագ տեղի ունեցող աճումը ազգային յեկամտի։

Այս տեսակետից պետք քննել մեր տնտեսական քաղաքականության բոլոր հարցերը, և այս տեսակետից անհրաժեշտ ե նույնպես քննել նաև գների քաղաքականության հարցը։ Յենթադրենք թե բանվորների վորևե գրուպպա մեզ ասումե. «Բանվորներիս ձեռքումն ե գտնվում խոշոր արդյունաբերությունը, մենք ազատ ենք՝ նշանակելու բարձր գներ, դե յեկեք նշանակենք, վորպեսզի ըստ կարելույն ավելի շահ ստանանք մեր արդյունաբերության համար. յեթե այդ արդյունաբերությունը ավելի՛ շահ ստանա, ապա նա ի վիճակի կլինի ավելի՛

վճարել բանվորին, ուստի և մեր ոգուտը պահանջումե, որ մեր արդյունաբերության պրոդուկցիայի բարձր գները քաղաքականություն տանենք. այդ քաղաքականությունից ամեն տեսակի նահանջ կնշանակեր ոչ այլ ինչ, եթե ոչ՝ զիճումն մանր բուրժուազիային, կնշանակեր նահանջ դուստպրոլետարական դծից»։

Ճիշտ կլիներ այսպիսի կարծիքը։ Ի հարկե այդ սխալ կլիներ, իսկ յենթադրվող քաղաքականությունը յերբեք չէր լինի պրոլետարական քաղաքականություն, այլ կլիներ համքարական, սահմանափակ, բուրժ քաղաքականություն, որն իր քթից դենը չէր տեսնի, այսինքն կլիներ ուղղակի հիմար քաղաքականություն։ Այդ քաղաքականությունը ցույց կտար պետական արդյունաբերության և գյուղի գյուղացիական տնտեսության հիմնական կապի անհասկացողություն, նա անխուսափելիորեն այն հետևանքը կունենար, որ ինքը քաղաքային արդյունաբերությունը կարճ ժամանակամիջոցից հետո կանգ կառներ իր զարգացման խնդրում, կհանդիպեր գյուղացիական շուկայի կողմից գնողական թույլ ուժի։ Այդպիսի քաղաքականության դեպքում դուցե կարելի կլիներ մոտակա տարիները ստանալ բավական մեծ շահ՝ ի հաշիվ գյուղացիական տնտեսության քայքայման, բայց այդ քաղաքականությունը խստորեն վրեժխնդիր կլիներ կարճ ժամանակամիջոցից հետո։ Պետական արդյունաբերությունը անխուսափելիորեն կզրկվեր վաճառելու շուկայից, որը այդ պայմաններում մատնված կլիներ խիստ թուլության, և փոխանակ արդյունաբերության հետագա զարգացման և անընդհատ առաջադիմող ընթացքին, վրա կհասներ խիստ ճգնաժամ, որն այդ արդյունաբերությունը չափազանց յետ կգցեր։ Այդպիսի քաղաքականություն շարունակելու դեպքում մենք կունենայինք արդյունաբերական քրոնիկական դադար, և յեթե յետադարձ

շարժում չեյինք անի, ապա ուրեմն, լավագույն դեպքում, մի տեղում կանգնած՝ անմտորեն կընդոհանեյինք։

Յենթադրենք թե գյուղացիության վրոշ լայն խավերը կկարողանային կյանքում անցկացնել այնպիսի քաղաքականություն, որը չափազանց բարձր գներ (հացի և հում մթերքների վրա) նշանակելու միջոցով կկտրեր արդյունաբերության զարգացման հետագա հնարավորությունը։ Այն ժամանակ, այդ պայմաններում, տնտեսական մեկ տարվա ընթացքում բավական շատ ստանալով, գյուղական անտեսությունը միառժամանակից հետո կնեղվեր իր գյուղատնտեսական ինվենտարը վերականգնելու անհնարավորությունից, ել չենք ասում այն մասին, որ նա այլևս հնարավորություն չեր ունենա անցնելու իր արտադրության միջոցների հետագա բարելավմանը։ Այսպիսով այստեղ ևս կարճատես, սահմանափակ, քաղաքի և գյուղի միջև յեղած կապը չտեսնող քաղաքականությունը անխուսափելիորեն կհասցներ ազգային յեկամտի անկման և հենց դրանով՝ մեր խորհրդային հասարակության յերկու հիմնական դասակարգերի նյութական դրության վատթարացման։

Այստեղից բղխում ե, որ բանվոր դասակարգի և գյուղացիության միջև յեղած հակասությունը, որի մասին մենք վերև ասացինք, հանդիսանում համեմատաբար յերկրորդական հակասություն, և որ՝ և՛ բանվոր դասակարգի, և՛ գյուղացիության շահերի ուղիղ ըմբռնման տեսակետից, անհրաժեշտ ե տանել այնպիսի քաղաքականություն, որը արդյունաբերական ուժերի ավելի լրիվ զարգացման համար լայն հրապարակ բաց աներ։ Բանվոր դասակարգը իր սեփական շահերի տեսակետից պետք ե իր ամբողջ ուժերը գործ դնի, որպես զի ավելի արա՛գ կարի բերի իր արտադրությունը, պետական արդյունաբե-

բության պրոդուկտները ըստ կարելության եժան արտադրի և ըստ կարելության եժան վաճառի այդ պրոդուկտները, շահելով՝ մի կողմից՝ պրոդուկտների մեծ քանակի վաճառումից, մյուս կողմից՝ ամեն տարի ավելի և ավելի ապահովելով ժողովրդական տնտեսության լայնացումը։

Իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգի դերությունը չերբեք չի կարելի շփոթել այն բանվոր դասակարգի դերության հետ, որն այդ իշխանության համար դեռևս պայքարում է։ Չերբ բանվոր դասակարգը իր իշխանության համար դեռևս պայքարում է, ժողովրդական ամբողջ տնտեսության մասին հոգալը—նրա հոգատարության գործը չէ, ազգային տեկամտի աճեցումը—նրա հոգատարության գործը չէ, բոլոր հասարակության միաձուլությունը—նրա հոգսը չէ։ Ընդհակառակը, նրա հիմնական և արմատական ոգուտը կայանում է նրանում, որպեսզի ջարդի, փշրի, կործանի կապիտալիստական հասարակությունը։ Իսկ չերբ բանվոր դասակարգը հանդիսանում է իշխանության գլուխ անցած դասակարգ, նա դառնում է ամբողջ հասարակության դեկավ՛ր, ազգային տեկամտի մասին հոգալը—նրա սեփական հոգսն է, արդյունաբերական ուժերի զարգացման մասին հոգալը—նույնպես նրա սեփական հոգսն է, ժողովրդական տնտեսության զարգացման շահերը նույնպես նրա սեփական շահերն են կազմում։ Այդ պետք է հասկանալ, դրանից պետք չերերել՝ մեր քաղաքականությունը վորոշելիս։ Այդպիսով մենք տեսնում ենք, որ փոխադարձաբար կապված արդյունաբերությունը և գյուղական տնտեսությունը —հիմնական փաստն է, վորից պետք չերերել, իսկ արդյունաբերության և գյուղական տնտեսության փոխադարձ ոգնության անհրաժեշտությունը —հիմնական պայմանն է բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման, առանց վորի մտածելի չէ՝ շարժվել դեպի սոցիալիզմ։

VIII. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՑԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՑԻՆ ՊԱՑԿԱՌԸ ԳՅՈՒՂՈՒՄ.

Չերբ մենք ասում ենք, վոր պրոլետարական դիկտատուրայի պայմաններում կոոպերացիայի զարգացումը, ըստ էության, նշանակում է սոցիալիզմի զարգացում,—այդ դեռ չերբեք չի նշանակում, վոր այդ ամբողջ պրոցեսը միանգամայն հարթ կանցնի, առանց ներքին բաղխումների։ Ընդհակառակը, կարելի չե ասել, զարգացման ընթացքը կոոպերացիայի միջոցով դեպի սոցիալիզմ ուղեկցված կլինի (մանավանդ սկզբում, այսինքն՝ մինչ այն ժամանակ, քանի դեռ պետական արդյունաբերությունը ի վիճակի չի լինի գյուղական ամբողջ տնտեսությունը ելեքտրոֆիկացիայի վրա հիմնելու) քաղաքական պայքարով՝ գյուղացիության զանազան գրուպպաների ու զանազան խավերի միջև, վորոնք, իրենց կողմից, բանվոր դասակարգի նկատմամբ տարբեր հարաբերություններում մեջ կգտնվեն։ Այժմ մեզ մոտ, ինչպես արդեն ասել ենք, գյուղացիության մեջ գոյություն ունեն մի շարք խավեր՝ իրենց սոցիալական դրությամբ իրարից տարբեր։ Գյուղացիության այդ տարբեր խավերը, անկասկած, տարբեր ձևով կկառուցեն կոոպերացիան և կոոպերատիվ շինարարության ընթացքում միմյանց հետ կպայքարեն՝ ազդեցության համար։ Արդեն իսկ այն խնդիրներն ու նպատակները, վոր իրենց առաջադրել են կոոպերատիվ կազմակերպությունները, միքիչ տարբերվում են՝ նայած թե գյուղացիության վո՞ր խավն է ի նկատի առնվում։ Չերբ մենք խոսում ենք, որինակ, աղքատ գյուղացիության, ձի (լծկան) չունեցողների մասին, վորոնք ի վիճակի չեն իրենց հողաբաժինները ոգտագործելու, վորոնք չունեն ինվենտար և արտադրության ամենատարրական միջոցներ, ապա մեզ համար միանգամայն պարզ կլինի, վոր գյու-

ղացիությեան այդ խավերը անխուսափելիորեն պետք է ձգտեն տարբեր տեսակի կոլեկտիվ տնտեսություններ (колхоз—կոլտնտեսություն)՝ այս խոսքի ուղղակի իմաստով։ Իսկ խնդրին և յեթ ընկերությունները հիմնել՝ իրենց պրոդուկտները վաճառելու համար՝ նրանք անկարող են, վորովհետև, իսկապես, համարյա վոչինչ չունեն վաճառելու. նրանք դեռ պետք է անցնեն իրենց զարգացման այնպիսի շերտով, յերբ նրանք վոտքի են կանգնում և արտադրությունը քիչ-քիչ բարձրացնում են, վորպես զի հետո արդեն անցնեն իրենց պրոդուկցիաները շուկայում մեծ չափով վաճառելուն։ Քանի դեռ նրանք չեն հասել իրենց զարգացման այդ աստիճանին, այսինքն՝ քանի դեռ նրանք սաբսափելի կարիք են ապրում, նրանց համար ամենից կարևորը հանդիսանում է ընդհանուր ուժերով ինվենտար, տավար, մեքենաներ գնելը և այդ տավարն ու այդ մեքենաները կոլեկտիվ սկզբունքներով միասին ոգտագործելը։ Դրա համար էլ կոլտնտեսությունները հանդիսանում են չքավորների տնտեսությունների կազմակերպության բնական ձևը։ Սակայն պետք է ասել, վոր այդ տեսակի տնտեսությանը անմիջապես անցնելու համար պահանջվում է պապերից ու հայրերից ժառանգած հին սովորությունների շատ մեծ բեկումն, ուստի և հազիվ թե կարելի յե մտածել, վոր կոլտնտեսությունների շարժումը կընդգրկի չքավոր գյուղացիության ամբողջ լայն մասսաները։ Միջակ գյուղացիների տնտեսությունները, բարձրանալով և ավելի ու ավելի ամուր հիմքերի վրա դրվելով, իհարկե, կկազմակերպվեն գյուղատնտեսական կոոպերացիաների մեջ այն բոլոր յերեք հիմնական ուղղություններով, վորոնց մասին մենք վերը գրեցինք,—և՛ գնումներ անելու գծով, և՛ վաճառելու գծով, և՛ վարկի գծով։ Գյուղացիության հիմնական մասսան, հիմնական կորիզը հանդիսանում է, առաջին հերթին, միջակ-գյուղա-

ցին։ Այդ պատճառով էլ կոոպերացիայի հիմնական ձևը կազմում է նուիրական գյուղատնտեսական համալսատասխան տեսակի կոոպերացիան։ Հարուստ գյուղացիները նուիրական կձգտեն ստեղծել իրենց կոոպերատիվ կազմակերպությունները, դրանց թվում նաև վարկային,, և կձգտեն այդ կազմակերպությունները դարձնել իրենց համար հենակետեր։ Քանի վոր դասակարգային պայքարը գյուղում դեռևս բավական ժամանակամիջոցից հետո չե սկսելու մեռնել, քանի վոր մոտիկ ապագայում մենք ականատես կլինենք գյուղացիության շերտավորման պրոցեսին, այսինքն, նրա վերին հարուստ մասի առանձնացմանը՝ մի կողմից, և գյուղատնտեսական պրոլետարների ու կիսապրոլետարների առանձնացմանը՝ մյուս կողմից, ապա միանգամայն ակներև է, վոր դասակարգային պայքար տեղի կունենա և՛ ընդհանուր - կոոպերատիվ կազմակերպությունների զանգվածների միջև, և այդ նույն կոոպերատիվների ներսում. այդպիսի հարցերից են—վարչության, պաշտոնատար անձանց ընտրելու, պայմանների և դրանց չափին վերաբերող հարցը, կոոպերատիվ կազմակերպությունների կանոնադրության հարցը, այն հարցը, թե ինչ քաղաքականություն պետք է տանի վարչությունը և այլն և այլն. այս բոլոր առանձին հարցերի շուրջը կծավալվեն ամբողջ («խաղաղ», ի հարկե) ճակատամարտներ՝ գյուղացիության զանազան խավերի միջև։

Այդպիսով, պատկերը բավական խայտաբղետ կներկայանա։ Կոոպերատիվ կազմակերպությունների ընդհանուր ցանցի մեջ մենք կունենանք նաև կուլակային բջիջներ, յերբեմն զուտ և՛ զուտ կուլակային, և՛ չքավորների բջիջներ, և՛ միջակ գյուղացիների, և՛ խառն տիպի բջիջներ։ Սակայն այդ պատկերում համենայն դեպս վորոշ հիմնական գոն կլինի։ Ջե՛ վոր նկատի պիտի առ-

նել, որ չնայած գյուղացիության շերտավորման պրոցեսին, բայց և այնպես կպահպանվի նրա հիմնական կորիզը, այն է՝ միջակ գյուղացին, այս—ինչպես Լենինն է արտահայտվել—«մեր հողագործության կենտրոնական դեմքը»։ Յեթե նույն իսկ կապիտալիզմի պայմաններում, կապիտալիստական քաղաքում, բուրժուազիայի դիկտատուրայի ժամանակ միջակ գյուղացիության խավը բայց և այնպես պահպանվում է համեմատաբար բավական հաստատ, ապա բանվորական դիկտատուրայի պայմաններում գյուղացիությունը յերբեք ավելի արագ չի կազմալուծվի, այլ, ընդհակառակը, ավելի դանդաղ։ Մյուս կողմից, նայած թե պետական իշխանությունը ի՞նչ չափով ավելի և ավելի ի վիճակի կլինի նյութական ոգնության ձեռք մեկնել չքավոր գյուղացուն ու միջակին, մենք կունենանք հավասարեցման մի նոր շրջան, բայց արդեն միանգամայն ուրիշ հիմունքներով, քան առաջ եր։ Առաջ մենք այս կամ այն ձևով վերցնում էինք հարուստներից, կուլակներից, և վերցրածը տալիս էինք չքավորներին, այսինքն՝ հարուստներին դարձնում էինք ավելի չքավոր, ու այդպիսով հասնում էինք (ինչպես այդ յեղավ, որինակ, «չքավոր գյուղացիների կոմիտեների» ժամանակ) վորոշ հավասարեցման։ Իսկ այժմ այլ բան կլինի, այն է՝ միջակ-գյուղացին ու չքավորը հետզհետե ավելի ու ավելի արագ դուրս կգան աղքատ վիճակից՝ իրենց կոոպերատիվ կազմակերպությունների ոգնությամբ, վորոնք բանվոր դասակարգի պետական իշխանության կողմից ոգտվում են առանձին հովանավորությամբ, առանձին արտոնություններով, առանձին՝ նյութական և այլ աջակցությամբ։

Ժողովրդական վողջ տնտեսությունը, ընդհանուր առմամբ, քանի շատ առաջ կշարժվի, և քանի արա՛գ կաճի մեր պետական արդյունաբերությունը, այնքան ավելի

ուժեղ կլինի աջակցությունը գյուղացիության հենց այդ խավերին, վորոնք իրենց կյանքի մակարդակով կհասնեն գյուղի վերին, հարուստ մասին, բայց վորոնք միաժամանակ կզրկանան վոչ թե շահագործելով, վոչ թե ի հաշիվ ուրիշի աշխատանքի, այլ իրենց տնտեսավարության միջոցների բարելավման և կոոպերատիվ կազմակերպության միջոցով գյուղացիության մի շարք ծխերի չանքերը միացնելու շնորհիվ, վորոնք հետևապես ավելի ու ավելի կանցնեն տնտեսավարության կոլեկտիվ ձևին։ Այդպիսով, մեր գյուղացիական կոոպերատիվ կազմակերպությունների հիմնական ցանցը կազմված կլինի վոչ թե կուլակային կոոպերատիվ բջիջներից, այլ «աշխատավորական» տիպի, մեր ընդհանուր-պետական որգանների սիստեմում զորացող և այդ ճանապարհով սոցիալիստական տնտեսության միանական ղեկտայի ողակները դարձող բջիջներից։ Մյուս կողմից, կուլակային կոոպերատիվ բներն ևս նույնկերպ, բանկերի և այլն միջոցով, կզնրանան այդ նույն սիստեմում. բայց նրանք կլինեն վորոշ չափով խորթ մարմին, նման, որինակ, կոնցեսիային ձեռնարկություններին։ Ի՞նչ կլինի այդ տեսակի կուլակային կոոպերացիաների վիճակը հետագայում։ Յենթադրենք, որինակ, վոր մենք ունենք վարկային ընկերություն, վորի գլուխը կանգնած են տեղում մեծ հեղինակություն վայելող կուլակներ։ Այդ կուլակային կոոպերատիվը, յեթե նա ծաղկել է ցանկանում, անխուսափելիորեն պետք է, նույնպես ինչպես և մյուս բոլոր կոոպերատիվները, կապված լինի պետական եկոնոմիական որգանների հետ. նա, որինակ, իր ազատ կանխիկը կմտցնի մեր բանկերը նրա՛ համար, վորպեսզի վորոշ տոկոս ստանա. նույնիսկ այն դեպքում, յեթե այդ տեսակ կոոպերատիվները ստեղծեին իրենց սեփական բանկային կազմակերպությունները, միևնույն է, նրանք

անխուսափելիորեն պետք է կապված լինեին պրոլետարական պետության վարկային ուժեղ հիմնարկությունների հետ, որը իր տրամադրության տակ ունի յերկրի վարկային հիմնական միջոցները։ Կուլակը և կուլակային կազմակերպությունները, միևնույն է, տեղ չունեն դիմելու, քանի որ մեր յերկրում զարգացման ընդհանուր շրջանակները առաջուց գծված են պրոլետարական դիկտատուրայի հասարակակարգի կողմից և այդ դիկտատուրայի տնտեսական կազմակերպությունների արդեն բավական չափով զորացած կարողությամբ։ Յեթե կուլակը կամա-ակամա հանդիսանում է մեր բանկերում վող դնող, յեթե նա կամա-ակամա սկսում է մի շարք հարաբերություններով կապված լինել մեր տնտեսական որգաններից հետ, ապա նա անխուսափելիորեն կհեղմվի վորոշ շրջանակներում։ Իհարկե կարելի կլիներ՝ ընդհանրապես ասած՝ յերևակայել իրերի այնպիսի դրություն, յերբ կուլակային տնտեսությունը աճեր սարսափելի ուժգնությամբ, յերբ այդ տնտեսությունների մեջ կուտակումը տեղի ունենար շատ ավելի արագ, քան ամբողջ պետական արդյունաբերության մեջ, և յերբ կուլակը, այդպիսով, ձեռացած ամբողջ եկոնոմիկայից ավելի արագ և մանավոր առևտրական կապիտալի հետ միանալով խորտակեր պրոլետարական դիկտատուրայի—և՛ եկոնոմիական, և՛ քաղաքական—հասարակակարգը։ Բայց այդ յենթադրությունը միանգամայն անհավանական է։ Բանզի յենթադրել, որ կուլակային տնտեսությունները կաճեն ավելի արագ, քան ամբողջ պետական արդյունաբերությունը,—այդ կնշանակեր յենթադրել մի այնպիսի բան, որ ուղղակի հակառակ լիներ իրականությանը։ Ընդհանուր առմամբ, մեր ժողովրդական տնտեսության զարգացման ժամանակ ամենից արագ կզարգանա արդեն վոտքի կանգնող խոշոր արդյու-

նաբերությունը, որին ամբողջովին գտնվում է պրոլետարական իշխանության ձեռքը։ Այդ զարգացումը կվորոշի ամեն ինչ և բավական յերաշխիք կծառայի այն բանի համար, որ կուլակը կամ հարուստ գյուղացին, որը գյուղատնտեսական մի քանի բանվորներ է վարձում, ստիպված կլինի յենթարկվել մեր ընդհանուր հասարակակարգին։

Պրոլետարական պետությունը, որը շահագրգռված է տնտեսության «վոչ-կապիտալիստական», այսինքն՝ սոցիալիստական ձևերի զարգացման մեջ, ինքնին հասկանալի յե, չի կարող միակերպ վերաբերվել դեպի աշխատանքային կոոպերատիվները և դեպի կուլակային տիպի կոոպերատիվները։ Նա, ինչպես մենք արդեն վերև հիշեցինք, ամեն կերպ կաջակցի չքավոր և միջակ գյուղացիների կոոպերատիվներին։ Դրանում, ի միջի այլոց, կկայանա պրոլետարիատի դասակարգային պայքարը, դասակարգային ոգնությունը (այդ խավերի պայքարի մեջ) իրեն ավելի մոտիկ խավերին՝ ընդդեմ կուլակների կամ գյուղատնտեսական բուրժուազիայի։

IX. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Մեր յերկրում այժմ կան յերեք դասակարգեր, վորոնցից յերկու դասակարգերը—բանվորները և գյուղացիները — կազմում են մեր հասարակության և մեր յերկրի հիմնական դասակարգերը, իսկ յերրորդ դասակարգը—բուրժուազիան (կուլակները, նեպմանները և այլն)—գոյություն ունի լոկ այն չափով, ինչ չափով նրան «թույլ է տրված» մինչև վորոշ սահման և վորոշ պայմաններով «աշխատակցելու» բանվոր դասակարգի և գյուղացիության հետ։ Մենք վերը տեսանք, որ այդ դրությունից, վորի մեջ այժմ գտնվում է բանվոր դասակարգը՝ վորպես իշխող դասակարգ, բղխում են բանվոր դասակարգի պե-

տության քաղաքականության համար հիմնական հետևությունների մի ամբողջ շարք։ Հիմնական և գլխավոր հետևությունը, որի մասին մենք արդեն խոսեցինք, կայանում է հետևյալում. մինչդեռ կապիտալիստական կարգերում բանվոր դասակարգի խնդիրը կազմում է հասարակության կործանումը, պրոլետարական դիկտատուրայի պայմաններում բանվոր դասակարգի խնդիրը կազմում է վոչ թե պրոլետարական դիկտատուրայի կարգերի և նոր ստեղծվող հասարակության կործանումը, այլ ընդհակառակը, սրա ամեն տեսակի պաշտպանությունը, սրա ամրապնդումը, սրան ղեկավարելը։ Դրանից, իր հերթին, անխուսափելիորեն բղխում են և ուրիշ հետևություններ, այսինքն այնպիսի հետևություններ, որոնք վերաբերում են դասակարգային պայքարի (մեր յերկրում) հենց յեղանակին։ Դասակարգային պայքարը, ինչպես մենք շատ լավ գիտենք, չի դադարում և չի մեռնի միանգամից, այլ կշարունակվի շատ և շատ յերկար ժամանակ, քանի դեռ ընդմիշտ չի անհետանա ընդհանրապես բաժանումն ըստ դասակարգերի։ Բայց մենք արդեն այժմ ենք տեսնում, թե ինչպես անխուսափելիորեն փոխվում են դասակարգային պայքարի գլխավոր ճանապարհի հարցը և այդ պայքարի յեղանակների հարցը։ Կապիտալիստական հասարակության մեջ, ուր պրոլետարիատի գործը կայանում է նրանում, որպեսզի այդ հասարակությունը կործանի, մշտական խնդիրը հանդիսանում է դասակարգային պայքարը սրելը և բորբոքելը մինչ այն ժամանակ, քանի այդ դասակարգային պայքարը աշխատավոր մասսաների կողմից չի ընդունի իր ամենակատաղի յեղանակը, այսինքն քաղաքացիական պատերազմի և զինված պայքարի յեղանակը՝ ընդդեմ կապիտալիստական տիրապետող

ուժի։ Այդ պայքարում հին հասարակությունը, վերևից մինչև ներքև, պայթում է, և դասակարգերի դրությունը վերջ ի վերջո այլ է դառնում,—այսպես կոչված «ստորինները» ճնշված դասակարգերը կանգնում են վերևում, իսկ շահագործողները դառնում են մի դասակարգ, որի ընդդիմադրությունը ճնշվում է և որը, իր կործանումից հետո, ստիպված է լինում հալածակվել նոր իշխանության՝ ներքևից յեկող դասակարգերի իշխանության։ Ձեվ այդպես, կապիտալիստական հասարակակարգում բանվոր դասակարգի խնդիրն է—դասակարգային պայքարը սրելու դիծ տանել, այդ պայքարը դարձնել քաղաքացիական պատերազմ։ Բանվոր դասակարգի կուսակցությունը կապիտալիստական հասարակակարգի սահմաններում հանդիսանում է քաղաքացիական պատերազմի կուսակցություն։ Դրությունը բոլովովին շուռ է գալիս, յերբ բանվոր դասակարգը իշխանությունն իր ձեռքն է վերցնում՝ հենվելով գյուղացիության լայն խավերի վրա։ Ինչ չափով վոր բուրժուական դիկտատուրան ջարդված է, և ինչ չափով վոր նրա տեղն արդեն անցել է պրոլետարիատի դիկտատուրան, այն չափով էլ բանվոր դասակարգի խնդիրը հանդիսանում է այդ դիկտատուրայի ամրապնդումը և դրա պաշտպանությունը՝ դրա դեմ կատարվող ամեն տեսակի չարամիտ փորձերից։ Բանվոր դասակարգի կուսակցությունը այդպիսի պայմաններում դառնում է քաղաքացիական խաղաղության կուսակցություն, այսինքն պահանջում է, որ նախկին տիրապետող դասակարգերը, խավերն ու գրուպպաները յենթարկվեն բանվոր դասակարգին. նա նրանցից պահանջում է քաղաքացիական խաղաղություն, և բանվոր դասակարգն այժմ պատժում է ու հետապնդում բոլոր նրանց, որոնք քաղաքացիական այդ խաղաղությունը խանգարում են, բոլոր դավադիրներին, սաբոտաժնիկներին,—մի խոսքով

այն բոլորին, ովքեր խանդարում են նոր հասարակության խաղաղ շինարարությանը։

Իր սեփական պետության մեջ բանվոր դասակարգը, հենց վոր յետ մղեց թշնամիների բոլոր հարձակումները և շինարարական խաղաղ աշխատանքը ապահովեց, յերկրի ներսում այլևս չի՛ քարոզում քաղաքացիական պատերազմ, այլ քարոզում է ներքին խաղաղություն,— քարոզում է, վոր բոլոր խավերը, դրանց թվում և նոր իշխանության նախկին հակառակորդները լիովին ճանաչեն այդ նոր իշխանությունը, նրա որենքները, նրա հիմնարկությունները՝ այդ որենքներին և այդ հիմնարկություններին հպատակվելու կարգով։ Դրա համապատասխան և փոփոխվում են դասակարգային պայքարի յեղանակները։ Այդ բացատրենք մի շարք որինակներով։ Վերցնենք, ամենից առաջ, դեպի բուրժուազիան ունեցած վերաբերմունքը։ Կապիտալիստական կարգերում մենք նրանց նկատմամբ քարոզում էինք՝ պայքարը ծավալել, մինչև իսկ կիրառելով զինված ուժեր։ Ի հարկե, յեթե բուրժուազիան փորձեր այժմ ևս զենքը ձեռին մեր դեմ դուրս գալու, ինչպես նա այդ արեց 1917, 1918, 1919 և այլ թվերին, ապա մենք իսկույն գործ կդնեյինք մեր զինված ուժը և այդ թշնամու հետ արժանի հաշիվը կտեսնեյինք։ Բայց այժմ մեզ մոտ միանգամայն այլ դրություն է։ Խորհրդային իշխանության ուժն ու հաստատուն լինելը այնքան ակներև է, վոր մեր հասարակության բուրժուական խավերը (նեպմանները) միանգամայն անհուսալի բան են համարում նոր իշխանության դեմ քաղաքական ակտիվ և սուր պայքար մղելու վորևե փորձ։ Այդ խավերը կամա-ակամա ստիպված են հաշտվել գոյություն ունեցող կարգերի հետ։ Այդ բուրժուազիային վորոշ սահմաններում թույլ է տրված անտեսական գործնեություն։ Մենք այժմ յերբեք չենք արգելում մասնավոր առևտուրը, մենք թույլ ենք

տալիս մի շարք մասնավոր ձեռնարկություններ, մենք մասնավոր խանութներն այլևս յերբեք չենք կնքում, հետևապես մենք այդ խավերին գոյության վորոշ հնարավորություն ենք տալիս։ Արդյո՞ք այդ նշանակում է, վոր քաղաքացիական պայքարը դադարում է։ Վո՛չ, վո՛չ յերբեք։ Բայց այդ պայքարը բոլորովին փոխել է իր յեղանակը։ Բանվոր դասակարգը այդ պայքարը շարունակո՛ւմ է տանել.—մեր որենսդրությունը, վոր յերաշխավորում է բանվոր դասակարգի գործը՝ արհեստակցական միություններին վորոշ իրավունքներ ապահովելով, մասնավոր ձեռնարկողին ստիպելով ապահովագրական վճարներ տալ, ձեռնարկողների այդ շրջաններին իշխանության քաղաքական որգաններում բնորոշական իրավունքից զրկելով և այլն—դա՝ դասակարգային պայքարի նոր յեղանակ է։ Հարկադրության սիստեմը, վորով համապատասխան ձևով հարկ է նշանակվում կապիտալիստական ձեռնարկությունների յեկամուտների ու շահերի վրա, բուրժուազիային այդպիսի հարկատվության յենթարկելը, ինչպիսին վոչ մի յերկրում գոյություն չունի, ա՛յդ նույնպես դասակարգային պայքարի նոր յեղանակ է։ Մրցակցությունը պետական արդյունաբերության, պետական առևտրի, կոոպերացիայի—ա՛յդ ևս դասակարգային պայքարի նոր յեղանակ է։ Յերբ մեր պետությունը կոոպերատիվ ձեռնարկություններին հատուկ արտոնություններ ու առավելություններ է տալիս, յերբ այդ պետությունը կոոպերատիվ կազմակերպություններին ֆինանսական ոգնություն է ցույց տալիս, յերբ նա որենսդրական կարգով նրանց համար ավելի իրավունքներ է ապահովում,—այդ՝ դասակարգային պայքարի նոր յեղանակ է։ Յեթե շուկայում մրցակցության պրոցեսում պետական արդյունաբերությունը, առևտուրը, կոոպերացիան հետևողականորեն ճնշո՛ւմ են մասնավոր ձեռնարկողին,—այդ՝ հաղթա-

նակ է դասակարգային պայքարում, բայց հաղթանակ վճռ
թե ուժերի մեքենայական բաղխումների մեջ, վոչ թե զին-
ված ընդհարումների ոգնությամբ ձեռք բերված, այլ մի-
անգամայն նոր ձևով, վոր առաջ չկար, վորը կապիտա-
լիստական ռեժիմի որոք միանգամայն անիրագործելի եր
բանվոր դասակարգի և գյուղացիության համար։

Դասակարգային պայքարի ձևը փոխ-
վում է նմանապես և գյուղում։ Ճիշտ է,
տեղ տեղ դասակարգային այդ պայքարը գյուղում պայ-
թում է առաջվա իր արտահայտություններով, ըստ վո-
րում այդ սրությունը սովորաբար առաջացնում են կու-
լակային տարրերը։ Յերբ, որինակ, կուլակները կամ ուրի-
շի հաշվին ապրողներն ու Խորհրդային իշխանության որ-
գանների դեմ բուն դրած մարդիկ կրակում են գյուղթղթա-
կիցների վրա, այդ—դասակարգային պայքարի արտահայ-
տություն է՝ իր ամենասուր ձևով։ Սակայն այդպիսի
դեպքերը տեղի չեն ունենում այնտեղ, ուր Խորհրդային
տեղական ապարատը թույլ է հանդիսանում։ Հետզհետե,
այդ ապարատի բարելավումով, Խորհրդային իշխանության
բոլոր ստորին բջիջների ուժեղացումով, գյուղական տե-
ղական կուսակցական և կոմյերիտմիության կազմակեր-
պություննների բարելավումով և ուժեղացումով, այդպիսի
դեպքերը, միանգամայն հասկանալի չե, հետզհետե ավելի
հազվագյուտ կդառնան և վերջիվերջո անհետ կկորչեն։
Դեռ մի քանի տարի առաջ գյուղի ներսում քաղաքացիա-
կան կռվի գլխավոր ձևը—հարուստ գյուղացիների վրա
ադմինիստրատիվ անմիջական ճնշում գործ դնելն եր.—
սկզբում շարունակ կոնֆիսկացիայի և ռեկվիզիցիայի եր
յենթարկվում ավելի ունևոր գյուղացիների գույքը և այդ
հատկացվում չքավորների ոգտին («չքավորների կոմիտե-
ների» ժամանակ), իսկ այնուհետև գործ եյին դրվում շա-
րունակական և համայական ճնշումներ, վորոնք չափազանց

դժվարացնում եյին, իսկ յերբեմն էլ միանգամայն անհնա-
րին դարձնում տնտեսական առաջադիմությունը և գյուղի
հարուստ խավերի՝ առաջին հերթին գյուղական բուրժու-
ազիայի համապատասխան գործնեությունը։ Այն ժա-
մանակ, յերբ քաղաքում, տնտեսական նոր քաղաքականու-
թյան հենց սկզբից, մենք թույլ ավինք մասնավոր առև-
տրականների և ձեռնարկողների գործնեությունը, գյու-
ղում գյուղական բուրժուազիայի առաջ դրվում եյին
այնպիսի արգելքներ, վորոնք այդ գործնեությունը
խիստ սահմանափակում եյին կամ միանգամայն ան-
հնարին դարձնում։ Այժմ (1925 թվի ամառը) մենք հան-
դում ենք նրան, վոր պետք է պրակտիկայում փոխել այդ
տեսակ սիստեմը և գյուղի բուրժուական տարրերին շարժ-
վելու մեծ ազատություն ենք տալիս։ Բայց այդ
յերբեք չի նշանակում, վոր մենք դադա-
րում ենք գյուղական բուրժուազիայի
դեմ դասակարգային պայքար մղել։ Այդ
յերբեք չի նշանակում, վոր մենք հրաժարվում ենք պաշտ-
պանել գյուղի միջակներին ու չքավորներին՝ շահագործող
խավերի հանդեպ։ Մենք միայն փոխում ենք դասակար-
գային պայքարի ձևը՝ գյուղական մանր, փոքրիկ կապի-
տալիստների հանդեպ. Մենք անցնում ենք քաղաքացիա-
կան այդ պայքարի նոր, ներկա պայմաններում ավելի
նպատակահարմար ձևին։

Քաղաքում մենք յերբեք չենք կնքում մասնավոր
առևտրականների խանութները։ Մենք թույլ ենք տալիս,
վոր նա իր գործը կատարի։ Դրա հետևանքով ավելի յե
պլանաչափորեն ապրանքաշրջանառությունը ամբողջ յեր-
կրում։ Իսկ այդ առևտրականը հանդիսանում է նաև մեր
պետական արդյունաբերության գնորդը, նաև մեր պետա-
կան մեծաքանակ առևտրի գնորդը. բացի այդ, նա (քա-
նի վոր մեր սեփական պետական և կոոպերատիվային

ապրանքաշրջանառության ցանցը շատ թույլ է հանդիսանում) վաճառում է մեր ապրանքը մեր յերկրի զանազան անկյուններում։ Ըստ վորում, ի հարկե, նա օգտվում է և իր ձեռքն է գցում առևտրից ստացած շահը կամ այդ շահի մի մասը։ Յեվ սակայն նա, անկախ իր կամքից, ապրանքաշրջանառության ընդհանուր աշխուժության շնորհիվ, նպաստում է և՛ մեր պետական արդյունաբերության, և՛ մեր պետական առևտրի զարգացմանը, յերկրի ընդհանուր կապիտալի ավելի արագ շրջանառությանը, դրանց թվում՝ մեր պետական արդյունաբերության և մեր պետական առևտրի կապիտալի շրջանառությանը։ Այդ պատճառով էլ ավելի արագ է պտտվում արտադրության մեքենան, ավելի արագ է ընթանում կուտակման պրոցեսը, ուստի և ավելի շուտ է ավելանում մեր պետական արդյունաբերության՝ սոցիալիստական հասարակության այդ հիմնական բազայի, այդ գլխավոր հենարանի ուժեղությունը։ Մյուս կողմից՝ բուրժուական խավերին հարկերի տակ դնելու միջոցով նույնպես ստանում ենք լրացուցիչ միջոցներ, վոր մտնում են մեր պետական դրամատունը։ Նյութական արժեքների ահա այդ ավելացումը, վոր ստացվում է, մի կողմից՝ մեր սեփական ձեռնարկությունների զարգացումն արագացնելուց (ընդհանուր ապրանքաշրջանառության աշխուժության հետ կապված), իսկ մյուս կողմից՝ տուրքերի ստացվելուց, մենք այդ հատկացնում ենք ոգնելու զանազան տեսակի նախաձեռնություններին, վորոնք ծառայում են աշխատավոր դասակարգերի գործին, սոցիալիզմի գործին։ Այդ տեսակի քաղաքականությունը—նույնպես դասակարգային քաղաքականություն է մեր կողմից։ Դասակարգային այդ քաղաքականությունը նպատակ ունի աշխատավոր մասսաներին պաշտպանելու շահագործողների ճնշումներից։ Բայց այդ քաղաքակա-

նության ձևը, դասակարգային այդ պայքարի ձևը, ինչպես տեսնում ենք, բոլորովին այլ է, քան այն դեպքում, յերբ մենք հենց միանգամից կնքեցինք մասնավոր առևտրական խանութները։ Շնորհիվ դասակարգային պայքարի այդ նոր ձևին, մենք վոչ միայն տանուլ չենք տալիս, այլ ընդհակառակը, մենք մեծ չափով շահում ենք, վորովհետև մենք շատ ավելի յենք ուժեղանում, ըստ վորում ուժեղանում ենք բարեկեցության ընդհանուր զարգացման հողի վրա։

Ճիշտ է, մենք միանգամից չէ, վոր կարողացանք տանել այդ տեսակի քաղաքականություն։ Յերբ մենք մեր պրամադրության տակ ունեցինք ֆաբրիկաներ և գործարաններ, վորոնք չեյին աշխատում, յերբ մենք դուրս եյինք թողնում ահագին քանակությամբ վող, վոր իրենից ներկայացնում եր շուկայում վոչ մի արժեք չունեցող թղթի կտորներ, յերբ մենք բանկերի փոխարեն միայն այդ բանկերի շենքերն ունեյինք, յերբ յերկաթուղինները չեյին գործում, յերբ խոշոր ձեռնարկությունների աշխատանքի համար չկային ամենաանհրաժեշտ պայմանները (չկային հում նյութ, վառելիք, չկար նույն իսկ հաց՝ քաղցած բանվորների համար), ահա այդ ժամանակ մասնավոր տնտեսական գործնեության ազատությունը տալը և մասնավոր դուքանչիների ու մասնավոր մանր կապիտալիստների համար առևտրի լրիվ ազատություն տալը վերին աստիճանի վտանգավոր կլիներ։ Այն ժամանակ մենք վոչինչ չեյինք ունենա նրանց հետ մրցելու։ Մենք մեր ձեռքում այն ժամանակ չեյինք ունենա պայքարի բավականաչափ ուժեղ և կարող գործիքներ։ Փլուզման պայմաններում մանր փոքրիկ կապիտալիստը շատ ավելի հեշտությամբ կկարողանար շուռ գալ իր փոքրիկ կապիտալով. նա աչքի կընկներ շատ ավելի խորամանկությամբ և ճարպիկությամբ, քան մեր «կպչունի» հիմնար-

կությունները, որոնց ներսում դասարկություն էր տիրում։ Յեվ յերթե մենք այն ժամանակ անտեսական լրիվ ազատություն տայինք այդ բոլոր տարրերին, առանց մեզ ապահովելու, այսինքն, չունենալով անտեսական պայքարի մեջ ուժեղ դիրքեր, այն ժամանակ կլիներ մեծագույն և չափազանց ահեղ վտանգ—այդ հազարավոր մանր փոքրիկ կապիտալիստները մեզ կթակեյին և կջարդեյին անտեսական մրցման պայքարում։ Ուստի և մենք ստիպված եյինք դործել որոշ զգուշությամբ՝ մեզ համար ապահովելով ամուր դիրքեր՝ եկոնոմիական անտեսական ճակատամարտի դաշտում, այսինքն՝ դասակարդային նոր ձևի կռվի և դասակարգային նոր ձևի պայքարի դաշտում։ Մեր ձեռքում այդպիսի դիրք է հանդիսանում խոշոր արդյունաբերությունը, տրանսպորտը, բանկային սիստեմը (վարկ), ինչպես նաև պետական բյուջեն և պետական ֆինանսները։

Հետևեաբ, մեր զարգացումով և մեր այդ՝ ինչպես կոչում են՝ «եկոնոմիական հրամանատարական բարձունքների» ուժեղացումով մենք կարող եյինք ավելի ու ավելի վճռականորեն բաց անել մեր դրած փականքը մանավոր—մանր ու միջակ—ձեռնարկողի վերաբերմամբ։ Մենք այժմ, որինակ, արդեն բոլորովին կարիք չունենք վախենալու առևտրի այդ ազատությունից, որովհետև առևտրի ազատության հողի վրա, առևտրի այդ ազատության հիմքի վրա, ինքներս առևտրի այդ ազատությունը ոգտագործելով, մենք արդեն ի վիճակի յենք, ամրացնելով մեր հրամանատարական բարձունքները, տնտեսական հաղթական պայքար տանելու։

Այժմ մենք կարող ենք այդ տեսակի քաղաքականությունը փոխադրել նաև գյուղ, ճգնելով հասնել նրան, որպեսզի մեր գյուղական աշխատավորները գյուղի ավելի ունևոր խավերի նկատմամբ գործ չունենան ադմինիստրա-

տիվ հասարակ «փականք» և «ճնշում»։ Յեվ կրկին հարցնում ենք, արդյո՞ք այդ նշանակում է, որ մենք ցանկանում ենք այստեղ հրաժարվել գյուղատնտեսական բուրժուազիայի դեմ դասակարգային պայքար մղելուց։ Վո՛չ յերբեք։ Ճիշտ այնպես, ինչպես որ մենք չենք հրաժարվում քաղաքային բուրժուազիայի (նեպմանների) դեմ դասակարգային պայքար մղելուց՝ յերբ մենք նրան թույլ ենք տալիս իր «գործով» զբաղվելու, այնպես և համապատասխան քաղաքականությունը գյուղում—յերբեք չի նշանակում հրաժարվել պայքարից։ Մենք միայն նրա ձևն ենք փոխում։ Գյուղական առևտրականների դուքանների դիմաց մենք պետք է դնենք վոչ թե ուղղակի հարկադրանքի ու բռնության որգաններ, այլ մեր լավ կոոպերատիվային դուքանները։ Գյուղական վաշխառուի դիմաց, որը անասուած տոկոսներով է փող պարտք տալիս, կամ որը ճորտական պայմաններով է իր ձին (լծկանը) վարձու տալիս ձի չունեցող գյուղացուն, մենք պետք է առաջ քաշենք առաջին հերթին մեր վարկային ընկերությունների բատարեյան, կոոպերատիվային եժան վարկի լավ կազմակերպությունը և ոգնության գործը՝ պետական իշխանության կողմից։ Մեր ապրանքները պետք է լինեն ավելի լավ և եժան, քան մասնավոր առևտրականի ապրանքները, մեր վարկային փոխատվությունները պետք է լինեն ավելի շատ և շատ ավելի եժան, քան վաշխառուի տված փոխատվությունները, կոոպերացիան պետք է ավելի լավ առևտուր անի և ավելի լավ հարմարեցված լինի գյուղական պահանջին, քան մասնավոր առևտուրը։ Ահա այդ գործիքները մենք պետք է դնենք գյուղի շահագործող տարրերի դեմ մղվող մեր պայքարի առաջավոր դիրքերում։

Սակայն, կարող ենք մեզ հարց տալ—արդյո՞ք ուղիղ կլինի գյուղ փոխադրել այդպիսի քաղաքականությունը,

վորն ոգտակար է քաղաքի համար։ Բայց ովյալ հարցի համար մի շատ կարևոր և չափազանց էական տարբերություն կա քաղաքում մղվող տնտեսական պայքարի պայմանների և գյուղում մղվող այդ տնտեսական պայքարի պայմանների միջև։ Քաղաքում մենք արդեն ունենք քիչ թե շատ լավ կազմակերպված և լավ գործող «հրամանատարական բարձունքները»։ այդ—մեր ծանր արտիլերիան է՝ քաղաքային նեպմանների դեմ պայքարելու համար։ Բայց ուր են այդպիսի «հրամանատարական բարձունքները» գյուղում։ Մենք ի՞նչ կարող ենք դուրս բերել գյուղում՝ նրա ունևոր մասի դեմ։ Ուր են այն եկոնոմիական բռունցքները, վորոնցով մենք կարող էյինք տնտեսական պայքարի հողի վրա խփել գյուղական կուլակի մեջքին։ Արդյոք այստեղ իրերի այնպիսի դրություն չի՞ ստեղծվի, վոր կուլակային տարրերը տնտեսապես չափազանց ուժեղ դուրս գան, քան գյուղացիության ճնշած մասսան, և դրանով արդյո՞ք նրանք մեր միջոցով չեյին մարակի բոլորին և այդպիսով ընդհանուր առմամբ չե՞յին դառնա ամբողջ գյուղական կյանքի ղեկավարները և տերերը։

Այդ՝ ժամանակային որինական հարցին մենք պետք է տանք այսպիսի պատասխան.—գյուղական բուրժուազիայի նկատմամբ հրամանատարական բարձունք և հանդիսանում պրոլետարական քաղաքը։ Չի կարելի այնպես պատկերացնել, վորպես թե գյուղը զարգանում է միանգամայն ինքնուրույն կերպով և քաղաքից անկախ։ Մենք արդեն ասացինք, վոր յերկրում արտադրողական ուժերի աճումով քաղաքի ազդեցությունը ավելի ու ավելի վճռական կդառնա մեր գյուղական տնտեսության զարգացման նկատմամբ։ Իսկ այդ քաղաքի միջուկը—նրա պրոլետարական արդյունաբերությունն է, նրա բանկային սիստեմը, նրա որենադրությունը և այլն և այլն, այդ

բոլորը դարձած է «յերեսը դեպի գյուղ», այսինքն՝ այդ բոլորը ծառայում է գյուղի միջակ և չքավոր տարրերի համար վորպես նեցուկ՝ գյուղի կուլակային խավերի դեմ։

Միջանկյալ ողակը պրոլետարական քաղաքի և աշխատավորական գյուղի միջև հանդիսանում է կոոպերացիան, վորը և կանգնած է այդ քաղաքի և գյուղի միացման տեղի վրա, իր մեջ մարմնացնելով առաջին հերթին եկոնոմիական այն զոդումը բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, վորն (զոդումը) ամրացնելը հանդիսանում է բանվոր դասակարգի և մեր կուսակցության հիմնական խնդիրը։ Այդ կոոպերացիայի զարգացումը, վորի խորքերում պրոլետարական պետությունը պաշտպանում է և դրամական միջոցներ հայթհայթում չքավորներին ու միջակներին՝ գյուղատնտեսական մանր, փոքրիկ կապիտալիստների հանդեպ, ցույց է տալիս, ինչպես մենք տեսանք, ապագա սոցիալիստական հասարակության բջիջների անդադար և սիստեմատիկ զարգացումը։ Պետական արդյունաբերությունը և պետական առևտուրը, քայլ առ քայլ, միանալով գյուղական կոոպերացիային, վորն իր հերթին առևտրից անցնում է արտադրության, կճնշի մասնավոր կապիտալին (արդյունաբերական, առևտրական և վաշխառուական)։ Ընդհանուր պետական-կոոպերատիվային կազմակերպության մեջ կառնվեն և կլուծվեն գյուղացիական տնտեսությունները ճիշտ այնպես, ինչպես վոր կոոպերատիվային կազմակերպությունների զանազան ձևերի (առաջին հերթին արհեստային կոոպերացիայի) միջոցով դրա մեջ կառնվեն և կլուծվեն մանր արհեստավորները և անայնագործները։ Հետզհետե, այն չափով, ինչ չափով վոր մասնավոր ամեն տիպի ձեռնարկողներին ու նրանց մասնավոր տնտեսությունները կճնշենք, և այն չափով, ինչ չափով վոր առաջ կգնա պետական կոոպերատիվային տըն-

տեսության կազմակերպությունն ու կարգավորումը,— մենք ավելի ու ավելի կմերձենանք սոցիալիզմին, այսինքն՝ այնպիսի պլանաչափ տնտեսության, ուր բոլորը պատկանում է բոլոր աշխատավորներին, և ուր ամբողջ արտադրությունը նպատակ ունի բավարարելու այդ աշխատավորների կարիքները։

Կապիտալիստական հարաբերությունների մասնակի զարգացումը դյուղում, որ տեղի կունենա մոտակա տարիներս, անհրաժեշտորեն պետք է որ առաջ բերի դասակարգային պայքարի նահուրիշ ձևեր, քան ի զուտ տնտեսական պայքարից, այսինքն՝ բացի տնտեսական զանազան ձևերի միմյանց դեմ մղող պայքարից։ Որինակ, բատրակները, որոնց վարձում է դյուղատնտեսական բուրժուազիան, կարող են յերբեք չունենալ իրենց տնտեսությունը, նրանց պայքարն այնպես չի մղվում, ինչպես մղվում է, որինակ, միջակի և կուլակի միջև, կամ թե՝ աղքատ տնտեսության և կուլակային տնտեսության միջև։ Կուլակի և բատրակի միջև պայքարը տեղի յե ունենում այն հարցերի գծով, որոնք վերաբերում են վարձու աշխատանքի պայմաններին (աշխատանքային որվա տևողություն, վարձատի չափը, աշխատանքի վարձատրության ձևերը, աշխատանքի ընդհանուր պայմանները և այլն և այլն)։ Բայց այստեղ ևս դասակարգային պայքարը բատրակների, որոնք ներկայումս իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգի մի մասն են կազմում, բայց և այնպես ունի ուրիշ ձևեր, քան դասակարգային պայքարի այն ձևերը, որոնք հատուկ եյին կապիտալիստական ռեժիմին։ Այդ բղխում է այն հանգամանքից, որ բատրակությունը, որը կուլակային տնտեսության մեջ գտնվում է՝ այսպես ասած՝ իր տերերի տակ, միաժամանակ, որպես իշխող դասակարգի մի մասը, կանգնած է տերերի վրա, թեկուզ և առանձին բատրակները այդ չգիտակցելիս։ Ինչի՞ մեջ է արտահայտություն գտնում այս վիճակը։ Նրա՛ մեջ, որ մեր յերկրի ամբողջ տնտեսությունը իր սայրով ուղղված է շահագործողների դեմ և իր ամեն մի հոդվածով պաշտպանում է բանվորների շահերը։ Նրա մեջ, որ բանվոր դասակարգի արհեստակցական միությունները և բատրակների արհեստակցական միությունները ոգտվում են որենքով ճանաչված այնպիսի իրավունքներով, որոնցից զուրկ են վոչ մի կապիտալիստական յերկրում. նրա՛ մեջ, որ մեր յերկրի դատավորները ձեռնարկողներին պատժում են այդ որենքների խախտման համար, և այլն և այլն։ Ուստի և բատրակության դասակարգային պայքարը վերջին վերջո ուղղված է վոչ յերբեք դեպի այն, որպեսզի նա կուլակի տնտեսությունը թալանի և իրար մեջ բաժանի։ Մենք այժմ այլևս չենք կարող միշտ միևնույն բանը կրկնել։ Բատրակությունը իր դասակարգային պայքարը տանում է նաև ուրիշ ձևերով՝ իր արհեստակցական կազմակերպությունների և իր պետական իշխանության, Խորհուրդների իշխանության միջոցով պահանջելով աշխատանքի համապատասխան պայմաններ և իր դասակարգի դատավորներին և դիմում, յեթե որ անհրաժեշտ և լինում գյուղատնտեսական ձեռնարկողներին սանձահարել։ Բատրակությունը, լինելով իր բանվորական դասակարգի մի մասը, նաև ոգնում է վոչ միայն գյուղական տնտեսության մեջ վարձված բանվորների կազմակերպությանը, այլ և ամեն տեսակի աջակցություն է ցույց տալիս չքավոր և միջակ գյուղացիների կազմակերպման գործին, այդպիսով հանդիսանալով կենդանի շաղկապող կամուրջ՝ քաղաքային ինդուստրյալ բանվորների և աշխատավոր գյուղացիության լայն խավերի միջև։ Այդ չի նշանակում, որ մենք չենք կարող ունենալ պայքարի և վոչ մի հին ձև։ Բատրակ-

նեբն, որինակ, մեկ անգամ չէ, որ սոխլված կլինեն դիմել գործադուլի՝ կուլակության դեմ։ Բայց այդպիսի ընդհարումների դեպքում ևս գործն այլ կերպ է վերջանում, քանի որ բատրակների յետևում կանգնած են իշխանության բոլոր որգանները, որոնք մասնավոր սեփականատերոջ վրա ճնշում են գործ դնում։

X. ՄԵՆՔ ՈՒՄ ՎՐԱ ՊԵՏՔ Է ՀԵՆՎԵՆՔ.

Մենք նաև ուրիշ կողմից պետք է քննենք այն հարցերը, որոնք հենց նոր պարզեցինք։ Բանը նրանումն է, որ մեր ընկերներից ոմանք, չըմբռնելով հարցի էությունը, տարակուսում են մեր կուսակցության՝ գյուղի նկատմամբ վերցրած քաղաքական կուրսի առթիվ։ Ոմանք, որինակ, այսպես են դատում.

Չե՞ որ մենք քաղաքացիական պատերազմի ժամանակ հենվում էինք քաղաքային բանվոր դասակարգի և գյուղական կիսապրոլետարների, բատրակների, կիսաբատրակների, մանր գյուղացիների և առհասարակ գյուղի չքավորների դաշինքի վրա։ Մեր քաղաքականության այդ գիծը արտահայտել է «դուտ - պրոլետարական գիծ, «ձախ» իսկական, մաքուր - պրոլետարական» կուրս։ Միառժամանակից հետո մենք մեր քաղաքականության ծանրության կենտրոնը փոխադրեցինք գյուղ։ Առաջ մենք հենվում էինք գյուղի չքավոր մասի վրա, գյուղում հենվում էինք այնպիսի կազմակերպությունների վրա, ինչպիսին էին՝ չքավորների կոմիտեները. հետո մենք հայտարարեցինք «պաշտպանել միջակներին» լոզունգը, միջակ գյուղացին սկսեց յերևան բերվել որպես «մեր գյուղական տնտեսության կենտրոնական դեմք». այդպիսով մենք, գուցե և մեզ համար աննկատելի կերպով, չքավորների վրա հենվելուց հետո սկսեցինք հենվել միջակների վրա, այսինքն՝ կուրսը թեքեցինք դեպի աջ, «դուտ պրոլետարական գծից»

շեղվեցինք. անցավ ելի միառժամանակ, և մենք խոսեցինք հարուստ գյուղացուն և նույնիսկ կուլակին տնտեսական ավելի մեծ ազատություններ տալու մասին. ուրիշ խոսքով՝ մենք այժմ ավելի ևս «աջ» թեքվեցինք և, ըստ յերեվույթին, մենք հենվեցինք հենց այդ հարուստի վրա, քանի որ ապարդյուն դարձավ մեր հենվելը սկզբում չքավորության և հետո միջակի վրա։ Արդյոք դա չի՞ նշանակում մեր քաղաքականության նոր շեղում՝ դեպի աջ։ Արդյոք այդ բոլորը միասին վերցրած—չի՞ նշանակում, որ հաստատ և սիստեմատիկ նահանջ ենք անում պրոլետարական քաղաքականությունից և մեր կուսակցության քաղաքականությունը դարձնում ենք մի քաղաքականություն, որ շարունակ և նորանոր զիջումներ է անում նախ միջակին, իսկ հետո ավելի քան միջակ բուրժուազիային։ Արդյո՞ք այդ, ուրիշ խոսքով, մեր կուսակցության քաղաքականության այլասերման պարզ ուրվագիծը չե՞։ Արդյոք այդ չի՞ նշանակում—մեր դիրքերը հանձնել և անձնատուր լինել մեր յերկրում աճող կապիտալիստական հարաբերություններին։

Այս տեսակի մտքերը և այս տեսակի հնարավոր առարկությունները անհրաժեշտ է ամենաուշադիր քննության առնել։ Դրանք անպատասխան թողնել—վո՛չ մի կերպ չի կարելի. այստեղ պետք է առանց այլևայլության սպառող պատասխան տալ, քանի որ առանց ըմբռնելու մեր քաղաքականության էությունը (իսկ այդպիսի ըմբռնումը հնարավոր չե՝ յեթե պատասխան չի տրվում հենց նոր դրած հարցերին), առանց մեր քաղաքականության այդ ըմբռնման, ի հարկե, մտածելի չէ, որ կարելի յե քիչ թե շատ լավ տանել այնպիսի մի հսկայական յերկրի, ինչպիսին մեր յերկիրն է, ղեկավարության գործը՝ այնքա՜ն նեբքին հակասություններով և այնպիսի՜ բարդ խընդիրներով, ինչպիսիք կանգնած են մեր ճանապարհի վրա։

Դրված հարցերին և առարկություններին պատաս-

խանելու համար նպատակահարմար կլինի, նախ, ընդհանուր հարց դնել այսպես կոչված տնտեսական նոր քաղաքականության մասին։ Ցերը մենք զինվորական կոմունիզմի սիստեմից անցնում էինք նոր տնտեսական քաղաքականության, ժամանց թվում էր, որպես թե այդ նոր տնտեսական քաղաքականությունը բացատրում է —բուրժուազիային անձնատուր լինել։ Կոմունիստական կուսակցության և պրոլետարական դիկտատուրայի բոլոր թշնամիները, թե «մեր» և թե արտասահմանյան, անդադար խոսում ու գրում էին կոմունիզմի պարտության մասին Ռուսաստանում, այն մասին, որ ռուս բոլշևիկները, իսկական սոցիալիզմի իրականացման անհաջող փորձ կատարելով, շուտով հուսախաբվեցին այդ փորձի մեջ, քանի որ դա ցույց տվեց սոցիալիստական հասարակարգի անիրագործելիությունը, և, ոգնության կանչելով հենց նույն բուրժուազիային, որին նրանք վոչնչացնել էին ցանկանում, հենց դրանով նրանք ցույց տվին իրենց կատարյալ թուլությունը։ Նոր տնտեսական քաղաքականության սկզբում ոտարյերկրյա և ռուսական դավադիրները, եվիդրանտական (սպիտակ) մամուլը անդադար պնդում էին, որ Ռուսաստանում հակայական քայլ է կատարված հին կարգերի վերականգնման ուղղությամբ, և որ այդ քայլից հետո անխուսափելիորեն կարվեն և ինացած քայլերը՝ դեպի յետ, դեպի կապիտալիզմը,—որպես թե կվերադարձվեն ֆաբրիկանները ու գործարանները, նախկին սեփականատերերը կկանչվեն որպես վարչագներ, որոնք պիտի Ռուսաստանը փրկեն և նրանում կարգ սահմանեն, որպես թե կվերացվեն բոլոր և ամեն տեսակի «ազգայնացումն» ու «մոնոպոլիզացիան», և հենց իրենց՝ «խելոքացած» բոլշևիկների ոգնությամբ նորեն կվերականգնվի կապիտալիստական հասարակակարգը, որը և դրանով և՛ս մեկ անգամ կապացուցի իր հակայական կենսունակությունն ու իր բոլոր առավելությունները բոլոր և ամեն տեսակի սոցիալիզմների ու կոմունիզմների հանդեպ։ Նաև ասում էին, որ բոլշևիկները, որոնք առաջ բանվոր դասակարգի վրա էին հենվում, այժմ հենվում են բուրժուազիայի վրա, հին և նոր բուրժուազիայի վրա, որը դուրս է յեկել զինվորական կոմունիզմի թևի տակ, անցել է ջրի, կրակի միջով, գիտե բոլոր անցքերը, խորհրդային հասարակակարգի մուտքի և յելքի բոլոր դռները, ուստի և նա անպայման շատ ավելի հարմար կլինի բոլշևիկյան ռեժիմի համար։

Սակայն կարելի՞ յե ասել, որ նոր տնտեսական քաղաքականությունը նշանակում է—կապիտալիզմին անձնատուր լինել։ Կարելի՞ յե ասել, որ աշխատավորության դասը տանուլ է տրված՝ նոր տնտեսական քաղաքականության հանդես գալով։ Կարելի՞ է ասել, որ նոր տնտեսական քաղաքականությունը նշանակում է—հրաժարում սոցիալիստական շինարարությունից, նշանակում է—կոմունիզմի պարտություն և այլն։ Կարելի՞ յե, վերջապես, ասել, որ այդ նոր տնտեսական քաղաքականությունը նշանակում է—բուրժուազիայի վրա հենվել։

Այժմ, յերբ այդ՝ այսպես կոչված նոր տնտեսական քաղաքականությունը արդեն մի քանի տարվա հասակ ունի, յերբ նա արդեն ստուգվել է փորձի վրա և յերբ մենք արդեն կարող ենք այդ քաղաքականության բավական ազդեցիկ հաշվեհարդարը կատարել, մենք պարզ տեսնում ենք, որ դրա հետևանքով ձեռք ենք բերել ուժերի հակայական զարգացում՝ ի նպաստ բանվոր դասակարգի և առհասարակ աշխատավոր մասսաների, ի նպաստ սոցիալիզմի՝ մանավոր-կապիտալիստական տնտեսության դեմ նրա մղած պայքարում։ Նոր տնտեսական քաղաքականության շնորհիվ մենք խոշոր հաջողություններ ունեցանք տնտեսության բնագավառում և

բացի այդ մեր յերկրի արտադրողական ուժերի զարգացումն անցավ այնպիսի՛ ուղղությամբ, որ հետզհետե ավելի և ավելի՛ դերակշռություն սաացան և սահմանում են տնտեսության սոցիալիստական ձևերը և այնպիսի ձևերը, որոնք մեր սրտին մոտ են, սոցիալիզմի ուղիով ընթացող են։ Մեր յերկրի տնտեսության ընդհանուր գումարից յերբեք չի յերևում այն, որ մասնավոր կապիտալը, պետական և կոոպերատիվ տնտեսությունների հետ համեմատած, ավելի ու ավելի զորանալ կարողանա։ Ընդհակառակը, պետական և կոոպերատիվ տնտեսության դիրքերը հետզհետե ավելի ու ավելի յեն ամրապնդվում յերկրի բարեկեցիկության ընդհանուր վերելքի դաշտում։ Յեթե այդ այդպես է,—իսկ այդ այդպես է,—ապա ինչ՞ պե՞ս կարելի յե խոսել վորևե կապիտուլիացիայի մասին, կամ պրոլետարական գծից շեղվելու մասին, կամ բուրժուազիայի վրա հենվելու մասին։ «Բուրժուազիայի վրա հենվելը» վատ չե, յեթե դրա հետևանքով շահվում է առաջին հերթին սոցիալիստական պրոլետարիատը։ Լավ է կոմունիզմի այն «պարտությունը», յեթե դրա հետևանքով պրոլետարական դիկտատուրիայի պետական տնտեսությունը մի շարք տարինների խանգարումներից ու մեռած դրությունից դիմում է իր եկոնոմիական արագ վերելքին։

«Կոմունիզմի պարտությունը» իսկապես յեղել է վոչ այլ ինչ, յեթե վոչ՝ դեպի սոցիալիզմը դիմող մեր զարգացման ընթացքի նկատմամբ ունեցած մեր մի քանի մոլորությունների ու սխալ պատկերացումների (այսպես կոչված «զինվորական կոմունիզմի» հետ կապված) պարտություն։ Բայց մի քանի մոլորությունների պարտությունը յերբեք չի նշանակում կոմունիզմի պարտություն։ Միանգամայն հասկանալի յե, որ յերիտասարդ դասակարգը, իր ձեռքն առնելով պետական իշխանությունը, չեր կարող իրեն պատկերացնել ամբողջ դժվարությունն

այն ճանապարհի, վորով նա պետք է գնար։ Քաղաքական պատերազմի շրջանում, շահագործողներին անխնա ճնշելու, կոնֆիսկացիայի, ռեկվիզիցիայի և այլն շրջանում մենք կարծում եյինք, որ կարող ենք համարյա միանգամից անցնել պլանաչափ կազմակերպված տնտեսության՝ բոլորովին և միանգամից ամեն տեղ վոչնչացնելով ազատ առևտուրը և այդ առևտուրին փոխարինել կազմակերպված բաշխում (տոմսեր և այլն)։ Սակայն փորձը մեզ ցույց տվեց, որ այդ տեսակ խնդիրը մեր ուժերից վեր է, և հենց ըստ եյության էլ այդ խնդիրը լուծվել չի կարող, քանի որ կան հսկայական քանակությամբ մանր տնտեսություններ, որոնք վոչ մի կերպ հնարավոր չե խցկել միանական ներդաշնակ պլանի մեջ։ Ագատ առևտրի արգելքը մանր արտադրողների նկատմամբ, դրանց թվում և՝ առաջին հերթին՝ գյուղացիության նկատմամբ, յերկար պահել չեր կարելի. դա կնշանակեր—գյուղացու հետ մեր սովորական դարձած բոլոր հարաբերությունների մի այնպիսի բեկում, որ մեզ դեմ կդրդռեր գյուղացիության լայն խավերը։ Գյուղացին և ընդհանրապես մանր արտադրողը, որը սովոր է իր պրոդուկցիայի հետ ազատորեն վարվել այնպես ինչպես ինքն է ցանկանում (ծանոթ վարվել այնպես ինչպես ինքն է ցանկանում), զինվորական կոմունիզմի դեպքում այլևս յերբեք շահագրգռված չեյին լինի նրանց արտադրությունը բարելավելու և լայնացնելու։ Ուստի և կատացվեր այն, որ գյուղատնտեսական արդյունաբերությունը այդպիսի սխեմայի դեպքում չեր կարող զարգանալ և առաջադիմել։ Չեր կարող լինել ուղիղ կապակցություն՝ մանր-արտադրողի մասնավոր շահերի և պրոլետարական սոցիալիստական շինարարության խնդիրների ու նպատակների միջև։ Պետք եր ամենից առաջ այդ կապը գտնել։ Յեվ նոր տնտեսական քաղաքականությունը նախ

և առաջ նշանակում է՝ այդ տեսակ կապակցություն։ Վերը մենք տեսանք, թե ինչպես, մանր արդյունաբերողի մասնավոր-անտեսական շահերից բռնելով, կարելի է նրան —կոոպերացիայի միջոցով—հետզհետե մոտեցնել սոցիալիզմին, միանգամից չկոտրելով կյանքի նաև խիստ սովորական դարձած ամուր կարգերը և այդպիսով մեր դեմ չգրգռելով գյուղացիության աշխատավոր լայն մասսաների մանր-բուրժուական սովորությունները ու նույնիսկ անհավատությունները։ Հիշենք, որ մեր յերկրում կա մոտ 100 միլիոն գյուղացիական բնակչություն, 20 միլիոնից ավելի գյուղացիական ծխեր. հիշենք, որ գյուղացիական անտեսությունը կազմում է մեր պետական արդյունաբերության անտեսական հիմքը,—և այն ժամանակ միանգամից պարզ կդառնա, թե մեր յերկիրն ինչպես կառաջադիմե՝ անցնելով նոր անտեսական քաղաքականության։ Մենք այժմ պարզ տեսնում ենք դեպի սոցիալիզմը տանող մեր ուղին, որը ընկած է ո՛չ այնտեղ, կամ, ավելի ճիշտը, ո՛չ բոլորովին այնտեղ, ուր մենք դա վերոնում էինք առաջ։ Մենք կարծում էինք թե միանգամից և մեկ հարվածով կարող ենք վոչնչացնել շուկայական հարաբերությունները։ Դուրս յեկավ, որ մենք սոցիալիզմին կհասնենք հենց շուկայական հակաբերությունների միջոցով։ Կարելի է ասել, որ շուկայական այդ հարաբերությունները կվոչնչացվեն իրենց սեփական զարգացման հետևանքով։ Ինչ կերպ։

Մեզ հայտնի է, որ կապիտալիստական հասարակարգում, ուր շուկան իշխում է, ուր գոնազան տեսակի մասնավոր ձեռնարկություններ այդ շուկայում միմյանց հետ պայքարում են, միմյանց հետ մրցում,—խոշոր արտադրությունը վերջ ի վերջո հանդում է մանր արտադրությանը, միշտ կապիտալը տեղի է տալիս ավելի խոշոր կապիտալին և, ի վերջո, միմյանց հետ մրցող բազմաթիվ ձեռնարկողներին, ֆաբրիկանտներին, վաճառականներին, բանկիրների տեղը գրավում են արդյունաբերության և բանկերի խոշոր թագավորների փոքրիկ խմբերը, որոնք իրենց ձեռքումն են կենտրոնացնում ամբողջ արդյունաբերությունն ու առևտուրը։ Շուկայական պայքարի զարգացումն հասցնում է նրան, որ մրցակիցների թիվը հետզհետե պակասում է, և արտադրությունը կենտրոնանում է կապիտալիստական խոշոր կազմակերպությունների ձեռքում։ Տեսքով դրա նման մի բան էլ մեզ մոտ կկատարվի, և հենց այժմ էլ է տեղի ունենում, միայն այն եյական տարբերությամբ, որ մեզ մոտ արդյունաբերության և բանկերի խոշոր թագավորների տեղը կանգնած է բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը։ Յեվ իսկապես, մեզ մոտ գոյություն ունեն անտեսական տարբեր ձևեր, անտեսական տարբեր տեսակի «ձեռնարկություններ». մենք ունենք պետական ձեռնարկություններ, մենք ունենք կոոպերատիվ ձեռնարկություններ, մեզ մոտ, վերջապես, գոյություն ունեն մասնավոր-կապիտալիստական ձեռնարկություններ և այլն։ Ավելի խոշոր արտադրությունը գտնվում է պրոլետարական պետության ձեռքում։ Մասնավոր կապիտալիստական անտեսության ձեռքում գտնվում են շատ ավելի պակաս խոշոր ձեռնարկությունները առևտրի բնագավառում, առաջին հերթին՝ հատավաճառ առևտուրը, մինչդեռ մեծաքանակ առևտուրը (խոշոր առևտուրը) գտնվում է պետության ձեռքում. արդյունաբերության մեջ խոշոր արտադրությունը նույնպես գրավում է պետության ձեռքում, իսկ մասնավոր ձեռնարկությունների բաժին է ընկնում մեծ մասամբ միայն միջին և մանր տիպի ձեռնարկություններ։ Այդ գոնազան ձևերի ձեռնարկությունների միջև տեղի ունի անտեսա-

կան պայքար, մի այնպիսի պայքար, որի մեջ վերջին խոսքը պատկանում է գնողին։ Իսկ գնողը գնում է այն տեղ, ուր ապրանքն ավելի լավ է և էժան։ Գործը ուղիղ դնելու դեպքում (իսկ դրան մենք միշտ ավելի ու ավելի յենք ձգտում և հետզհետե ավելի և ավելի յենք հասնում) բոլոր առավելությունները կլինեն պետական խոշոր արտադրության կողմը, և նա մրցության պայքարում կթագի իր մասնավոր մրցակցին։ Գյուղացիական մանր անտեսությունը, նեղվելով իր «մանր լինելուց», ինչպես վերը հիշեցինք, այդ թերությունը կլրացնի պրոլետարական պետական իշխանության կողմից պաշտպանություն վայելող իր կոոպերատիվ կազմակերպության միջոցով, ուստի և իր համար նույնպես կնվաճի ամեն տեսակի խոշոր կազմակերպության առավելությունները, կոոպերացիայից ստացվող այդ առավելություններն ու ոգուտները ոգտագործելով կուլակի մասնավոր տնտեսության դեմ իր մղած պայքարում։ Շուկայում պայքար մղելու միջոցով, շուկայական հարաբերությունների միջոցով, մրցման միջոցով պետական ձեռնարկությունները ու կոոպերացիան կնեղեն իրենց մրցակցին, այսինքն՝ մասնավոր կապիտալին։ Վերջիվերջո շուկայական հարաբերությունների զարգացումը ինքն իրեն ի չիք կդարձնի, որովհետև այն չափով, ինչ չափով որ այդ շուկայական հարաբերությունների հողի վրա իրենց գնումով ու վաճառումով, փողերով, վարկով, բիրժայով և այլն և այլն՝ պետական արդյունաբերությունն ու կոոպերացիան իրենց տակ կճլթլեն տնտեսական բոլոր ճյացած ձևերը և նրանց հետզհետե մինչև վերջ դուրս կքշեն շուկայի միջոցով, այն չափով էլ ինքը շուկան վաղ թե ուշ կմեռնի, քանի որ ամեն ինչին կփոխարինե արտադրելի պրոդուկտների պետական կոոպերատիվային բաշխումը։

Այդպիսով մեր պատկերացումը՝ դեպի սոցիալիզմը կատարվող զարգացման մասին բավականաչափ փոխվեց. բայց այդ փոփոխությունները իրենցով մազաչափ անդամ չեն արտահայտում նահանջները՝ պրոլետարական քաղաքականությունից. ընդհակառակը, նրանք իրենցով արտահայտում են հեղափոխական հսկայական փորձի հաշվառումը։ Մենք առաջին անգամն ե, որ նոր տնտեսական քաղաքականության մեջ մանր արտադրողի մասնավոր շահերի և սոցիալիստական շինարարության ընդհանուր գործի միջև ուղիղ կապակցություն գտանք։ Նոր տնտեսական քաղաքականությունը վոչ թե զավաճանություն և պրոլետարական դիծի, այլ միակ ուղիղ պրոլետարական քաղաքականություն։ Այժմ այդ արդեն չափազանց պարզ ե դարձել։

Թե արդյոք մեր քաղաքականությունը հանդիսանում ե ուղիղ պրոլետարական գծից նահանջ,—այդ ամենալավ կերպով կարելի յե վորոշել այն ժամանակ, յերբ մենք հաշվի յենք առնում այդ քաղաքականության հետևանքները։ Իսկ յեթե այդ հետևանքներն ասում են, որ սոցիալիստական տնտեսական ձևերը յերկրի ամբողջ տնտեսության մեջ իրենց կշիռը ուժեղացնում են, ապա միայն դա միանգամայն բավական ե՝ ամբողջ հարցը լուծելու համար։ «Զբավորության կոմիտեների» (комбеды) քաղաքականությունը դյուրում եյապես լուծում եր յերկու խնդիրը, վորոնք այն ժամանակ առորյա, հերթական եյին. նախ՝ կուլակների ընդդիմադրության դեմ պայքարելու խնդիրը, յերկրորդ՝ մասնատերումով հաց հավաքելու խնդիրը, առանց վորի անկարելի կլիներ պորքը կերակրել։ Բայց այդ քաղաքականությունը չլուծեց և չեր կարող լուծել դյուրի տնտեսական վերելքի խնդիրը։ Տնտեսական վերելքը

դյուղում, այսինքն՝ հակայական քանակությամբ մանր անտեսություններին վերելքը հնարավոր չէ առանց դյուղացիության անտեսական հիմնական մասսայի, միջակ դյուղացու վերելքի։ Ինչ չափով վոր անտեսական այդ վերելքը գոյություն ունի, այն չափով էլ կան հիմունքները՝ պետական անտեսության վերելքի (քաղաքում) համար։ Արդյո՞ք այդ նշանակում է, վոր այստեղ մոռացության է տրվում չքավոր դյուղացիությունը։ Իհարկե—վոչ. քանի վոր անտեսության ընդհանուր վերելքը յերկրում և պետական անտեսության վերելքը շատ ավելի հնարավորություններ է տալիս ոգնելու չքավոր դյուղացիությանը վոչ միայն խոսքով, այլ և գործով, վոչ միայն թղթի վրա, այլ և կյանքում, վոչ միայն դեկրետներով, այլ իսկական նյութական աջակցությամբ։ Յեվ յեթե մինչև որ այդ աջակցությունը ցույց չի տրվում պատշաճ չափով, ապա այդ յերևույթի հիմնական պատճառը՝ մեր պետական անտեսության մեջ միջոցների կուտակման անբավարար արագ ընթացքն է։ Այդ պատճառով էլ, հենց հատկապես այդ պատճառով, մենք պետք է գործ դնենք ամեն ջանք, վորպեսզի արագացնենք մեր նյութական միջոցների աճումը, արագացնենք կուտակման «տեմպը» մեր պետական արդյունաբերության մեջ, արագացնենք լրացուցիչ միջոցների հոսումը մեր պետական գանձարանը։

Վորպեսզի այս խնդիրը լուծվի, անհրաժեշտ է ապրանքաշրջանառության հետագա ծավալումը մեր յերկրում, իսկ դրա համար, իր հերթին, անհրաժեշտ է մի քիչ ավելի՛ անտեսական ազատություն նաև գյուղատնտեսական բուրժուազիայի համար, այսինքն, անհրաժեշտ է նոր տնտեսական քաղաքականություն վոխադրել գյուղ։ Այժմ դա մեզ համար մազաչափ

անգամ վտանգավոր չէ, քանի վոր, ինչպես վերը նշինք, մենք արդեն ունենք հրամանատարական բարձունքները. իսկ մյուս կողմից, այդ հնարավորությունը կտա՝ յերկրում ապրանքաշրջանառությունը արագացնելով՝ ավելի՛ շուտ կուտակելու, հնարավորություն կտա նաև ավելի արա՛գ ոգնության հասնելու չքավորներին և միջակների կոոպերացիաներին, կոլտնտեսություններին, գյուղատնտեսական կոոպերացիաներին, սպառողական ընկերություններին։ Մենք խոսակցություն ենք՝ նախ՝ մե՛զ վրա, հենվում ենք բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության վրա, անտեսական սոցիալիստական ձևերի աճման վրա, պետական արդյունաբերության աճման վրա, իսկ ապա՝ հենվում ենք գյուղատնտեսական կոոպերացիայի աճման վրա։ Կապը, զուգումը այդ յերկու հիմնական ձևերի միջև—անհրաժեշտ պայմանն է մեր հաղթանակի։

XI. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ՆՐԱ ՏԱՐԲԵՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ՏԱՐԲԵՐ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.

Մեր արդի հասարակության զարգացումը սոցիալիստական ուղղությամբ՝ ապահովվում է նրանով, վոր իշխանության գլուխ է կանգնած բանվոր դասակարգը, և վոր այժմ փաստ է նրա հեղափոխական դիկտատուրան, նրա միահեծան իշխանությունը։ Պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր նշանակությունը կայանում է, նախ, նրանում, վոր դա հանդիսանում է չհագործողներին ճնշելու գործիք, դրանց կողմից կատարված ամեն տեսակի փորձերը, վերստին իշխանության գլուխ անցնելու փորձերը ճնշելու գործիք. մյուս կողմից, պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր նշանակությունը կայանում է նրանում, վոր նա հասարակության եկո-

նոմիական կերպարանափոխման հիմնական լծակն է։ Բանվոր դասակարգը իր ձեռքում գտնված պետական իշխանությունը ոգտագործում է նրա՛ համար, որպես զի հասարակության էկոնոմիական հարաբերությունները շարունակ կերպարանափոխի սոցիալիստական ձևի։ Յեվ իրոք, իշխանությունը խլելուց հետո, հենց որ պետական նոր հասարակակարգի հիմքը դրվեց, բանվոր դասակարգը այդ իշխանությունը գործ դրեց նրա՛ համար, որպեսզի «սեփականատերերին սեփականությունից զրկի», այսինքն՝ ֆաբրիկանտներից ու գործարանատերերից խլի նրանց ֆաբրիկաներն ու գործարանները և դրանք դարձնի պետության սեփականություն։ Բանվորական իշխանությունը վերջնականապես ու միանգամ ընդմիշտ հաստատուն դարձրեց նաև ամբողջ կալվածատիրական հողի կոնֆիսկացիան և այդ հողը հայտարարեց ամբողջ ժողովրդի սեփականություն (հողի ազգայնացումը)։ Ըստ իր ամրապնդման աստիճանի, Խորհրդային իշխանությունը, տանելով սոցիալիստական (հասարակական և անտեսական) ձևերի բոլոր ծիլերի շարունակական և սիստեմատիկ ուժեղացման քաղաքականություն, հանդիսանում է, այդպիսով, հասարակական կերպարանափոխման գործիք։ Նախկին գլուխներում մեր բոլոր ասածներից կարելի չէ հետևցնել, որ այն չափով, ինչ չափով հաստատուն է խորհրդային հասարակակարգը, ծանրությանը կետը հետզհետե ավելի և ավելի փոխվում է,—շահագործողներին և բանվոր դասակարգի թշնամի հասարակական խմբավորումների ճնշողներին անմիջականորեն և մեքենայորեն ճնշելու գործից անցնում ենք հասարակության անտեսական կերպարանափոխման գործին, խաղաղ-կազմակերպչական աշխատանքի, մանավոր ձեռնարկողների դեմ անտեսական պայքար մղելու, անտեսական սոցիալիստական ձևերի շինարարության գործին (պետական ձեռնարկություններ, կոոպերացիա և այլն)։

Պրոլետարիատի, այսինքն՝ բանվոր դասակարգի դիկտատուրան, որ կազմակերպված և որպես պետական իշխանություն, չէ կարող տարբերվել դեպի հասարակության տարբեր խավերը, դեպի դասակարգային տարբեր խմբավորումները։ Ջուիազանց տարօրինակ կլիներ, եթե բանվոր դասակարգի իշխանությունը չտարբերեր այդ խավերը, չտեսներ հսկայական զանազանությունը հասարակական տարբեր դասակարգերի ու խմբավորումների միջև և վարեր միևնույն, միանգամայն միատեսակ քաղաքականություն, այսինքն՝ այդ տարբեր դասակարգերի, խավերի և խմբավորումների նկատմամբ դանվելիս լիներ միևնույն հարաբերությունների մեջ։

Պրոլետարական դիկտատուրայի դերը՝ դրա ներժիմին ընդդիմադրող բուրժուական խավերի նկատմամբ՝ կայանում է այդ խավերին ճնշելու մեջ։ Յեթե, որինակ, մեզ մոտ արտասահմանից գալիս են ռուսական հակա-հեղափոխության ագենտներ՝ մեզ մոտ ստեղծելու գաղտնի կազմակերպություններ և կրուժոկներ, նպատակ դնելով պայքարել Խորհրդային իշխանության դեմ և դրան տապալել, ապա այդորինակ բուրժուական կալվածատիրական խավերի նկատմամբ պրոլետարական դիկտատուրան նշանակում է հատու սուսեր, որը անողոք և վարվում այն դավադիրների հետ, որոնք ցանկանում են խանգարել հասարակությունը սոցիալիստական վերակերպարանափոխելու ամեն մի հնարավորություն։ Բոլորովին այլ բան է հանդիսանում մեր պրոլետարական իշխանությունը, և բոլորովին այլ բան է կազմում պրոլետարական դիկտատուրայի դերը բուրժուազիայի այն բոլոր խավերի նկատմամբ, որոնց, ըստ Լենինի արտահայ-

տության, «թուլ է տրված վոր աշխատակցեն» բանվոր դասակարգի և գյուղացիության հետ։ Յեվ իսկապես, մենք դիտենք, վոր մեզ մոտ բուրժուական ձեռնարկողների մի ամբողջ խավ, առաջին հերթին՝ առևտրականները, իրենց գործով պարապում են, այսպես ասած, որինական հիմունքներով. մեր խորհրդային որենքները այդպիսի գործնեություն թուլ տալիս են։ Ինչո՞ւմն է կայանում պրոլետարական դիկտատուրայի դերը բուրժուական այդ խավերի նկատմամբ։ Դա կայանում է, նախ, այդ գործնեությունը մի շարք պայմաններով (բանվորական որենսդրությունը և որենքները աշխատանքի մասին, արհեստակցական միությունների իրավունքները, ամեն տեսակի հարկեր դնելը և այլն) սահմանափակելու մեջ. յերկրորդ՝ պրոլետարական դիկտատուրայի դերը կայանում է այդ ելեմենտներին սոցիալիստական շինարարության համար (ապրանքաշրջանառության ընդհանուր աշխուժության, այդ խավերից ստացված տուրքերի գործադրության՝ տնտեսական սոցիալիստական ձեվերին աջակցելու համար և այլն) ոգտագործելու մեջ. և վերջապես նրա դերը կայանում է այդ խավերի դեմ, շուկայում նրանց հետ մրցելու միջոցով՝ տնտեսական պայքար մղելու մեջ (պետական ձեռնարկությունները, մասնավոր կապիտալի հետ մրցող կոոպերացիային աջակցությունն և այլն)։ Յեթե մենք այժմ մեզ հարց տանք —իսկ վո՞րն է պրոլետարական դիկտատուրայի գլխավոր խնդիրը՝ նոր բուրժուազիայի նկատմամբ, ապա այդ հարցի կարճ պատասխանը մոտավորապես այսպես կլինի.— այդ խնդիրն է՝ ոգտագործման և արտաքսման խնդիրը։ Այստեղ կան, հետևապես, այնտեսակ հարաբերություններ, վորոնք ի վերջո ի չիք են դարձնելու մանավոր-կապիտալիստական ձևերը՝ դրանց արտաքսելու ճանապարհով։ Այժմ հարց դնենք պրոլետարական դիկտատուրայի դերի և նշանակության մասին՝ աշխատավոր գյուղացիության —չքավորների և միջակների— նկատմամբ։ Կա՞ այստեղ արդյոք պայքարի վորևե ելեմենտ։ Այստեղ, անշուշտ, պայքարի ելեմենտ կա, բայց դա անչափ քիչ է, քան նոր բուրժուազիայի նկատմամբ։ Ինչո՞ւմն է կայանում այդ ելեմենտը։ Դա կայանում է այն պայքարի մեջ, վոր մղվում է գյուղացիության մի քանի խավերի՝ բուրժուազիայի կողմն ունեցած տատանումների դեմ։ Մենք արդեն տեսանք, վոր գյուղացիությունը, չնորհիվ իր տնտեսության մանրավոր բնույթին, չնորհիվ իր խավարամտության և դարավոր հետամնացության, չնորհիվ այն հանգամանքի, վոր նա սովոր չէ կոլեկտիվ ձևերի և նոր-նոր է սկսում անցնել դրանց, նա վորոշ պայմաններում, մանավանդ ծանր կրիտիկական մոմենտներին, հակված է բուրժուազիայի կողմը տատանվելու։ Յեվ ահա այս տատանումներով, այս թեքումներով, վոր բղխում են գյուղացու երկդիմի բնույթից (մի կողմից՝ աշխատանքը, մյուս կողմից՝ տնտեսության մանրավոր բնույթը), պրոլետարական դիկտատուրան պետք է մղի, ի հարկե՝ ամեն անգամ համապատասխան ձևով, վճռական պայքար։ Սակայն պրոլետարական դիկտատուրայի հիմնական խնդիրը աշխատավոր գյուղացիության նկատմամբ հանդիսանում է գյուղացիության տնտեսական կենցաղավարությանը ոգնելու և դա փոխելու, դրա համար նոր ձևեր մշակելու մեջ։ Գյուղացիական տնտեսությունը պրոլետարական դիկտատուրայի ոգնությամբ կստանա՝ առաջին հերթին կոոպերացումի միջոցով՝ նոր, բարձրագույն, շատ ավելի խոշոր, շատ ավելի կուլտուրական և սոցիալիզմի ուղիով զարգացող ձև։ Այդ պրոցեսը տեղի կունենա գյուղացիական տնտեսությունը վոչ թե «արտաքսելու», վոչ թե «կլանելու», «վոչնչացնելու», այլ դա կամաց-կամաց մշակելու միջոցով։ Յե-

թե մասնավոր - կապիտալիստական ձեռնարկությունները, պրոլետարական դիկտատուրայի հետևանքով, նրա քաղաքականության հետևանքով, պետք է արտաքսվեն և կործանվեն՝ չդիմանալով պետական ձեռնարկությունների և կոոպերատիվների մրցմանը, ապա գյուղացիական տնտեսությունը չի կործանվի, այլ կընդունի ուրիշ բարձրագույն ձևեր։ Պետական ձեռնարկությունը մասնավոր ձեռնարկության հետ մրցում է և, վերջիվերջո, նրան թակում։ Պետական ձեռնարկությունը գյուղացիական տնտեսության հետ չի՛ մրցում, այլ նրան ոգնում է՝ բարձրանալ ավելի բարձր աստիճանի վրա, մրցման պայքարում նրան չի թակում, այլ նրան կոոպերացիայի միջոցով կազմակերպում է։

Այդպիսով, պրոլետարական դիկտատուրան գյուղացիության նկատմամբ գտնվում է մի այնպիսի կապի մեջ, որ կարելի չէ անվանել դաշինք խոսքով։ Այդ դաշինքի մեջ, ինչպես մենք արդեն գիտենք, ղեկավարությունը պատկանում է բանվոր դասակարգին, որ կազմակերպված է որպես պետական իշխանություն։

Որպեսզի միանգամայն պարզ և որոշ ներկայացնենք դրությունն այնպես, ինչպես որ նա կա, հարկավոր է խիստ տարբերել յերկու բան.—մի կողմից՝ աշխատակցությունը հասարակության մեջ, և մյուս կողմից՝ աշխատակցությունը իշխանության մեջ, այսինքն այդ իշխանության բաժանումը դասակարգերի միջև։ Աշխատակցությունը և մինչև անգամ դաշինքը, հաստատ և անխախտ դաշինքը, դեռ ևս իշխանության բաժանումն չեն։ Հասարակության մեջ՝ կա բանվոր դասակարգի և գյուղացիության միջև կատարյալ աշխատակցություն, կա դաշինքային հարաբերություն։ Այդ նշանակում է, որ պետական արդյունաբերությունը և գյուղացիական տնտեսությունը

պետք է ոգնեն միմյանց։ Այդ նշանակում է, որ բանվոր դասակարգն ու գյուղացիությունը միասին են կըռվում կալվածատերերի և կապիտալիստների դեմ՝ յերեք սրանք արշավում են խորհրդային հանրապետությունների վրա։ Այդ նշանակում է, որ բանվոր դասակարգն ու գյուղացիությունը մասնավոր կապիտալի դեմ տնտեսական ճակատում միասին են պայքարում։ Սակայն այդ դեռ չի նշանակում, որ մեզ մոտ իշխանության բաժանումն կա, որ մեզ մոտ կա վոչ թե բանվոր դասակարգի, այլ յերկու դասակարգերի դիկտատուրա, այսինքն՝ և՛ բանվոր դասակարգի, և՛ գյուղացիության։ Հենց այդ դաշինքը ո՞ւմ միջև է։ Դա—բանվոր դասակարգի (որը կազմակերպված է որպես պետական իշխանություն) և գյուղացիության դաշինքն է։ Պետական իշխանության մեջ գյուղացիությունը՝ որպես այդպիսին՝ մասնակից չէ այդ իշխանության, բայց այդ բանվորական իշխանությունը դաշնադիր է գյուղացիական դասակարգի հետ։ Դա ինչո՞ւ չէ այդպես և ինչու մեր պայմաններում, այսինքն հասարակության՝ սոցիալիզմին անցնելու պայմաններում, անհրաժեշտ է հենց մեկ դասակարգի, այսինքն՝ բանվոր դասակարգի դիկտատուրան։ Այդ անհրաժեշտ է, որովհետև միմիայն պրոլետարիատն է իրենից ներկայացնում մի այնպիսի հասարակական ուժ, որը կատարելապես գիտակցաբար և հաստատ կերպով կարող է հասարակությունը ծանել դեպի սոցիալիզմ։ Մենք վերը տեսանք, որ ղեկավարությունը այդ ճանապարհի վրա, ղեկավարությունը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մեջ — պետք է պատկանի պրոլետարիատին, և որ միմիայն այդպիսի ղեկավարության դեպքում է հնարավոր դեպի սոցիալիզմը տանող հաղթական առաջխաղացումը։ Բայց պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն՝ պրոլետարիատի կազմակերպությու-

նը, վորպես պետական իշխանություն,—դյուղացիության լայն մասսաների նկատմամբ ունեցած դեկավարության կազմակերպություն եւ Սակայն պրոլետարիատը իրեն ամենևին նպատակ չի դնում պրոլետարիատի հավիտենական թագավորությունը, նա իրեն յերբեք նպատակ չի դնում պրոլետարական դիկտատուրայի հավիտենական դոյությունը, ինչպես և իր սեփական դոյությունը՝ վորպես մշտապես, հավիտենապես տիրապետող դասակարգի։

Բանվոր դասակարգը իրենը գլխավոր նպատակ է դարձնում (և դեպի վորը նա գնում է դանդաղ, բայց անհողդողդ, տանելով իր հետևից ամբողջ հասարակությունը) —վերափոխել ժողովրդական լայն խավերը, և առաջին հերթին վերափոխել հենց դյուղացիությունը, նրան վերադաստիարակել սոցիալիստական վոգով, նրան մշտապես բարձրացնել, հասցնել նյութական, մտեսական և կուլտուրական-քաղաքական այն մակարդակին, վորի վրա գտնվում են պրոլետարական ագգաբնակչության ամենաառաջավոր խավերը։ Վորքան դյուղացիության լայն խավերը վերամշակման և վերադաստիարակման յենթարկվեն, այնքան նրանք ավելի ու ավելի պետք հավատարմվեն պրոլետարիատի հետ, խառնվեն նրան և դառնան սոցիալիստական հասարակության միանման անդամներ։ Դասակարգերի միջև յեղած դանազանությունը ավելի ու ավելի պիտի անհետանա։ Յեվ այդպիսով դյուղացիության ամենալայն խավերը, «վերափոխելով իրենց սեփական բնությունը», կխառնվեն քաղաքի աշխատավորների հետ, պրոլետարիատի՝ վորպես առանձին դասակարգի՝ դիկտատուրան կամաց կամաց կմեռնի։

Կապիտալիստական հասարակության մեջ բուրժուազիայի մասին նույնպես վորոշ չափով կարելի յե ասել, վոր նա, այդ բուրժուազիան, հանդիսացել է ամբողջ հասարակության ղեկավարը, նրա ամենաառաջավոր և ամենակրթված դասակարգը, բայց բուրժուազիայի դեկավարությունը և պրոլետարիատի դեկավարությունը ամենախիտ, ամենախորը, ամենահիմնական կերպով զանազանվում են միմյանցից։ Վորովհետև զարգացումը կապիտալիստական հասարակության, վորի գլուխն եր կանգնած բուրժուազիան, հասցրեց այն բանին, վոր աիրապետող դասակարգերի և ճնշված դասակարգերի (մի կողմից բուրժուազիայի և մյուս կողմից բանվոր դասակարգի ու գյուղացիության) միջև յեղած զանազանությունը ավելի ու ավելի սրվեց և մեծացավ։ Անմտություն է մտածել անգամ, վոր կապիտալիստական իրավակարգի շրջանակներում ու սահմաններում բանվոր դասակարգն ու գյուղացիությունը իրենց նյութական դրության, իրենց կյանքի մակարդակով, իրենց կրթության, իրենց հասարակական դիրքով յերբ և իցե կհավասարվեն բուրժուազիայի դրությանը։ Այդ կհակասեր բուրժուական հասարակության ամենագլխավոր հիմքերին։ Ընդհակառակը, բուրժուական այդ հասարակության իսկական եյությունը կայանում է այդ հասարակությունը ավելի ու ավելի խիտ կերպով բաժանելու մեջ, բուրժուական քաղաքականության ամենահիմնական եյությունը կայանում է նրանում, վոր բուրժուազիան նրա ոգնությամբ իր համար, բացառապես իր համար ապահովում է նյութական դրության, ինչպես նաև կրթության բոլոր առավելությունները. բուրժուազիան այն յերկրներում, ուր նա տիրապետում է, մոնոպոլիա (այսինքն՝ բացառիկ տիրապետություն) ունի վոչ միայն արտադրության միջոցների, ֆաբրիկաների, գործարանների, յերկաթուղիների և շատ ուրիշ բաների վրա, նա մոնոպոլիա ունի վոչ միայն պետական իշխանության վրա, վորին վոչ վոքի չի թողնում մոտենալ, այլ նա կատարյալ փաստացի մոնոպոլիա ունի

և բարձրագույն կրթության, մամուլի (լրագրներն ու ժուռնալները), գիտության վրա և այլն։ Նոր գիտնականները, նոր ադմինիստրատորները, նոր ճարտարապետները, նոր սպաներն ու գեներալները, մի խոսքով՝ հասարակության նոր ղեկավար կադրերը շարունակ լրացվում են ոչ թե ժողովրդի ստորին խավերից, ոչ թե բանվորներից ու գյուղացիներից, այլ նույն բուրժուական խավերից ու բուրժուական ինտելլիգենցիայից, որոնք անվերջ ոգտվում են (փաստորեն ժառանգաբար) իրենց դրության բոլոր առավելություններից։ Բուրժուազիան իր համար յերբեք նպատակ չի դրել և չեր էլ կարող դնել՝ ժողովրդական նորանոր շերտերը սիստեմատիկ և անշեղ բարձրացնել դեպի կուլտուրական կյանք, վորովհետև դա կնշանակեր նրա սեփական հզորության անկումը։

Բոլորովին այլ, ուղղակի հակադիր քաղաքականություն է տանում բանվոր դասակարգը։ Նրա խնդիրն է հանդիսանում դասակարգերի միջև գոյություն ունեցող այդ հարաբերությունների ոչ թե վերափոխումը, այլ նրա խնդիրն է հանդիսանում դասակարգերի հարաբերությունների հաղթահարումը, ժողովրդական լայն մասսաների վերադաստիարակման միջոցով այդ դասակարգային հարաբերությունների վոչնչացումը. այդ բանն իրականացնելու համար նա ոգտվում է իր տրամադրության տակ յեղած բոլոր միջոցներից և իր պետական իշխանության ամբողջ հզորությունից։ Այդ վերափոխման հիմքը հանդիսանում է հասարակության **էկոնոմիական հարաբերությունների** վերափոխումը, այդ հասարակության զարգացումը՝ սոցիալիզմի ուղիով։ Իսկ դրա հետ միասին և դրան զուգընթաց, բանվոր դասակարգը գործ է գնում ամեն ջանք, վորպեսզի վերամշակի ժողովրդական լայն մասսաները և առաջին հերթին՝ կալվածատերերի ու կապիտալիստների դեմ տարվող պայքարում իր հավատարիմ

դաշնակից գյուղացիությանը. դա յուր արտահայտությունը նաև գտնում է գյուղացիությունը խորհրդային շինարարության մասնակից անելու մեջ։ Դեպի խորհրդային աշխատանքը գրավելով ավելի ու ավելի մեծ քանակությամբ անկուսակցական գյուղացիներ և նրանց ոգնելով, վոր այդ աշխատանքների մեջ վերադաստիարակվեն, զարգանան, փոխեն իրենց բնությունը, պետական գործերը վարելու համար անհրաժեշտ ունակություններ ձեռք բերեն, սովորեն հասկանալ վոչ միայն տեղական, այլ և պետական խնդիրները և այլն, բանվոր դասակարգը հենց դրանով էլ աստիճանաբար սկսում է ջնջել իր և գյուղացիության առաջավոր խավերի միջև յեղած սահմանը։ Այդ առաջավոր խավերի միջոցով գյուղացիության ուրիշ խմբավորությունները, ուրիշ խավերը կանցնեն ավելի բարձր աստիճանին և կբարձրանան դեպի ակտիվ ու գիտակից մինոր կյանք, ու կամաց կամաց, պրոլետարական դեկավարության տակ, գյուղացիությունը իր սովորություններով, իր ունակություններով, մտքերով, նպատակներով ու խնդիրներով ավելի ու ավելի սերտ կմիանա ու առաջ կընթանա բանվոր դասակարգի հետ միասին։ Ինչպես վոր կոոպերացիայի միջոցով գյուղացիական անտեսությունը պետք է ձուլվի պրոլետարիատի պետական անտեսության հետ և իրեն վերջիվերջո դառնա մի պլանային սոցիալիստական անտեսություն, այնպես էլ գյուղացիությունը իր կյանքի ամբողջ ընթացքով պետք է միանա բանվոր դասակարգին, այդ պրոցեսում փոխելով իր սեփական բնությունը և վերջիվերջո սոցիալիստական աշխատավորականի հասարակության մեջ ի մի ձուլվի բանվոր դասակարգի հետ։ Յեթե այդ պրոցեսի սկզբում բանվոր դասակարգի և գյուղացիության միջև յեղել է լայն խորխորատ, վորը բանվորին, վորպես աշխատանքի և պայքարի կոլեկտիվ ձևերի (հասարակական ձևերի) ի ծնե կողմնակցի, բաժանել է գյուղացի-

ությունից, վորպես մանր, մանրավոր տնտեսության կողմնակից, ապա կոոպերացիայի աճումով, գյուղացիության քաղաքական և ընդհանուր-կուլտուրական դաստիարակության աճումով, գյուղացիությունը հետզհետե ավելի ու ավելի կդառնա բանվոր դասակարգի նախ մի վորևե հետաքրքիր լայն շերտի նման մի բան, իսկ հետո էլ ավելի ու ավելի կմոտենա նրան, մինչև վոր յերկու դասակարգերի միջև յեղած խորխորատը վերջնականապես կլեցվի և յերկու դասակարգերն էլ ընդմիշտ կմիձուլվեն սոցիալիստական հասարակության աշխատավորների մի ընդհանուր տիպի մեջ։ Չենց դա յել կլինի—պրոլետարիատի դիկտատուրայի վոչնչացումը (մահը), վորպես անհարկավոր» մի բանի։ Բայց այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մշտական ու հաստատ քաղաքականություն, վորը ի նկատի ունենալով այդ նպատակը, իշխանաբար ուղղություն է տալիս հասարակական զարգացման ընթացքին։ Ահա թե ինչու յե հարկավոր զարգացման տվյալ աստիճանում ամբողջովին պահպանել ուղիղ քաղաքականության միակ իսկական զարանտիան, վորպիսին հանդիսանում է պրոլետարական դիկտատուրայի իրավակարգը, վորը հիմնվում է գյուղացիության վրա և այդ գյուղացիության հետ էլ դաշնակիցը է։

XII. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԵՐԸ.

Պրոլետարական դիկտատուրայի ընդհանուր ձևը — խորհրդային իշխանությունն, խորհրդային պետությունն է, վորը տարբեր և այսպես կոչվող բուրժուական դեմոկրատիայից։ Պետական իշխանության այդ ձևին հատուկ առանձնահատկությունը հանդիսանում են նրա հետևյալ տարբերող գծերը։ Ամենից առաջ՝ նա բուրժուազիայի ներկայացուցիչներին թույլ չի տալիս մասնակցելու պետական որգանների ընտրությանը։ Նա ընտրողական իրավունքները սահմանափակում է միանգամայն հակառակ ծայրից, քան այդ արվում է բուրժուական պետության մեջ, վորտեղ այս կամ այն ձևով, ուղղակի կամ անուղղակի, քողարկված կամ առանց քողարկելու իրենց ընտրողական իրավունքներից զրկվում կամ սահմանափակվում են աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչները։ Յերկրորդ, խորհրդային իշխանությունը բուրժուազիայի ներկայացուցիչների համար սահմանափակում է մի շարք «ազատություններ» կամ բոլորովին ի չիք է դարձնում այդ «ազատությունները». Նա, որինակ, արգելում է բուրժուազիայի քաղաքական կազմակերպությունները։ Նա այդ բուրժուազիային արգելում է ունենալ իր քաղաքական ու մարտական որգանները, դրանց թվում և մամուլի որգանները։ Յերրորդ, դրանց փոխարեն նա մինչև այժմ չեղած լայն չափով իսկապես իրականացնում է բանվորական կազմակերպությունների, նրանց մամուլի, նրանց ժողովների և այլն ազատությունը, դրանով էլ առաջ բերելով բանվոր դասակարգի և առհասարակ աշխատավոր մասսաների ամեն տեսակ միությունների մի չեղած ծաղկում և այդպիսով իսկապես կիրառում է աշխատավորների լայն դեմոկրատիան, վորը պարբերե ու հակասականերն է այն դեմոկրատիայի, վորը հարուստների համար է, այն դեմոկրատիայի, վորը բուրժուազիայի համար է, ինչպես հանդես է գալիս և բուրժուական յերկրներում։ Այդ դա հաճախ լինում է բուրժուական յերկրներում։ Այդ յերկրներում բանվոր դասակարգն ու գյուղացիությունը հաճախ ունենում են զանազան տեսակի ազատություններ, բայց այդ ազատությունները, իրենց ճնշող մեծամասնությամբ, ձևական (այսինքն միայն թղթի վրա, իսկ իրական կյանքում գոյություն չունեցող) բնույթ ունեն։ Որինակ, թղթի վրա կարող է ճանաչվել նաև բանվոր-

կան մամուլի ազատություն, բայց քանի վոր բոլոր տպարանները, բոլոր թուղթը, բոլոր շենքերը գտնվում են խոշոր կապիտալիստական սեփականատերերի ձեռքում, ապա բանվորական հեղափոխական մամուլը փաստորեն չի կարող տեղ գտնել. նրանց հրաժարվում են տալ անգամ այն դեպքերում, յերբ նրանց հրատարակության համար նույն իսկ նյութական հնարավորություններ կան. կամ թղթի վրա կարող ե գոյություն ունենալ ժողովների ազատություն, բայց բանվորական կազմակերպությունները չեն կարող հավաքվել՝ «հավաքվելու տեղ չունենալու» պատճառով, և այլն և այլն: Մեզ մոտ, Խորհրդային իշխանության որով, վերջինս իրականապես ավելի ու ավելի յե ապահովում այդ ազատությունները, այսինքն՝ կյանքում փաստորեն կիրառում է այդ ազատությունները, վորովհետև Խորհրդային իշխանությունը յերաշխավորում ե դրանց իրականացնելը: Նա նյութապես աջակցում ե բանվորական մամուլին, նա քաղաքներում ամենալավ շինությունները բանվորական կազմակերպությունների տրամադրության տակ ե դնում, նա առաջավոր գյուղացիներին հնարավորություն ե տալիս իրենց ակումբը կազմակերպելու՝ գյուղի ամենալավ շինությունները նրանց տալով, և այլն և այլն: Նրա փոստը տարածում ե բանվորական թերթերը, նրա միլիցիան պաշտպանում ե բանվորական հավաքույթները: Մի խոսքով, պետական իշխանության բոլոր կազմակերպությունները կյանքում իրագործում են այն, ինչ անհրաժեշտ ե հանդիսանում նոր հասարակության ակտիվ շինարարության մեջ բանվորական մասսաների ամենալայն մասնակցությունը իսկապես իրականացնելու համար:

Չորրորդ.—Խորհրդային իշխանությունը կտրված չի բանվորների և գյուղացիների կազմակերպություններից,

ընդհակառակը, նրա ամենաէական առանձնահատկությունը կայանում ե նրանում, վոր նա անմիջապես կապված ե և անմիջապես հենվում ե աշխատավոր ժողովրդի զանազան տեսակի կազմակերպությունների հսկայական ցանցի վրա, բանվորական պրոֆմիություններ, գյուղացիական կոոպերացիայի, գյուղկոմների, բանթղթակիցների և գյուղթղթակիցների կազմակերպությունների, ամեն տեսակ կամավոր ընկերություններ և միություններ վրա, և այլն և այլն: Խորհրդային իշխանությունը շարունակ բարձրացնում ե նորանոր խավեր, աշխատավոր ազգաբնակչության մինչև իսկ ամենահետամնաց խավերը: Ուրիշ նա կազմակերպում և ամեն կերպ աջակցում ե կին աշխատավորների, գեղջկուհիների զանազան տեսակի միություններին, առաջ իմպերիալիզմի կողմից ճնշված կանանց, ամենահետամնաց ազգերի կանանց՝ նրանց մեջ ամեն կերպ արթնացնելով դեպի նոր կյանք ձգտելու և այդ կյանքի կառուցմանը մասնակցելու գիտակցություն: Աշխատավոր ժողովրդի, և ամենից առաջ բանվորության: Աշխատավոր ժողովրդի, այդ բոլոր միությունների բազմաթիվ ու բազմատեսակ կազմակերպչական բջիջները ուղղակի կամ անուղղակի սերտ կապված են Խորհրդային իշխանության պրդանների հետ, նրա հետ միասին իսկապես կազմում են մի միասնական սիստեմ, վորը ընդգրկում, կազմակերպում, վերամշակում և աշխատավորության ահագին խավերը:

Կապիտալիստական ռեժիմի որով պետական իշխանությունը հենվում ե խոշոր կապիտալիստների, փոքրաթիվ խավերի առանձնացած կազմակերպությունների վրա: Յեթե նա կապված ե աշխատավորների կազմակերպությունների հետ, այդ բացառապես նրանց անբարոյականացնելու և խաբելու նպատակով ե. այդպիսի դեպքերում այդ կապի նպատակը կայանում ե

վոչ թե աշխատավորներին նոր կարգերի սահմանմանը մասնակից անելու մեջ, այլ նրանում, որ բանվոր դասակարգին և գյուղացիությանը յուր պահեն նրանց ինքնուրույն նպատակներից և դասակարգային խնդիրներից, այդ նպատակը կայանում է նրանում, որպեսզի նրանց սահման բուրժուազիայի համար ժիր աշխատելու և այդ բուրժուազիայի պետական իշխանությանը հլու հպատակվելու։

Խորհրդային ռեժիմի պայմաններում, Խորհրդային իշխանությունը ինքը՝ ըստ էության, աշխատավոր մասսաների կամքի արտահայտության գործում՝ այդ մասսաների կազմակերպության ամենալայն և ամենադարփակ ձևն է։ Յեթե մեզ մոտ պետությունը բանվոր դասակարգի պետություն է, յեթե մեզ մոտ գոյություն ունեցող դիկտատուրան պրոլետարիատի դիկտատուրան է, ապա այդ պետական ապարատի կապը՝ վոչ միայն բանվորական, այլև գյուղացիական կազմակերպությունների հետ՝ հանդիսանում է նրա նախադրյալը, հանդիսանում է այն կամուրջը, որով գյուղացիությունը ասիճանաբար անցնում է «պրոլետարիատի հայեցակետին»։

Հինգերորդ.—Խորհրդային իշխանությունը այնպես է կազմված, որ քաղաքական կյանքին մասնակցելը, որի՝ նակ, խորհուրդների ընտրողական կամպանիաներին մասնակցելը և աշխատանքն այդ խորհուրդներում հիմնովին զանազանվում է այսպես կոչված պարլամենտական ընտրություններ կամպանիաներից և այդ պարլամենտական աշխատանքին մասնակցելուց։ Բուրժուական հանրապետություններում 4 կամ 3 տարին մի անգամ, կամ այլ ժամկետով, քաղաքացիները պարլամենտի համար պատգամավորներ են ընտրում և դրանով էլ ապահովում են նրանց քաղաքական կյանքը։ Մյուս կողմից, պարլամենտի անդամը, որ իր ընտրողների կողմից չի

կարող յետ կանչվել, բացառապես հանդիսանում է վորպես պարլամենտական դրուցաբան։ Մեր պայմաններում Խորհուրդների ընտրողական կամպանիաները և այդ Խորհուրդներում աշխատելը նշանակում է նաև ընտրողների և՝ շատ ավելի մեծ չափով՝ պատգամավորների իսկական և իրական մասնակցություն պետությունը կառավարելու աշխատանքներում, քանի վոր ընտրողները այդ շինարարական աշխատանքներին մասնակցում են ընտրողական մինչև անդամ ամենաստորին բջիջներում, որինակ՝ ֆաբրիկաներում ու գործարաններում, մինչդեռ նրանց ներկայացուցիչները, պետության կամ պետական տնտեսության այս կամ այն մասը կառավարելու համար, խորհրդային որոշումներում ճիշտ նույնպես պարտադրաբար մի վորևե ղեկավար աշխատանք կատարում են, և այլն և այլն։

Կարելի յեր մի շարք նշաններ ցույց տալ, վորոնք պետության խորհրդային ձևը ամենախիստ կերպով տարբերում են պետական այլ ձևերից։ Դժվար չե տեսնել, վոր ամբողջ հին իրավակարգը, ամբողջ հին աշխարհը շրջող հիմնական դասակարգի իշխանության՝ Խորհրդային իշխանության դերը, նպատակները, խնդիրները հիմնովին հակադիր են բուրժուական պետությունների բնույթյանը, նպատակներին ու խնդիրներին։

Բայց Խորհրդային իշխանության այդ խիստ ձևը՝ իր կողմից՝ մի շարք փոփոխություններ է կրում, նայած այն պարագաներին, վորոնց մեջ աշխատավորները ստիպված են կռվել իրենց գործի իրականացման համար։

Այսպես կոչված զինվորական կոմունիզմի շրջանում, յերբ ամբողջ յերկիրը մի պաշարված բերդ եր դարձած, յերբ իշխանության ամենագլխավոր անելիքը հակահարված տալու մեջ եր կայանում, յերբ

հարկավոր եր, առաջին հերթին, արագ և կարուկ կերպով կռվով ազատվել հակառակորդից, յերբ պետք եր վոչ այնքան խորհրդածել, վորքան պետք եր, ըստ դիվորական կարգի, հրամայելով ու հրամանատարություն անելով գործել,—այն ժամանակ, միանգամայն բնական եր, վոր պրոլետարական դիկտատուրայի ձևը դիվորական պրոլետարական դիկտատուրայի ձևն եր։ Խորհրդային իշխանության լայն որգանները, խորհուրդների պլենումները վաստորեն, իրական կյանքում համարյա թե մեռել եյին, և դեկավարությունը անցել եր բացառապես գործկոմների նախագահությունների, այսինքն՝ նեղ-սահմանափակ կոլեգիաներին—«յեռյակներին», «հնգյակներին» և այլն։ Շատ հաճախ, մանավանդ թշնամու կողմից գրաված վայրերին մոտ տեղերում, կամ այնպիսի վայրերում, վորոնք թշնամու սպառնալիքի տակ եյին գտնվում, Խորհրդային իշխանության «կանոնավոր» որգանների, այսինքն՝ ամբողջ աշխատավոր ազգաբնակչության կողմից ընտրված որգանների փոխարեն իրապես ստեղծվում եյին այսպես կոչված տեղական «հեղափոխական կոմիտեները» (հեղկոմները), վորոնք հարցը մասսաների քննության և աշխատավորների լայն շրջանների նախնական վճռին հանձնելու փոխարեն, գործում եյին միանգամայն ինքնուրույն։ Խորհուրդների իշխանության այդ ձևը, իհարկե, չդադարեց աշխատավորների շահերի արտահայտությունը լինել. նա անհրաժեշտ եր այդ շրջանի համար, նա նպատակահարմար եր այն ժամանակվա համար, յերբ հարկավոր եր մինչև մինիմում կրճատել ամեն տեսակի զրուցարանները, ամեն տեսակի դիսկուսիաները, յերբ հարկավոր եր յերբեմն միառժամանակ նույն իսկ թողնել մասսաների դաստիարակության խընդիրը, իսկ յերբ հարկավոր եր գործել, պետք եր գործել ու մեծ յեռանդով գործել աշխատավոր ժողովրդի թշնամիների դեմ, զինված պայքարի դաշտում։ Այն ժամանակվա շրջանում՝ այդ դիվորական-պրոլետարական դիկտատուրայի իրավակարգի հետ կապված՝ բացակայում եյին ճիշտ կերպով վորոշված և խիստ գործադրման յենթակա որենքները, վորոնք մեծ մասամբ փոխարինվում եյին հրամաններով և կարգադրություններով, նայած պատերազմական պարագաներին։

Բռնագրավումների ու ռեկվիզիցիաների մեթոդները այն ժամանակ բոլորովին սովորական մեթոդներ եյին։ Այդ բոլորը բղխում եր բանվոր դասակարգի և գյուղացության շնչին փաթաթած քաղաքացիական անհրաժեշտությունից, անողոք պատերազմից, վորը տարվում եր տանջալից դժվար պայմաններում։

Անցնելով խաղաղ ժամանակին, մանավանդ անցնելով մեր յերկրի տնտեսական վերելքին, միանգամայն բնականաբար պետք ե նորից փոխվի Խորհրդային իշխանության ձևը՝ զինվորա-կոմունիստական շրջանի մնացորդների վերացման ու վոչնչացման իմաստով։

Հեղափոխական որինականությունը պետք ե իրենով փոխարինե վարչական կամայականության բոլոր ծնացորդներին, թեկուզ նույնիսկ հեղափոխական կամայականության ծնացորդներին։ Խաղաղ շինարարության շրջանում, յերբ առաջին պլանում դրված ե տնտեսական գործնեությունը, ամեն մի անսխալական, կամայական, պատահական, չնախատեսված միջամտություն տնտեսական կյանքի ընթացքի մեջ, կարող ե վերին աստիճանի ցավալի ազդեցություն ունենալ այդ տնտեսական կյանքի վրա։ Ամենից առաջ սկսենք գյուղացիական տնտեսությունից։ Մենք լինքներս ասում ենք, գրում և գյուղացիության դեմում՝ գյուղացիական տնտեսության մեջ գործերը ավելի ճիշտ յեղանակով տանելու անհրաժեշտու-

թյան մասին. մենք առաջարկում ենք յեռադաշտյան սիստեմից անցնել բազմադաշտայնին, մենք առաջարկում ենք հողագործության ու կենդանաբուծության մի շարք բարելավված միջոցներ, մենք խոսում ենք անտեսության բոլոր ելեմենտների լավ հաշվառման կարևորության մասին, նրանց ավելի լավ, ավելի նպատակահարմար և ուղիղ ոգտագործման մասին. մեր ագիտպրոպագանդան ամբողջովին այդ տեսակ առաջարկություններով է համակված, և գյուղացիությունը, մանավանդ նրա ավելի գիտակից, ավելի կուլտուրական խավերը, այսպես կոչված «առաջավոր գյուղացիները», ուրախությամբ են գնում այդ ճանապարհով։ Բայց յեթե մենք գյուղացուն առաջարկում ենք լավ հաշվի առնել այն բոլորը, ինչ կա նրա տնտեսության մեջ, և այդ հաշվի առնվածը ավելի լավ ոգտագործել, ապա ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ամեն մի կամայականություն և ամեն մի չնախատեսված բան, վոր առաջ է գալիս Խորհրդային իշխանության կողմից, խիստ հակասում և ընդհարվում է մեր սեփական պրոպագանդի և անտեսությունը կանոնավոր տանելու պահանջի հետ։ Յեվ իսկապես, գյուղացին ի՞նչպես կարող է իմանալ, թե նա ի՞նչ պետք է անի և ի՞նչպիսի ծախսեր պիտի անի, յեթե նա, որինակ, բոլորովին ճիշտ կերպով չգիտե, թե ինչպես և ինչ ժամանակամիջոցներում պետք է մացնի գյուղատնտեսական հարկը։

Նա ի՞նչպես կարող է կանոնավոր տանել իր տնտեսությունը, յերբ նրա գլխին կարկի նման կարող են թափվել բոլորովին չնախատեսված կարգադրություններ, և յեթե չկա հաստատուն, նախորոք հայտնի որենքների սիստեմ, վորոնք պետք խստությամբ և անպայման կատարել։ Այդ նոր պարագան հիմնովին տարբերվում է քաղաքացիական պատերազմի ժամանակվա պարագայից և իշխանաբար պահանջում է կառավարելու ամբողջ գործի ճիշտ դրում. նա պահանջում է կառավարելու մի այնպիսի ձև, վորը հենվեր նախորոք հայտնի որենգրական վորոշումների վրա, վորոնց կարելի յե նախորոք նկատի ունենալ և հաշվի առնել։ Դրա համար էլ՝ հեղափոխական որինականության, Խորհրդային իշխանության որենքների ճիշտ կատարմանը, վարչական կամայականությունների միացորդների կտրուկ և անվերապահ վոչնչացմանը անցնելը կազմում է մեկը այն հիմնական գծերից, վորոնք բնորոշ են մեր հեղափոխության զարգացման նոր ժամանակաշրջանի համար։

Մասսաներին Խորհրդային աշխատանքներին մասնակից անելը նաև ներկայումս շատ ավելի անհրաժեշտ խնդիր է դառնում, քան նախընթաց շրջանում եր։ Աշխատավորներին, դրանց թվում և գյուղացիության բացառապես բոլոր խավերի ընդհանուր կուլտուրական վերելքը և քաղաքական ակտիվության աճումը, շա՛տ ավելի ազատ ժամանակ ունենալը՝ քան առաջ եր՝ քաղաքացիական տանջալից պատերազմի տարիներում, անտեսական աճման հետ միաժամանակ նյութական դրության բարելավումն—այդ բոլորը ստիպում են Խորհրդային իշխանությանը ավելի մեծ ուշադրություն դարձնել ամենախոշոր և ամենաազնիվ խնդրի վրա—աշխատավոր ապագաբնակչության ավելի լայն մասսաներին մասնակից անելու պետական գործերին։ Պետք է նկատի ունենալ, վոր այժմվա պայմաններում, բանվոր դասակարգի համար ավելի քան յերբևիցե անհրաժեշտ է գյուղացիության արթնացած էներգիան շրջել այն ուղղությամբ, վոր սոցիալիստական շինարարության դաշինքը։ Յեվ հենց նրա համար, վորպեսզի կարելի լինի ամրապնդել դեկավարությունը բանվոր դասակարգի կողմից, ներկայումս, այսինքն «խաղաղ կազմակերպչական» շրջանում, անհրաժեշտ է գործադրել բո-

լոր ջանքերը, անհրաժեշտ է անել այն բոլորը, ինչ հնարավոր է՝ գյուղացիությունը հարկավոր վոգով վերամշակելու համար։ Գյուղացիության այդ տեսակի դաստիարակության համար կարևորագույն միջոց է հանդիսանում այդ գյուղացիությանը, ի դեմս նրա անկուսակցականառաջավորներին, մասնակից անել նախ և առաջ մեր խորհրդային որգանների աշխատանքներին։ Հենց այդտեղ, այդ աշխատանքների ընթացքում է, վոր կսովորեն հասկանալ ընդհանուր-պետական խնդիրները, և կկատարվի այդ վերամշակումը. իսկ մյուս կողմից, միայն այդ միջոցով, այսինքն թե գյուղում և թե քաղաքում լայն մասսաներին խորհրդային որգանների աշխատանքներին մասնակից անելու միջոցով, կարելի կլինի մեծ հաջողությամբ պայքար մղել բյուրոկրատիզմի դեմ, մի վերքի, վորը մինչև այսոր էլ կրծում է մեր պետական որգանիզմը։

Վերջապես, մեր խորհրդային որգաններում աշխատողների ավելի ակտիվ կորիզի, այսինքն այդ որգանները ղեկավարող մեր կուսակցության անդամների համար ընթացիկ շրջանում անհրաժեշտություն է ներկայացնում՝ հրամանատարություն անելու և հրամանները արձակելու մեթոդներից ամենակարուկ կերպով միանդամայն և առանց այլևայլության անցնել հասկացնելու համոզելու մեթոդներին։

Միջոցների այդ ամբողջ սիստեմը կծառայե խորհրդային սիստեմի՝ վորպես պետական իրավակարգի առանձին ձևի՝ ամրացման և զարգացման գործին, և ավելի ու ավելի կապահովի աշխատավոր մասսաների ամենալայն խավերի աճումը (նյութական, քաղաքական և ընդհանուր-կուլտուրական)։

Առհասարակ կարելի յե ասել, վոր քաղաքական իրավակարգը լա՛վ է նրանով, վոր, պատմական անցյալի հետևանքով, մի քայլ դեպի առաջ է անում և ավելի

մեծ քանակությամբ մարդկանց է հնարավորություն տալիս աճելու։ Կապիտալիստական իրավակարգը այդ հնարավորությունները սահմանափակում է ընտրյալների խավով—բուրժուազիան, բուրժուական ինտելիգենցիան, կալվածատերերը և այլն։ Աշխատավորության ահագին մասսաները դուրս են մնում այդ շարժության մից։ Կապիտալիստական ռեժիմի որով աշխատավոր մասսաների համար, այսինքն մարդկության հիմնական մասայի համար, հնարավորություն չկա բարձրանալու, ավելի ու ավելի բարձր աստիճանների անցնելու։ Ցերեկ ու հրդային իշխանությունը մենք գնահատենք այդ տեսակետից, ապա մենք հեշտությամբ կտեսնենք, վոր նա իրենից ներկայացնում է մինչև այժմ գոյություն ունեցող պետական իշխանության բոլոր ձևերից ամենալավձևը։ Բանը նրանում չե, վոր մենք արդեն հասել ենք նրան, ինչին ուզում էլինք հասնել (մենք միայն առաջին քայլերն ենք անում դեպի սոցիալիզմը և դեպի ժողովրդական տոորին խավերի կուլտուրական անսովոր բարձրացումը). բանը նրանումն է, վոր հասարակական զարգացման ղեկը շրջենք դեպի այդ կողմը, իսկ այդ ղեկը, վորը իրենով վորոշում է այդպիսի չտեսնված կուլտուրական վերելքի և դեպի սոցիալիզմը շարժվելու հնարավորությունը, հանդիսանում է խորհրդային իշխանությունը։

XIII. ԵԿՈՆՈՄԻԱԿԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱ ՊԱՏՃԱՌՈՒՄԸ.

Կոմունիստական իրավակարգը մարդկային հասարակության զարգացման ամենաբարձր աստիճանն է, վորի որով այդ հասարակության արտադրողական ուժերը, բնության վրա մարդու ունեցած իշխանության աստիճանը շատ ավելի՛ յե գերազանցում տեխնիկական զարգացման

մինչև իսկ այն աստիճանից, որով յուր ծագկման շրջանները՝ աչքի յե ընկել կապիտալիստական իրավակարգը· իսկ դրա հետ միասին, կոմունիստական հասարակութիւնը իրենից ներկայացնում է տնտեսական մի այնպիսի կազմակերպութիւն, ուր մարդկանց միջև տիրապետում է կատարեալ հավասարութիւն և ուր բացակայում է մարդու կողմից մարդուն շահագործելու վորևե ձև, ինչպես և ամեն տեսակ հրամանատարութիւն անելը, մարդկանց մի գրուպպայի կողմից ուրիշ գրուպպաների վրա գործադրվող բռնութիւն։ Բավական է միայն համեմատել այդ դրութիւնը մարդկային հասարակութեան այն դրութեան հետ (վորը մենք վորպես ժառանգութիւն ստանում ենք կապիտալիստական իրավակարգից), վորպեսզի կարելի լինի հասկանալ, թե իսկապես ի՛նչ հսկայական աշխատանք պիտի կատարել (մի այնպիսի աշխատանք, վորը բավեր մի շարք տասնամյակների համար), վոր կարելի լինի բարձրանալ մարդկային զարգացման այդ բարձր աստիճանը։ Դրա համար էլ միանգամայն հասկանալի յե, վոր բանվոր դասակարգի կողմից իշխանութիւնը գրավելուց ընդամենը մի քանի տարի հետո՝ մտածել անգամ չի կարելի առհասարակ ամեն տեսակ անհավասարութեան և ազգատութեան միանգամից վոչնչացման մասին։ Բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ է ամեն կերպ արագացնել դեպի կոմունիզմը տանող մեր ճանապարհը, իսկ դրա համար, իր հերթին, անհրաժեշտ է կատարյալ պարզ պատկերացում ունենալ այն մասին, թե ի՛նչպես պետք է աստիճանաբար պարտավի մեզ մոտ մինչև հիմա յեղ գոյութիւն ունեցող մարդկային անհավասարութիւնը։

Հերթով քննենք մեզ մոտ եկոնոմիկայի բնագավառում գոյութիւն ունեցող այդ անհավասարութեան դլխավոր տեսակները։ Ամենից առաջ աչքի յե ընկնում քաղաքի և գյուղի միջև գոյութիւն ունեցող նյութական պայմանների անհավասարութիւնը։ Նախընթաց գլուխներում մենք արդեն գրել ենք այն մասին, վոր արտադրութեան կապիտալիստական յեղանակը առաջ է բերում գյուղի հետամնացութիւնը, խանգարում է գյուղատնտեսութեան զարգացմանը՝ արդյունաբերութեան համեմատութեամբ, և քաղաքը զարձնում է կյանքի բոլոր հիմնական հարմարութիւնների բացառիկ կենտրոնացում։ Քաղաքի և գյուղի այդպիսի հարաբերութիւն և ժառանգութիւն ընկնում իշխանութիւնը գրաված բանվոր դասակարգին և նրան աջակցող գյուղացիութեանը։

Գյուղացու մանը տնտեսութիւնը վերին աստիճանի յետ է մնում ժամանակակից՝ տեխնիկապես կատարելագործված ֆաբրիկայից։ Մանր գյուղացիական տնտեսութիւնը նույնպես յետ է մնում այդ ֆաբրիկայից նաև իր ներքին կառուցվածքով ու աշխատանքի կազմակերպութեամբ։ Դրա հետևանքով այդ մանր գյուղացիական տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականութիւնը վերին աստիճանի ծանր է լինում, ստիպված են լինում ահագին աշխատանք թափելու՝ համեմատաբար չնչին հետևանք ստանալու համար։ Քաղաքի ու գյուղի այդ տեսակ անհավասարութիւնը ի՛նչպիսի միջոցներով կարելի յե վերացնել։ Բոլորովին անմիտ բան կլիներ՝ այդ անհավասարութիւնը լուծել արհեստական ճանապարհով, մի հարվածով, մի վորևե միջոցով։ Իհարկե, կարելի յե պատկերացնել մի այսպիսի վայրենի միտք՝ բոլոր մեծ քաղաքները, քաղաքային բոլոր ձեռնարկութիւնները, ելեկտրական կառուցվածքները քար-քարի յետևից քանդել ու ցրել և այլն։ Բայց չե՞ վոր դա ամենևին չէր դրսեի բանը։ Ամենից առաջ նրա համար, վոր դրան կհետևեր քայքայումն ու ավերումը խոշոր արդյունաբերութեան, վորը, ինչպես մենք տեսանք, հիմնական աղբյուրը և ծառայում հենց իրա՝ գյուղական տնտեսութեան համար, տալով նրան մեքենաներ,

աշխատանքի գործիքները, և գյուղատնտեսական արտադրության բարելավման համար մի շարք այլ էրեր, ինչպես նաև գիտությունը, որը գյուղատնտեսական արտադրության բնագավառում ավելի ու ավելի է վճռական ուժ հանդիսանում։ Այդ տեսակ միաքը իսկապես մի խելագար միաք կլիներ, և վողջամիտ մարդիկ պետք է միանգամից դեն շպրտեյին նման վորևե միաք։ Ընդհակառակը, միանգամայն բնական է հանգել այն յեզրակացության, վոր միայն բանվոր դասակարգի, գյուղացիության այդ հավատարիմ ոգնականի կողմից ղեկավարվող քաղաքային արդունաբերության ոգնությա՛մբ կարելի կլինի բարձրացնել գյուղը. վոչ թե քաղաքների ավերումով, այլ արդյունաբերությունը գյուղին մոտեցնելու միջոցով և այդ գյուղին տնտեսական ու տեխնիկական ոգնություն ցույց տալու միջոցով մենք աստիճանաբար կցնենք այն վիրը, վորը գյուղի և քաղաքի մեջ ստեղծել է մարդկային հասարակության զարգացման նախընթաց ամբողջ պատմությունը։ Բանվորական կուսակցության և Սորհրդային իշխանության անելիքը հանդիսանում է քաղաքի և գյուղի միջև յեղած հենց այդ հակասությունը վերացնելու մեջ։ Մենք պետք է աստիճանաբար նոր գործարաններ, ելեքտրոկայաններ և նման արդյունաբերական խոշոր արտադրական միավորներ կառուցենք վոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում և գյուղակներում, տարածելով այդ ձեռնարկությունները ամբողջ յերկրում և նրանց դարձնելով կուլտուրայի, զրագիտության, տեխնիական բարելավման, յերկրի գյուղացիական ազգաբնակչության քաղաքական գիտակցության տնկարաններ և ոջախներ։

Քաղաքի տեխնիքական ոգնությունը, մանավանդ ելեքտրոֆիկացիան և դրա հետ միասին գյուղացիական տնտեսության կոոպերացումը, վորը, ինչպես մենք ար-

դեն գիտենք, մեր գյուղում վորոշում է դեպի սոցիալիզմը տանող հիմնական ճամբան, հանդիսանում է գյուղի վերելքի, գյուղի ծաղկման ուժեղ լծակը. և կամաց կամաց քաղաքի և գյուղի նյութական պայմանները կհավասարվեն՝ մեծ ոգուտ բերելով թե մեկ և թե մյուս կողմերի համար։ Ժամանակակից քաղաքների քարե պարկերում վակված բնակիչը, վորը բնությունն չի տեսնում և վորը՝ չնայած իր նյութական հարաբերական բարեկեցությանը՝ այդպիսի պայմաններում դատապարտված է այլասերման, միայն ոդո՛ւտ կստանա՝ այդ բնությանը մերձենալով։ Յեվ ընդհակառակը, գյուղի բնակիչը շատ բան կշահի ա՛յն բանից, վոր նրա աշխատանքի արտադրողականությունը կբարձրանա, և վոր նա վերջապես կոգտվի կուլտուրայի և քաղաքակրթության այն բոլոր բարիքներից, վոր առաջ միմիայն մեր քաղաքաբնակների բաժինն էր կազմում։ Ինքնին հասկանալի է, վոր այդպիսի հասարակարգի հասնելու համար անհրաժեշտ է անգին փոփոխություններ կատարել, վոր հնարավոր է միայն յերկար ու յերկար տարիների ընթացքում։ Բայց, այնուամենայնիվ, մենք արդեն այժմ էլ տեսնում ենք, թե ինչպես մենք բռնել ենք այդ ճանապարհը։

Քաղաքի ներսում, իր հերթին, նույնպես վերին աստիճանի խիստ և աչք ծակող անհավասարություն կա տեսնում։ Բավական է միայն համեմատել նեպմանների և նրանց կյանքի մակարդակը՝ անխնամ ու սովալուկ յերեխաների կյանքի հետ, կամ նույնիսկ գործազուրկների ամբոխների կյանքի հետ, վորպեսզի կարելի լինի տեսնել, թե դեռ վորքա՜ն ենք հեռու այն լիզեալական դրությունից, վորը մենք մեզ համար նպատակ ենք դրել։ Յեթե կյանքի գանազան մակարդակները մենք շրջենք նրանց հետզհետե ցածրացող մեծությունների կարգով, ապա կստանանք միմյանցից բավականին պիրկ կեր-

պով տարբերվող մի ամբողջ սանդուղք։ Յեթե վերցնենք միայն խոշոր առորաբաժանումները, ապա այդ բոլոր կարգերը կարելի յե մոտավորապես այսպես պատկերել.

1) Նոր բուրժուազիան (նեպմանները), որ շահ է տանում՝ ուրիշի աշխատանքը շահագործելով, թեկուզ դա լինի արդյունաբերական ձեռնարկությունից ստացած շահ, թեկուզ առևտրական շահ, կամ սպեկուլյացիայից ստացած շահ, կամ վորևե տեսակի՝ այսպես կոչվող «անաշխատ յեկամտի» շահ։ Շատ հաճախ այդ կատեգորիային պատկանող մարդկանց կյանքի մակարդակը հավասար է այն մակարդակին, որը բնորոշ է մինչ-պատերազմյան ժամանակի վոչ այնքան խոշոր կապիտալիստների համար։

2) Ծորհրդային բարձր ծառայողները, դրանք խավորապես տնտեսական հիմնարկությունների ու տնտեսական որգանների ծառայողները (տրեստների դիրեկտորները, սինդիկատների վարչությունների անդամները, խոշոր անվոխարինելի սպեցները և այլն)։

3) Այսպես կոչվող պատասխանատու աշխատակիցները (ընդհանուր առմամբ)։

4) Վորակյալ բանվորները։

5) Վոչ-վորակյալ բանվորները։

6) Գործազուրկները, լումպենպրոլետարիատը (ճանապարհից շեղված մարդիկ, քրոնիկական գործազուրկները, մուրացկանները և այլն։)

Այդ ամբողջ պատկերը մեզ նորից ե ցույց տալիս, թե մենք դեռ վորքան հեռու ենք այդ հավասարության հասնելու, գոնե քաղաքի տեմպերում, վորը առայժմ հանդիսանում ե մեր աշխատանքի կենտրոնը և վորտեղ ամենից սուր ե արտահայտվում պրոլետարիատի տիրապետությունը։ Յեվ այնուամենայնիվ մենք արդեն պարզ տեսնում ենք, վոր մեր կուսակցության և Ծորհրդային իշխանության կողմից ուղիղ քաղաքականություն տանելու դեպքում, մեր հասարակության զարգացման ընթացքը կտեղի այդ հակասությունների մեղմացումն, նրանց պարտասումն ու վոչնչացումը։ Յեվ իրոք, վերցնենք ամենից առաջ անհավասարության ամենացայտուն արտահայտությունը— բուրժուազիայի (նեպմանների) նյութական դրության և բանվոր դասակարգի դրության անհավասարությունը ընդհանուր առմամբ։ Ի՞նչպես պետք է վերացվի այդ անհավասարությունը։ Դա դժվար չե հասկանալ այն բոլորից հետո, ինչ մենք արդեն ասել ենք։

Զե՞ վոր մեր պետական տնտեսության, ինչպես և կոոպերացիայի վերելքը պետք է ուղեկցվի տնտեսության մասնավոր-ձեռնարկատական ձևը դուրս մղելով։ Մինչ այն ժամանակ, յերբ այդ ձևերը միանգամայն կվոչնչանան և կմեռնին՝ տեղի տալով տնտեսական սոցիալիստական հարաբերությունների ծավալվող հաղթական ընթացքին, պետական արդյունաբերության վերելքը կբարձրացնի բանվոր դասակարգի աշխատավարձը՝ մի կողմից, և մյուս կողմից՝ տուրքաղրության սիստեմը կսահմանափակի նոր բուրժուազիայի կյանքի մակարդակի հետագա աճումը։ Մասնավոր կապիտալիստական տնտեսությունը վերջնականապես արտաքսելը, նրա վրա տարած վերջնական հաղթությունը գործը կհասցնի մինչև վերջ և այդ հիմնական հակասությունը, քաղաքներում գոյություն ունեցող այդ հիմնական անհավասարությունը այդպիսով կվոչնչացվի։ Բավական բարդ ե, մի կողմից՝ խորհրդային ծառայողների ու ղեկավարների բարձր կադրերի, և մյուս կողմից՝ մշչին բանվորների անհավասարությանը վերաբերող հարցը։ Ծորհրդային իշխանության այդ բարձր և պատասխանատու ծառայողների թվում, բացի ամեն տեսակի մասնագետներից, կան նաև նախկին բանվորներ, վորոնք ավելի տաղանդա-

վոր և կուլտուրական «առաջավոր - բանվորներից» են։ (Որինակ, կարմիր դերեկտորները, և այլն)։ Միանգամայն ակնբախ է, վոր այդ անհավասարությունը, յուր ամենախոր հիմքում, բղխում է բանվորական մասսաների կուլտուրական հետամնացությունից, մասսաների, վորոնք կապիտալիստական հասարակության մեջ յեղել են շահագործվող, քաղաքականապես ճնշված և կուլտուրապես ճմլված դասակարգ։ Տնտեսությունը կառավարելու բարդ աշխատանքի, ինչպես և յերկրի կառավարչության ուրիշ բնագավառներում նման մի շարք աշխատանքներ ատնելու համար անհրաժեշտ է գիտություն, փորձառություն և կարողություն մեծ պաշար։ Համեմատաբար քիչ է բանվոր դասակարգից դուրս յեկածների թիվը, վորոնք ընդունակ դարձան այդպիսի դեր կատարելու և վորոնք այդ բանը սովորել են հեղափոխության ընթացքում, մասամբ էլ՝ փորձառություն են ձեռք բերել մասսաներ ղեկավարելով կամ քաղաքական պայքարի մեջ։ դեռ մինչև բանվոր դասակարգի հաղթությունը։ Միանգամայն հասկանալի յե, վոր բանվորական վո՛չ ամբողջ մասսան է, վոր կարող է բարձրանալ մինչ այդ աստիճանը։ Մյուս կողմից՝ զանազան տեսակի մասնագետները, վորոնք մասնագետներ են յեղել դեռ կապիտալիստական ռեժիմի որով և շահագրած են գիտական, վարչական տըրնտեսական և այլ տեսակի մեծ փորձառություն ու ժամանակակից պայմաններում՝ թե կյանքում և թե մարդկանց կառավարելու գործում անհրաժեշտ են,—ճիշտ նույնպես վորոշ չափով անփոխարինելի ուժեր են հանդիսանում. բանվորական մասսան, ամբողջովին վերցրած, իր բազմացուցիչ բոլոր մասերով, կարճ ժամանակամիջոցի ընթացքում չեր կարող հասնել այդպիսի կուլտուրական բարձր աստիճանի։ Իսկ նման աշխատանքների կատարումը պահանջում է բավական խոշոր վարձատրություն, վոր

ապահովե համապատասխան ապրուստը։ Մինչդեռ արտադրական ուժերի զարգացման այժմվա աստիճանում բանվոր դասակարգի կատարելապես բոլոր խավերին այդպիսի վարձատրություն տալը անհնարին է և անիրագործելի։ Յեթե բոլոր բանվորներն էլ կուլտուրական այդպիսի մակարդակ ունենային, ապա դեկավար պաշտոնները կարելի կլիներ ստանձնել հերթով կամ միայն վորոշ ժամանակով և այդպիսով՝ այսպես կոչվող «պատախանատու պոստերում» շարունակ կանգնած կլինեին նորանոր գործիչներ, քանի վոր ամեն տեսակի գործնեության մեջ հարկավոր ժամանակ կարելի կլիներ մեկնելի վոխարինել մի ուրիշով։ Բայց հենց այստեղ է, վորտեղ գալ է տալիս կուլտուրական մակարդակի անհավասարությունը և մասսաների խիստ հետամնացությունը։ Այստեղ կրկին հարկավոր է նկատել, վոր դա բոլորովին այդ մասսաների մեղքը չէ, այլ նրանց դժբախտությունը. նրանց այդպես են դարձրել կապիտալիստական կարգերը։ Սակայն բանվոր դասակարգը, վորը հեղափոխության տարիների պայքարի ընթացքում չափազանց արագ է սովորում սոցիալիզմի նպատակների մեջ ավելի մեծ մասնակցություն և տնտեսության ցույց տալ, ինչպես և հետզհետե ավելի ու ավելի յե սովորում հատուկ հիմնարկություններում (բանվորական զանազան տեսակի կազմակերպություններում, կոմիտեներում, կուսակցական և խորհրդային դպրոցներում, բանֆակներում և մինչև անգամ բարձրագույն դպրոցներում), ահա այդ բանվոր դասակարգի անելիքն է հանդիսանում՝ իր սեփական միջավայրում այդ ձևի հետամնացության պարտությունը։ Հասկանալի յե, վոր բանվոր դասակարգի ամբողջ մասսան չէ, վոր իր բոլոր խավերով կատարելապես մի ժամանակ է շարժվում։ Ինչպես վոր, ժամանակակից պայմաններում, վո՛չ

բոլոր բանվորներն են կարող կանգնել ղեկավար պաշտոնների և կառավարելու սիստեմում կատարելագործման միտեսակ տեղեր բռնել, ճիշտ այնպես էլ, հասկանալի պատճառներով, գլխավին բոլոր բանվորները չեն, որ կարող են անցնել միջին և բարձր դպրոցները։

Ժամանակակից գիտության ու տեխնիկայի շատ քիչ բարձր մակարդակի վրա բանվոր դասակարգը բարձրանում է խումբ-խումբ, որոնց տարեց-տարի ավելանում են նորանոր խմբեր, մինչև որ մեր յերկրի արտադրողական ուժերի զարգացումը բավական հաստատ եկոնոմիական հիմք կստեղծի, որպեսզի բոլոր բանվորների յերեխաները միանգամայն նորմալ յեղանակով անցնեին միջնակարգ և բարձրագույն դպրոցները, ձեռք բերելին համապատասխան պրակտիկա և այդպիսով կյանք մտնեին՝ պարտաւելով աշխատավորների միջավայրում հնուց ստեղծված կուլտուրական ամեն տեսակի անհավասարությունն։

Այն ամենը, ինչ մենք ասացինք առաջավոր, ավելի կուլտուրական բանվորների, ինչպես նաև, մի կողմից՝ նախկին մանուֆակտուրների և մյուս կողմից՝ առհասարակ բանվորական մասսայի միջև յեղած զանազանության մասին, այդ նույնը նվազ չափով կարելի յե ասել և բանվոր դասակարգի զանազան խավերի մեջ յեղած անհավասարության հարցի մասին՝ զանազան խավերին պատկանելը հասկանալով աշխատանքի տարբեր կվալիֆիկացիայի իմաստով (օրինակ, մի կողմից՝ մետաղագործները, մյուս կողմից՝ հողափորները, կառուցող բանվորները և այլն)։ Պորհրդային իշխանության, խորհրդային ուժիմի մեխանիկան, պրոլետարական դիկտատուրայի ամբողջ քաղաքականության ուղղությունը ընդհանուր առ-

մամբ կայանում է հենց նրանում, որ բանվորական լայն մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելով, հենց դրանով էլ վերացնի բանվոր դասակարգի առաջավոր խավերի «անփոխարինելիությունը», վերացնի կուլտուրական մակարդակների զանազանությունը, վերացնի գոյության նյութական պայմանների զանազանությունը։ Ի հարկե, մենք յերբեք չենք մանների զանազանությունը։ Ի հարկե, մենք յերբեք չենք հանի մարդկանց կատարյալ հավասարության այն իմաստով, որ մարդիկ իրենց խելքով, իրենց տաղանդավորությամբ, իրենց մազերի գույնով կամ քթի ձևով բոլորովին միատեսակ լինեն, և դա բոլորովին էլ հարկավոր չէ։ Այդպիսի հավասարությունը, ինչպես ջրի յերկու կաթիլը, մի պահ անգամ կլիներ։ Մեր ձգտումների սահմանը դրա մեջ չի կայանում։ Մեր ձգտումների նպատակը դրա մեջ է կայանում, որպեսզի հասնենք դադարի կայանում է նրանում, որպեսզի հասնենք դադարի հասարակական պայմանների հավասարության, որպեսզի բոլորի համար ապահովենք հավասար պայմաններ, և այդպիսով հնարավորություն տանք ամբողջ մասսային հնարավորություն տանք յերաշխավորելու, հնարավորություն տանք յերաշխավորելու, որ բացի «արտադրած մարդկանց», (մյուսներից բաժանված) նեղ շրջանից դուրս կգան ավելի տաղանդավորներին և ընդունակ ավելի տաղանդավորներին և ընդունակ նախնիներին, այլ աշխատավոր մարդկության ահագին մեծամասնությունից դուրս յեկած նրերին։

Յեվ այստեղ դժվար չէ հասկանալ, որ այդ խոչընդոտներից բղխող անհավասարությունը չի կարող վերացվել մի հարվածով։ Ի հարկե, կարելի եր մի գեղեցիկ օր դեկրետ հրատարակել, որի համաձայն խորհրդային իշխանությունը, բոլոր բնաժեներները, բոլոր բարձր ծառայողները, բոլոր ինժեներները, բոլոր պրոֆեսորները, ուսուցիչների բոլոր դիրեկտորները և այլն

սահնայինն այնքան, որքան սահնում է որավարձով աշխատող մի հասարակ բանվոր։ Բայց մենք շուտով կհամոզվեյինք, որ իրերի այդ դրության մեջ բանվոր դասակարգը ընդհանուր առմամբ չեր շահի, այլ կվնասվեր, նա կվնասվեր նրա՝ համար, որ այդպիսի պայմաններում աշխատանքը այդ ղեկավար պաշտոններում ավելի սահմանափակ, ավելի դանդաղ կերթար, գործի ընթացքը խոշոր չափով կխանգարվեր, և ընդհանուր հաջողությունը կփոխարինվեր կանգ առած դրությամբ և հետադարձ շարժումով։ Բանվոր դասակարգի համար ձեռնտու է ավելի լավ պահել իր սեփական ղեկավար մասը, ինչպես և բուրժուական աշխարհից դուրս յեկածներին՝ այսպես կոչված մանագետներին, որովհետև այդպիսի դեպքում նա ավելի կարճ ժամանակամիջոցում և հանելու արտադրողական ուժերի ընդհանուր բարձրացման, և ի հաշիվ այդ բարձրացման կարող է ավելի արագ բարելավել իր սեփական դրությունը, իսկ որոշ ժամանակից հետո, ոգտագործելով արտադրողական ուժերի այդ զարգացումը, կարող է սկսել ավելի ուժեղ չափով արտադրել «զարգացած մարդիկ» իր սեփական դասակարգի ավելի լայն մասանեերից և ընդհանրապես աշխատավորներից։ Իհարկե դրանից չի հետևում, որ բարձր վարձատրություն տալու հարցում պետք է համը հանել, ընդհակառակը, նման չափազանցությունների դեմ կուսակցությունը պետք է համառ կռիվ մղի։

Գյուղի ներսում ևս մենք նույնպես ունենք գյուղացիության զանազան խավեր, որոնց կյանքի մակարդակը միմյանցից զանազանվում է բավականին սլերկ կերպով։ Բավական է կուլակին համեմատել բատրակի կամ աղքատ գյուղացու հետ։ Բայց այդ հիմնական հակասությունը, որ բնորոշ է ժամանակակից գյուղի համար, կվերացվի նույնպես հետզհետե, դանդաղ, այն չափով,

ինչ չափով որ կզարգանան արտադրողական ուժերը, ինչ չափով որ կբարձրացվի պետական և կոոպերատիվային տնտեսությունը։ Մենք արդեն վերը տեսանք, որ մենք ավելի ու ավելի սլիտի կարողանանք ոգնություն ցույց տալ միջին և չքավոր գյուղացիների տնտեսությանը, և չքավոր գյուղացիները կդադարեն չքավոր լինելուց, իսկ մյուս կողմից, մենք մի շարք այլ միջոցներով կկրճատենք ու տնտեսավարական ձևով դուրս կքշենք գյուղացիության ձեռնարկողական խավերը, այսինքն գյուղատնտեսական բուրժուազիային։ Այդպիսով, այստեղ ևս մեր հիմնական դիծը մի որոշ ժամանակից հետո, յերբ կսկսեն ավելի արագ աճել մեր տնտեսության սոցիալիստական ձևերը, հանդիսանում է այն դիծը, որ տանում է դեպի ներկայումս գոյություն ունեցող եկոնոմիական անհավասարության վերացումը, պարտասումը։

Պետք է տեսնել կապիտալիստական հասարակակարգից մեզ ժառանգություն մնացած անհավասարության, զրկանքների և կուլտուրական հետամնացության ամբողջ խորքը, որպեսզի կարելի լինի հասկանալ, թե ո՞րքան ժամանակ է հարկավոր մարդկանցը վերամշակելու և այդ անիծված ժառանգությունը պարտասելու համար։ Բայց արդեն այժմ ել մենք տեսնում ենք ժողովրդական տնտեսության սոցիալիստական ձևերի բարձրացում, որը հանդիսանում է գլխավոր յերաշխիք՝ իսկապես ու ոյալ քաղաքականություն, որ նպատակ ունի իրականացնելու եկոնոմիական հավասարություն։ Իսկ մյուս կողմից, արդեն այժմ ել մենք նկատում ենք, թե ինչպես բանվորների ու գյուղացիների հաջորդ սերունդը ավելի մեծ մասշտաբով, հոծ մասսաներով գիմում է դեպի նոր կուլտուրական կյանք, որպիսի հանգամանքին աջակցում է մեր կուսակցության ամբողջ աշխատանքը, աջակցում է Խորհր-

դային իշխանության ամբողջ գործնեությունը, ամբողջ քաղաքականությունը։ Առաջ բանվորներից ու գյուղացիներից միայն հատ ու կենտ մարդիկ կարող էին ընկնել բարձրագույն դպրոցները, իսկ այժմ աշխատավոր սերնդի հասունացող խավերը տարեց-տարի ավելի լայն չափերով, ավելի սիստեմատիկ, այսպես ասած՝ «նորմալ կարգով» են անցնում բանֆակները և մտնում մեր բարձրագույն դպրոցները։ Առաջներում աշխատավոր մարդը միայն հասուն հասակումն էր քաղաքական ակտիվ կյանք մտնում, այժմ մենք ունենք միայն կոմյերիտմիության մեկ ու կես միլիոն անդամներ, բանվորների և գյուղացիների որդիներ, որոնք մատաղ հասակից շատ թե քիչ համաչափ կերպով մասնակից են դառնում ընդհանուր-քաղաքական և ընդհանուր-կուլտուրական ակտիվ աշխատանքներին. իսկ ավելի մատաղ սերունդը—մատաղահաս պիոներները—սկսում է ընդգրկել մարդկանց ավելի լայն շրջաններ, որոնք արդեն ամենավաղ հասակից դաստիարակվում, աճում, սովորում են աշխատել կուլտուրական այլ հիմքի վրա, քան նախընթաց սերունդները։

Պրոլետարիատի կողմից իշխանության նվաճումը չի կարող պատմական հրաշք ստեղծել. քաղաքացիական կռվում բուրժուազիայի վրա տարած հաղթանակի միակ փաստը՝ մարդկանց միջև միանգամից և անհապաղ չի ապահովում հավասարություն։ Բայց իշխանության այդ դրավումը և յերկրում բանվորական դիկտատուրայի ամրապնդումը վերջիվերջո այնպիսի պայմաններ է ստեղծում, որի ժամանակ պարզ է դառնում դեպի այդ եկոնոմիական հավասարությունը տանող մեր շարժումը։

XIV. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ՊԱՐՏԱՍՈՒՄԸ ՅԵՎ ԱՌՀԱՍԱՐԱԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՈՂՆԶՈՂՅՈՒՄԸ.

Այժմ քննենք այն անհավասարությունը, որը մեզ մոտ գոյություն ունի քաղաքականության բնագավառում, քաղաքական իրավունքների բնագավառում։ Այստեղ ամենից առաջ հարկավոր է թվել այն փաստերը, որոնց մեջ այդ քաղաքական անհավասարությունը դրսևորում է իր արտահայտությունը։

1) Ըստ մեր օրենսդրության՝ ընտրողական իրավունք չունեն այն մարդիկ, որոնք ապրում են ա ն ա շ խ ա տ ե կ ա մ ո ւ տ ո վ (նեպմանները, կուլակները, այն բոլոր անձնավորությունները, որոնք ոգուտ ստանալու նպատակով՝ այս կամ այն ձևով շահագործում են բանվորական ուժը)։ Այդպիսով, այստեղ «ոտաժող մարդիկ» են հանդիսանում ազգաբնակչության այնպիսի խավերը, որոնք իրենց նյութական բարեկեցությամբ և իրենց կյանքի մակարդակով կանգնած են ամենաբարձր աստիճանում, որոնք մեր իրավակարգում հանդիսանում են նախկին կառավարող պիտալիստական հասարակության, նախկին տիրապետող դասակարգերի փշրանքները, որ այժմս ընկել են պրոլետարիատի դիկտատուրայի յերկաթյա բազուկի տակ։

2) Աշխատավոր գյուղացիությունը չունի այնպիսի իրավունքներ, ինչպիսին ունի պրոլետարիատը, քանի որ գյուղացիությունը խորհրդային որգանների ընտրություններին հավասար թվով պատգամավորներ է տալիս ընտրողների ավելի մեծ քանակությունից, քան բանվոր դասակարգը քաղաքներում ու գործարանային վայրերում։ Այդպիսով այստեղ կա, մի կողմից՝ բանվոր դասակարգի և մյուս կողմից՝ գյուղացիության միջև քաղաքական իրավունքների անհավասարություն, ըստ որում այդ անհավասարությունը ակնբախ կերպով թեքվում է հոգուտ բանվոր դասակարգի իրավունքների գերակշռության։

3) Պրոլետարիատը ոգովում է քաղաքական առավելություններով և մեր որենսդրության մեջ առանձնակարգ տեղ է բռնում.

Մեր հասարակության մեջ, զանազան դասակարգերի միջև քաղաքական անհավասարությունը ամրապնդող այդ տեսակ որենսդրության պատճառները բավական պարզ են ու հասկանալի: Մեզ մոտ յերեք դասակարգեր կան՝ բանվոր դասակարգ, գյուղացիության լայն մասսան և, վերջապես, հասարակության մեջ աշխատակցելու թույլ տրված բուրժուազիան: Մենք գիտենք, վոր յեթե մենք ուզում ենք ապահովել աշխատավորների հիմնական շահերը, ապա անհրաժեշտ է ապահովել պրոլետարիատի դեկավարությունը և նրա ու գյուղացիության միջև յեղած դաշինքը՝ բուրժուազիայի դեմ ուղղված. մենք գիտենք նույնպես, վոր գյուղացիությունը, շնորհիվ իր սոցիալական դրության, ինչպես նաև մոմենտի առանձին դժվարությունների հետևանքով, հակված է ժամանակ առ ժամանակ տատանվել դեպի այդ բուրժուազիայի կողմը անցնելու, և վերջապես, մենք գիտենք, վոր յեթե նոր բուրժուազիան աճեր, ամրապնդվեր, իր թևերը կռեր և գյուղացիությունը իր ազդեցության տակ ձգելու համար տարվող կռվում բանվոր դասակարգին հաղթեր, ապա այստեղից կծագեյին հեղափոխության ամբողջ դրծը խափող մի շարք անխուսափելի վտանգներ: Մեր յերկրում բանվոր դասակարգը ամենից զիտակից ուժն է հանդիսանում, բայց նա իր թվով կազմում է գյուղացիական ազգաբնակչության մոտավորապես միայն մեկ տասերորդ մասը: Վորպեսզի դեկը նրա ձեռքից դուրս չգա, զարգացման ավյալ աստիճանում ամենից շատ և ամենից առաջ անհրաժեշտ է բուրժուազիայի անվնաս դարձնել, նրան հնարավորություն չտալ իր քաղաքական ազդեցությունը տարածելու գյուղացիության և քաղաքի առավելապես մանր-բուրժուական խավերի վրա: Այստեղից բղխում է նաև մասնավոր ձեռնարկուներին, առևտրականներին, խանութպաններին, վաճառականներին, կուլակներին և առհասարակ նեպմաններին քաղաքական իրավունքներից զրկելը:

Այն հանգամանքը, վոր գյուղացիությունը հակված է մեծ ստատուսներ անելու, և այն վտանգը, վորի հետևանքով գյուղացիության խավարամտություն ու անկուլտուրականություն (նրա սոցիալական դրության հետ կապված) գյուղացիությանը կարող են յերբեմն հակառակ նրա սեփական հիմնական շահերի, հրել բուրժուազիայի յետևից գնալու,—այդ հանգամանքից բղխում են այն վորոշ առավելությունները և քաղաքական արատներ, վոր բանվոր դասակարգի վերաբերմամբ կան մեր որենսդրության մեջ: Այդ առավելություններն ու արատները կրկնակի յերաշխիք են՝ մեր յերկրում բանվոր դասակարգի դեկավարությունը ապահովող:

Իսկ ինչ վերաբերում է ամեն տեսակ բուրժուազիային ընտրողական իրավունքներից զրկելուն կամ դրանց սահմանափակելուն, ապա աշխատավորներից հազիվ թե մեկն ու մեկը առարկի դրա դեմ. դրա դեմ կարող են առարկել միմիայն այդ բուրժուազիայի բացարձակ կամ գաղտնի կողմնակիցները, ինչպես են՝ մենշևիկները ու եսերները, վորոնք անգամ մազաչափ չեն հավատում սոցիալիստական իրավակարգը կյանքում իրականացնելու հնարավորությանը, թեև այդ իրավակարգի մասին այնքա՜ն շատ դուրս են տալիս: Նրանց մինչև այժմ էլ թվում է, վոր Ռուսաստանում կատարվել է պատմական մի ինչ վոր պատահականություն, և վոր մեր հասարակության զարգացումը անխուսափելիորեն կգնա կապիտալիստական ճանապարհով, և թե՝ վորքան շո՛ւտ պայթի Ռուսրդային իշխանությունը, վորքան շո՛ւտ վերջանա այդ ծանր (բուր-

ժուսպիայի համար) յերազը, այնքան լավ կլինի։ Ամեն մի մարդու համար, ով լրջորեն հավատում է սոցիալիզմի մասին ասվող խոսքերին, վորի խոսքը, հետևապես, համապատասխանում է իր գործին, և վորը հավատում է սոցիալիստական հասարակություն կազմելու հնարավորությանն և անհրաժեշտությանը, և վորը ամենևին չի ուզում՝ հետաղարձ դեպի կապիտալիստական իրավակարգը,—այդպիսի մարդու համար ավելի քան հասկանալի յե բուրժուական ելեմենտներին մեր յերկրում քաղաքական իրավունքներից զրկելը կամ այդ իրավունքների սահմանափակումը։

Զափազանց բարդ է հանդիսանում բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ յեղած քաղաքական անհավասարությանը հարցը։ Այստեղ մարդիկ զգալա դատողություններ շատ հաճախ փոխում են բարոյական դատողություններով, վորոնք վոչինչ ընդհանուր բան չունեն քաղաքականության հետ։ Որինակ, ասում են՝ մի՞թե գյուղացին յերեքից ավելի չի՞ աշխատում, քան բանվորը։ Ապա վո՞րտեղ է արդարությունը, քանի վոր դուք նրան քաղաքական քի՛չ իրավունքներ եք տալիս, քան բանվոր դասակարգին։ Մի՞թե մեր յերկրում գյուղացիությունը ահագին մեծամասնություն չի՞ կազմում։ Յեթե աշխատավորների մեծամասնությունը գյուղացիությունից է բաղկացած, ապա ինչո՞ւ պրոլետարական վոգբամասնությունը պետք է յուր կամքը արհեստականորեն փաթաթի աշխատավորների վերխարի մեծամասնության վրնքին։ Գյուղացին ձրիակերություն չի անում, նա տղրուկություն չի անում, նա բուրժուա չե, այլ աշխատավոր։ Ապա վո՞րտեղ է այստեղ գոնե ամենաելեմենտար (հասարակ) արդարությունը։ Յեվ արդյո՞ք դա նահանջ չե՞ այն պատգամներից, վոր հավասարություն է պահանջում աշխատավորների միջև, վորոնց

վրա միայն կարելի յե կառուցել դեպի սոցիալիզմը տանող իսկական կամուրջը։

Սակայն այս ձևի դատողությունները, վորոնք յերեսին համոզեցուցիչ են թվում, ունեն այն հիմնական թերությունը, վոր նրանք, փոխանակ ուժերի լուրջ հաշվառման և փոխանակ հարցի լուրջ քննության, կազմում են միայն խղճուկ խոսքեր։ Յեթե խոսքն արդեն արդարության մասին է, ապա հարցը պետք է այս ձևով դնել։

Արդարացի, թե՞ անարդարացի կլինեը, յեթե մենք թողտայինք սոցիալիզմի ամբողջ գործը։ Արդարացի, թե՞ անարդարացի կլինեը, յեթե մենք բուրժուազիային հնարավորություն տայինք մեզ հիմնացնել և վերակազդել իրերի հին դրությունը։ Բավական է հարցը միայն այդ ձևով դնել, վորպեսզի միանգամից բացասական պատասխան ստանանք։ Իհարկե, վերին աստիճանի «անարդարացի», պարզ սաած՝ ուղղակի հիմարություն կլիներ, յեթե մենք խաղաս թողտայինք սոցիալիզմի գործը։ Բայց չե՞ վոր մենք գիտենք, վոր սոցիալիզմի գործը վոչ միայն չի հասկանում բոլոր աշխատավորների հիմնական շահերին, այլ վոր վերջիվերջո սոցիալիզմի իրականացումից կոգավի վոչ միայն բանվոր դասակարգը, այլ և գյուղացիական լայն մասսաները։ Հետևապես՝ և՛ բանվոր դասակարգի տեսակետից, և՛ գյուղացիության հիմնական շահերի տեսակետից, սոցիալիզմի տապալումը մեր կողմից ուղղակի քաղաքական հանցագործություն կլիներ՝ յեթե մենք մեր գործը տապալեյինք մեր խակ հանցանքով։

Բայց չե՞ վոր մենք գիտենք և հաստատ հավատացած ենք, վոր մենք կարող ենք սոցիալիզմին հասնել միայն և բացառապես բանվոր դասակարգի և գյուղացիության միջև միություն ստեղծելու պայմանով. մենք գիտենք, վոր մենք հաղթող կհանդիսանանք միայն և

բացառապես բանվոր դասակարգի՝ այդ միության մեջ ունենալիք դեկավարության դեպքում։ Մենք գիտենք, որ պրոլետարական դիկտատուրայի խախտումը, այսինքն այդ դեկավարության խախտումը,— ամբողջ սոցիալիզմի գործի խախտումն է։ Ահա թե ինչու մենք պետք է ձեռք առնենք բոլոր միջոցները, որպեսզի ապահովենք այդ դեկավարությունը։ Յեվ յեթե ներկայումս գյուղացիության կամ նրա մի մասի կողմից որոշ տատանումների վտանգ դեռ ևս կա, թեև այդ տատանումները ուղղված են հենց այդ գյուղացիության հիմնական շահերի դեմ, ապա մենք պրոլետարիատի և գյուղացիության միջև պետք է թույլ տանք մի որոշ անհավասարություն, որպեսզի պրոլետարիատի ձեռքը տանք իր դեկավար դերը ապահովող մի հավելյալ յերաշխիք։

Վերջիվերջո, ինչպես որ դժվար չե հասկանալ, այդ տեսակ քաղաքականությունը ոչ միայն չի հակասում, այլ ընդհակառակը, արտահայտում է գյուղացիության հիմնական շահերը, որոնք, շատ հաճախ, ընորհիվ գյուղացիական ազգաբնակչության հետամնացության և տգիտության, նրա աչքից ծածկված են իր համար պակաս կարևոր, պակաս եյական, ժամանակավոր կամ թվացող կամ յերկրորդական ու դրանից առաջացած շահերի քողով, այնպիսի շահերի, որոնց պետք է կարենալ գոհաբերել ավելի հիմնական, ավելի արմատական շահերի համար։

Բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը պրոլետարիատի ու գյուղացիության միջև յեղած քաղաքական այդ անհավասարության մասին խոսում են միանգամայն բացարձակ կերպով, ամենքի առաջ խոստովանելով այդ անհավասարության գոյությունը. ճիշտ այդպես էլ մենք

պարզ ասում ենք, որ բանվոր դասակարգի այդ արտոնությունները հանդիսանում են միայն վորպես ժամանակավոր արտոնություններ և հետզհետե կվերացվեն այն չափով, ինչ չափով վոր մեր գյուղացիական մասսաները կզարգանան, ավելի գիտակից կդառնան, ինչ չափով վոր նրանք կվերապատրաստվեն։ Սոցիալիստական շինարարության գործը վորքան ավելի առաջ գնա, վորքան ավելի ու ավելի յեռին պլանի վրա անցնեն բուրժուազիայի մոտ դեռ ևս մնացած ուժերը, և վորքան շատ արագ ամրապնդվեն մեր ժողովրդական անտեսության սոցիալիստական ձևերը, հետևապես, վորքան ավելի ամուր լինի բանվոր դասակարգի և գյուղացիության միջև յեղած եկոնոմիական ամիչկայի հիմքը, և ուրեմն վորքան շատ լինի պրոլետարիատի քաղաքական ազդեցությունը այդ գյուղացիության վրա,— այնքան ավելի պակաս անհրաժեշտություն կլինի բանվոր դասակարգի համար այդ արտոնությունները ամրապնդումն և վերջնականը։ Դրանք աստիճանաբար կպակասեն և վերջիվերջո ավելորդ կդառնան։ Իսկ պրոլետարական ազդեցության հետագա ընդհանուր ամրապնդումը և աշխատավորների լայն մասսաների վերապատրաստությունը սոցիալիստական վոգով՝ անվտանգ կդարձնեն մինչև անգամ բուրժուական պահված ելեմենտների կողմից յերևան յեկող ազդեցությունները, և այդպիսով մենք վերջիվերջո կանցնենք մեր խորհրդային որգաններում ընդհանուր և հավասար ընտրողական իրավունքի սիստեմին։

Իսկ յեթե մենք նայենք ավելի հեռուն՝ մեր ապագայի խորքը, ապա մենք այնտեղ կտեսնենք մի այնպիսի ժամանակ, յերբ դասակարգերի միջև յեղած բոլոր պատնեշները կքանդվեն, յերբ քաղաքի և գյուղի աշխատավորների միջև յեղած սահմանը կվոչնչանա, յերբ ընդհանրապես կվերացվի պետական հարկադրող որգանների անհրաժեշտությունը, վոր բանվոր դասակարգի այդ արտոնությունները հանդիսանում են միայն վորպես ժամանակավոր արտոնություններ և հետզհետե կվերացվեն այն չափով, ինչ չափով վոր մեր գյուղացիական մասսաները կզարգանան, ավելի գիտակից կդառնան, ինչ չափով վոր նրանք կվերապատրաստվեն։ Սոցիալիստական շինարարության գործը վորքան ավելի առաջ գնա, վորքան ավելի ու ավելի յեռին պլանի վրա անցնեն բուրժուազիայի մոտ դեռ ևս մնացած ուժերը, և վորքան շատ արագ ամրապնդվեն մեր ժողովրդական անտեսության սոցիալիստական ձևերը, հետևապես, վորքան ավելի ամուր լինի բանվոր դասակարգի և գյուղացիության միջև յեղած եկոնոմիական ամիչկայի հիմքը, և ուրեմն վորքան շատ լինի պրոլետարիատի քաղաքական ազդեցությունը այդ գյուղացիության վրա,— այնքան ավելի պակաս անհրաժեշտություն կլինի բանվոր դասակարգի համար այդ արտոնությունները ամրապնդումն և վերջնականը։ Դրանք աստիճանաբար կպակասեն և վերջիվերջո ավելորդ կդառնան։ Իսկ պրոլետարական ազդեցության հետագա ընդհանուր ամրապնդումը և աշխատավորների լայն մասսաների վերապատրաստությունը սոցիալիստական վոգով՝ անվտանգ կդարձնեն մինչև անգամ բուրժուական պահված ելեմենտների կողմից յերևան յեկող ազդեցությունները, և այդպիսով մենք վերջիվերջո կանցնենք մեր խորհրդային որգաններում ընդհանուր և հավասար ընտրողական իրավունքի սիստեմին։

Իսկ յեթե մենք նայենք ավելի հեռուն՝ մեր ապագայի խորքը, ապա մենք այնտեղ կտեսնենք մի այնպիսի ժամանակ, յերբ դասակարգերի միջև յեղած բոլոր պատնեշները կքանդվեն, յերբ քաղաքի և գյուղի աշխատավորների միջև յեղած սահմանը կվոչնչանա, յերբ ընդհանրապես կվերացվի պետական հարկադրող որգանների անհրաժեշտությունը,

հրաժեշտությունը (յեթե միմիայն այն ժամանակ աշխարհի ուրիշ յերկրներում էլ կապիտալիստական պետությունները տապալված կլինեն), և յերբ ամբողջովին ու բոլորովին կմահանա, կվոչնչանա ամեն տեսակի քաղաքականություն։ Այդ քաղաքականությունը կվերածվի միայն ու միայն գիտական վարչմամբ և հասարակական տնտեսության գիտական ղեկավարությամբ։

XV. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՑԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ.

Մենք արդեն վերը տեսանք, վոր ուղիղ քաղաքականությունը ապահովվում է ուղիղ ղեկավարությամբ, իսկ ուղիղ ղեկավարությունը ապահովվում է հասարակական դասակարգերի և նրանց կազմակերպությունների միմյանց հետ ունեցած միանգամայն վորոշ դուրգրյությամբ։ Այդ ղեկավարությունը իսկապե՛ս ապահովելու համար լինի, անհրաժեշտ է, վորպեսզի պրոլետարիատը գնա բանվոր դասակարգի յեռևից, վորպեսզի բանվոր դասակարգը գնա իր պրոֆմիությունների յեռևից, վորպեսզի այդ պրոֆմիությունները, իրենց հերթին, գնան բանվոր դասակարգի առաջապահ գնդի յեռևից՝ իրենց կոմունիստական կուսակցության յեռևից, վորը պետք է հանդիսանա ամբողջ բանվորա-գյուղացիական բլոկի հիմնական ղեկավար ուժը։

Ինչպես մենք գիտենք, մեր կյանքում ամեն տեսակի և անվերջ քանակությամբ հակասություններ կան, հակասություններ՝ դասակարգերի միջև, հակասություններ՝ բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, հակասություններ՝ բանվոր դասակարգի իրա ներսում, հակասություններ՝ մեր հսկայական յերկրի՝ իրենց ազգային կազմով տարբեր՝ մասերի միջև։ Անհրաժեշտ է, վոր հենց

բանվոր դասակարգի իրա խորքերում գոյություն ունենա մի այնպիսի ուժ, վորը ամենից պարզ կերպով տեսներ այդ բոլոր հակասությունները, կանգնած լիներ դիտանոցի վրա և ժամանակին նկատեր բոլոր վտանգները, կարողանար զարգացման բոլոր տատիճաններում յերկրորդականը յենթարկել արմատականին ու հիմնականին և յերեվան բերեր կամքի չտեսնված միասնականություն ու ղեկավարության ընդունակություն։

Յեվ բանվոր դասակարգի այդպիսի կազմակերպությունն է հանդիսանում կոմունիստական կուսակցությունը, պրոլետարիատի այդ առաջավոր գունդը, մի գունդ, վորը իր մեջ է հավաքել մեր յերկրի բանվոր դասակարգի ամենավճռական, ամենագիտակից, ամենատաղաջավոր և ամենահամարձակ տարրերը։

Հենց նրա համար, վոր կոմունիստական կուսակցությունը իրենից ներկայացնում է բանվոր դասակարգի առաջապահ գունդը և յերկրի մեջ միակ հիմնական ղեկավար ուժը, հենց դրա համար էլ բանվոր դասակարգի բոլոր թշնամիները ամենից առաջ նրա վրա յեն հարձակվում,—այն է՝ բացարձակ բելոգվարդեյցիները և կալվածատիրական-բուրժուական կամ բուրժուական ռեժիմին դառնալու կողմնակիցները, ինչպես են՝ ռուսական սպիտակ միապետականները, կադետները և այլ հայտնի կողմնակիցները կալվածատիրական ու բուրժուական իրավակարգի. սոցիալիզմի քողարկված թշնամիները և կապիտալիստական իրավակարգի քողարկված կողմնակիցները, ինչպես են՝ մենշևիկները, այսպես կոչվող սոցիալիստ-հեղափոխականները և այլն։ Նրանք բոլորն էլ իրենց քաղաքական նպատակ են դրել խախտել կուսակցության հիմքերը, վորպեսզի վրլվի բանվորական դիկտատուրայի, Խորհրդային իշխանության ամբողջ շենքը և վորպեսզի կորվի այն ճանապարհը, վորի վրա բանվոր դասակարգը կանգնել

և Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ որերից։

Կուսակցության ազդեցության ամրապնդումը պրոլետարական դիկտատուրայի ամենահրաժեշտ պայմանն է, նրա նախապայմանը։ Յեթե կուսակցությունը բանվոր դասակարգի և հետո էլ գյուղացիության վերաբերմամբ ղեկավար դեր չի խաղում, ապա չկա և բանվոր դասակարգի դիկտատուրա. յեթե կուսակցության և անկուսակցական բանվորների ու գյուղացիների միջև կապ չկա, այն ժամանակ չի կարող դադարել ունենալ և ուժեղ լինել Խորհրդային իշխանությունը։

Մենք վերը տեսանք, որ յեթե մենք քննենք բանվոր դասակարգի ներսում դասավորվող հարաբերությունները, ապա մենք կտեսնենք, որ բանվոր դասակարգի ղեկավարն է կոմունիստական կուսակցությունը, որին իր ազդեցությունը ապահովում է բանվոր դասակարգի մի շարք այլ՝ իրենց կազմով ավելի լայն կազմակերպությունների վրա, առաջին հերթին՝ պրոֆմիությունների, պրոլետարիատի կազմակերպության այդ վերին աստիճանի լայն ձևի վրա, իսկ մյուս կողմից՝ բանվորական պատգամավորների խորհուրդների վրա, որոնք իրենցից ներկայացնում են գյուղացիության լայն խավերի վրա հենվող այդ պրոլետարիատի կազմակերպության պետական ձևը։ Այդ կազմակերպությունների միջոցով, որոնք իրենց հերթին անմիջապես կապվում, միանում են անկուսակցական բանվորների հետ, կուսակցությունը ապահովում է պրոլետարական մասսաների ամբողջ կապակցության, բոլոր բաղկացուցիչ մասերի ուղիղ ղեկավարությունը։

Սակայն կարող ենք հարց տալ մեզ, թե գյուղացիության մոտ ի՞նչն է համապատասխանում այն բանին, ինչ պրոլետարիատի համար հանդիսանում է նրա **արհեստակցական կազմակերպությունը**։

Յեթե մենք վերցնում ենք այնպիսի բանվորների, ինչպիսիք արդյունաբերության մեջ են, սակայն որոնք աշխատում են միայն հողի վրա, ապա այստեղ խոսքը վերաբերում է գյուղատնտեսական բատրակների, գյուղատնտեսական վարձու բանվորների մասին, որոնց համար իհարկե նպատակահարմար է նույնպես ունենալ իրենց արհեստակցական միությունը, ինչպիսի արհեստակցական միություն ունին այս կամ այն արհեստին պատկանող բանվորները։ Հողի վրա աշխատող բանվորների այդպիսի արհեստակցական միություն գոյություն ունի, դա—«Հողաշխատավորների միությունն է։ Սակայն յեթե մենք հարց տանք մեզ, թե ինչո՞ւմն են կայանում գյուղացու առանձին շահերը («արհեստակցական շահերը»), ապա մենք այստեղ բոլորովին պարզ կերպով կտեսնենք, որ նախ՝ գյուղացին չի աշխատում ինչպես բանվոր, այլ աշխատում է իր սեփական տնտեսության մեջ, և նրա մասնավոր-տնտեսական շահը (որը բղխում է նրա դերքից, որպես ինքնուրույն մանր արտադրողի, որն իր սեփական տնտեսությունն ունի) կայանում է նրանում, որ ավելի ձեռնտու գնով ծախի իր տնտեսության արդյունքները, որպեսզի ավելի ձեռնտու գնով գնի այն նյութերը, որոնք ստացվում են պետական արդյունաբերությունից և որոնք անհրաժեշտ են նրա համար (թե որպես սպառողի և թե որպես իրա սեփական տնտեսությունը ղեկավարողի). վերջապես նրա համար ձեռնտու է ունենալ եժան վարկ, որը նրան հարկավոր է իր տնտեսության գործնեության մեջ։ Նրա ընդհանուր հիմնական շահը կայանում է նրանում, որպեսզի բանվոր դասակարգի հետ միասին թույլ չտա հին կարգերի վերականգնումը, թույլ չտա նոր կալվածատերերի առաջ գալը, և գյուղացիական ծխերի ավելի ու ավելի աճող կուլը, և գյուղացիական մասսաների հիման վրա աստիճանաբար սպերատիվային միացումների

լավացնի իր անտեսությունը։ Բայց չե՞ որ այդ բոլոր խնդիրները վճռում է հենց գյուղատնտեսական կոոպերացիան, և նրա հետ միասին այնպիսի ոժանդակ կազմակերպություններ, ինչպես գյուղկոոները են և այլն։

Սակայն չպետք է թաղցնել, որ մինչև վերջին ժամանակները գյուղացիները մի առանձին հավատ չեն ձեռք բերել դեպի կոոպերատիվ շարժումը։ Դա մեծ չափով նրանից է առաջ եկել, որ կոոպերացիան մեզ մոտ բազմաթիվ թերություններ է ունեցել, և գյուղացին նրբանում չի գտել այն, ինչ նա պետք է գտներ։

Այդ թերությունները մեզ ժառանգություն են ընկել պինովրական կոմունիզմի ժամանակներից։ Այժմ պետք է դրանք ամենակարևոր կերպով վերացնել։ Ամենից առաջ խոսքը պետք է լինի կոոպերացիայի կատարյալ կամավորության և միջկոոպերատիվային դեմոկրատիայի մասին, այսինքն վարչության և բոլոր պաշտոնատար անձանց ընտրովի լինելու մասին։ Գյուղացին իր պայը չի տանի և իր փողերը չի հավատա շարունակ վերևից նշանակվող անձանց։ Նա ուզում է այնպիսի մարդկանց ունենալ, որոնց նա գիտե, որոնց նա հավատում է։ Միայն ա՛յն ժամանակ նա յուրանդով կկազմի կոոպերացիա, միայն ա՛յն ժամանակ նա խիստ շահագրգռված կլինի նրա մեջ։

Վորպեսզի կոոպերացիան ա՛յն դերը խաղա, որը մենք ենք նրան վերագրում, անհրաժեշտ է լուծել յերկու խնդիր՝

առաջինը, կոոպերացիայի տնտեսական ամրապնդման խնդիրը, այսինքն՝ կոոպերատիվային «կապիտալի» կուտակման խնդիրը, կոոպերատիվային շրջանառության աճման խնդիրը և այլն։

յերկրորդ՝ մասսաներին կոոպերատիվային շինարարության գործի մեջ քաշելու, նրան մասնակից անելու խնդիրը։ յեթե մասսաներին այդ գործի մեջ քաշելը տեղի չունենա, այն ժամանակ կոոպերացիան կկորցնի իր ամենաեական առանձնահատկություններից մեկը։

Սակայն այդ խնդիրները չի կարելի լուծել, յեթե չանցկացվի կոոպերատիվների անդամ լինելու կամավոր ձևը և կոոպերատիվային կազմակերպությունների ղեկավարների լիակատար ընտրովի լինելը։ Հասկանալի յե, որ կուսակցությունը, հենվելով չքավորների և միջակների վրա, ընտրություններին պետք է պայքարի՝ համոզելու միջոցով։ Բայց գյուղացիները իրե՛նք պետք է ընտրեն։ Այն ժամանակ գյուղացիական մասսաների ինքնագործունեությունը և նրանց ակտիվության աճումը անխուսափելիորեն կունենան այն հետևանքը, որ արա՛գ կաճի մեր գյուղատնտեսական կոոպերացիան։

Այնուհետև անհրաժեշտ է գործը այնպես դնել, որպեսզի կարելի լինի կոոպերացիան ազատել այն ավելորդ խնդիրներից, որոնք պետք է վճռվեն պետական օրգանների կողմից։ Կոոպերացիան, ի հարկե, պետք է կապված լինի Խորհրդային իշխանության որգանների հետ, բայց նա, ընդհանուր խնդիրների հետ միասին, ունի նաև իր առանձնահատուկ խնդիրները։ Որինակ, սխալ կլինեը, յեթե կոոպերացիան սկսեր տուրքեր հավաքել, ինչպես և սխալ կլինեը, յեթե քաղաքներում բանվորական սլրոֆմիությունները գործարանների և ֆաբրիկանների պետական վարչական աշխատանքները անմիջապես կատարեյին։ Յեթե կոոպերացիան ծանրաբեռնում են այնպիսի խնդիրներով, որոնք գյուղացիության կողմից մեծ զոհաբերություն են պահանջում, ապա հասկանալի յե, որ նա կոոպերացիային սրտանց չի մոտենա. ուստի դրա համար էլ գործը այդպես չպետք է անել։ Կոոպերացիան գյուղացիության համար պետք է

դառնա նրա տնտեսական բարձրացման որպանը։ Այն ժամանակ, կոոպերացիայի ղեկավարների ընտրովի ձևը և այդ կոոպերացիային անդամ գրվելու կամավոր ձևը ապահովելու դեպքում, կոոպերացիան կդառնա գյուղացիների ամենաստրելի կազմակերպությունը։ Իսկ արդյունաբերության և առհասարակ խորհրդային պետության որգանների հետ ունեցած կապի խնդրում նա փաստորեն կկատարի այն դերը, որ այժմ նրան է հանձնում մեր կուսակցությունը։

Խորհուրդների աշխուժացումը և կոոպերատիվ շարժման բարձրացումը—ահա մեր կուսակցության հիմնական անելիքները գյուղում։ Յեթե կուսակցությունը, և նրա հետ միասին ու նրա միջոցով՝ բանվոր դասակարգը ամրապնդի գյուղացիական մասսաների վրա ունեցած իր ազդեցությունը, այն ժամանակ սոցիալիզմի գործը մեզ մոտ ամենահաստատ կերպով ապահովված կլինի։

Մենք արդեն ասել ենք այն մասին, որ մինչև անդամ աշխատավոր գյուղացին՝ ինչպես ընդունված է ասել՝ «յերկու հոգի» ունի. մի կողմից՝ նա հանդիսանում է որպես աշխատավոր, պայքարում է կալվածատեր-կապիտալիստի դեմ, մյուս կողմից՝ նա հանդիսանում է որպես սեփականատեր, և յեթե հարստանում է՝ չի հրաժարվում մշակ վարձելու, և դրա համար էլ որոշ հարգանք է տածում դեպի խոշոր սեփականատերերը, այսինքն դեպի բուրժուան։ Նախ—դա. իսկ յերկրորդ՝ գյուղացիության ներսում կան զանազան խավեր, սկսած շահագործողներից և վերջացրած շահագործվողներով (չքավորները և կուլակները. կիսաբատրակները, որոնք մասամբ էլ աշխատում են իրենց բանվորական ուժը ծախելով, և նրանց վարձողները, ունևորները, հարուստները, այսպես կոչվող «գյուղակերները»)։ Յերբ գյուղացուն

կազմակերպում և նրա վրա ազդում է կոմունիստական կուսակցությունը (ուղղակի կամ անուղղակի կերպով, գյուղացուն անմիջականապես մոցնելով յուր կազմի մեջ կամ կոոպերատիվների, գյուղկոմների և մի շարք այլ կազմակերպությունների վրա ունեցած իր ազդեցության միջոցով կողմնակի կերպով ազդելով նրա վրա), ապա այդ կոմունիստական կուսակցությունը կազմակերպում է նրա աշխատավոր հոգին, կոոպերացիայի միջոցով նրան աստիճանաբար փոխադրում և դնում է հասարակական աշխատանքների ռելսների վրա. այդ աշխատանքին ընտելացնում է խորհուրդների միջոցով՝ նրան քաշելով սոցիալիստական կառավարության գործի մեջ, կուսակցության միջոցով—անմիջականապես վերամշակելով նրան այն վոգով, որ համապատասխանում է սոցիալիստական շինարարության նպատակներին և անելիքներին։ Յեթե գյուղացիության մեջ առաջ գար կոմունիստական կուսակցությանը հակառակ մի ուրիշ կուսակցություն (ինչ անունով էլ ուզում է լինի), նա կարող եր ունենալ և անպայման պետք է ունենար միայն մեկ միտք, միայն մեկ նշանակություն. նա ամեն կերպ կուժեղացներ, կկազմակերպեր գյուղացու «անաշխատ հոգին». նա կկազմակերպեր և կուժեղացներ հենց դեպի բուրժուամակերպը և կուժեղացներ հենց դեպի բուրժուազիան ունեցած նրա հակումները, նա կփայփայեր կինամեր, կաճեցներ և կզորացներ սոցիալիստական շինարարության գործի համար վնասակար հենց այն գծերը, վորոնք իրենցից ներկայացնում են գյուղացիության այդ տատանումները. նա՝ իրերի ընթացքով, անխուսափելիորեն պետք է՝ այսպես ասած՝ սրեր ու լարեր գյուղացիության ժամանակավոր և յերկրորդական շահերը՝ արմատական և հիմնական շահերի դեմ, մանր-բուրժուական նախապաշարումները՝ զարգացման սոցիալիստական գծի դեմ, զորբայական վարչագործությունները, հոխորտանքները՝ պրոլե-

ապրական համերաշխության դեմ. նա վոչ միայն չեր հարթի բանվոր դասակարգի և գյուղացիության միջև յեղած անհամաձայնությունները, այլ նա ավելի կսրեր դրանք. նա վոչ միայն չեր տանի բանվորա-գյուղացիական դաշինքի և պրոլետարական դեկավարության համարվոր ճանաչման գիծ, այլ ընդհակառակը, նա իրեն նպատակ կդներ՝ այսպես ասած՝ «դո՛ւրս պրծնել» պրոլետարական դեկավարությունից, ինչը իսկապես նշանակում է վոչ այլ ինչ, քան յերթե բուրժուազիայի և նրա գաղափարական ազենտների (հսեռների, մենշևիկների, աշխատավորականների և դրանց նման համաձայնողական կուսակցությունների) պղեցությունը գյուղացիության վրա, նրանց դեկավարությունը գյուղացիության նկատմամբ:

Այդպիսով, բանվորա-գյուղացիական գործի հաղթանակի համար անհրաժեշտ է կոմունիստական կուսակցության դեկավարությունը: Բայց այդ դեկավարությունը, իր հերթին, պետք է հենվի խորհուրդների և կոոպերացիայի ամեն կերպ ամրապնդելու և արդյունաբերության բարձրացման վրա: Յերթե այդ խնդիրները ճիշտ կլուծվեն,—այն ժամանակ գյուղացիությունը նորից կհամոզվի, վոր բանվորա-գյուղացիական միությունը և պրոլետարիատի դեկավարությունը, գյուղացիության հիմնական շահերի տեսակետից, անհրաժեշտ են՝ ինչպես ողը և ջուրը:

XVI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՍՀՄ.

Մինչև այժմ բոլոր հարցերը մենք քննել ենք բացառապես մեր (յերկրի) ներքին տեսակետից: Բայց չե՞ վոր յերկրագնդի վրա մենակ չենք ապրում, այլ շրջապատված ենք կապիտալիստական պետություններով, վորոնք վախենում են մեր աճումից և վորոնք ըստ եության հանդիսանում են մեր անհաշտ թշնամիները: Մինչև այժմ, բացի մեր յերկրից, վոչ մի յերկրում բանվոր դասակարգը չի կարողացել իր բուրժուազիային տապալել և իշխանությունը իր ձեռքը վերցնել: Դրա համար էլ բնականաբար հարց է բարձրանում մեր առաջ, թե կա՞րող ենք արդյոք առանց ուրիշ յերկրների հաղթական պրոլետարիատի աջակցության մեր յերկրում սոցիալիզմ կառուցել:

Մենք կարողացանք իշխանությունը գրավել մե՛կ յերկրում, մենք կարողացանք կռվով ազատվել ամեն կողմից մեզ վրա յեկող հակառակորդներից, մենք կարողացանք սկսել մեր տնտեսությունը բարձրացնել, մենք կարողացանք ամրապնդել և հաստատուն դարձնել պրոլետարական դիկտատուրայի իրավակարգը: Սակայն մենք ունե՞նք յերաշխիք, վոր մեզ վրա չեն հարձակվի ռուսական կողոպտիչները, վոր նրանց կողմից չեն լինի վոչ մի նոր «ինտերվենցիաներ»: Այդպիսի յերաշխիք կարող եր հանդիսանալ միայն կապիտալիստական մի քանի այլ յերկրների պրոլետարիատի հաղթությունը: Ահա թե ինչու մեր շահերը ամուր և մշտնջենապես կապված են միջազգային բանվոր դասակարգի շահերի հետ, ինչպես և ճնշված գաղութային գյուղացիության շահերի հետ, վորը իմպերիալիզմի ճնշման դեմ արտահայտած իր հուժկուներով թուլացնում է մեր ամենավտանգավոր հակառակորդների ուժերը: Ահա թե ինչու մեր կուսակցությունը մեր բանվոր դասակարգի ու գյուղացիության շահերի նկատմամբ դավաճանության կատարած կլիներ, յերթե դադարեր միջազգային հեղափոխական կուսակցություն լինելուց: Յերթե մենք և վոչ մի րոպե չպետք է մոռանալ այն հանգամանքը, վոր մեր խաղաղ շինարարությունը կարող է խան-

դարվել՝ մեր ամենամոտիկ հարևանների կողմից մեզ վրա կատարված հանկարծակի հարձակումով։ Ցերբեք մենք չպետք է որոշենք մեզ այնպիսի ցնորքներով, թե մեր թշնամիները մեզ միանգամ ընդմիշտ հանգիստ են թողել։ Ցեվ դրա համար էլ անքակտելի ու անխախտ պիտի լինի մեր յեղբայրական կապը ուրիշ յերկրների աշխատավոր մասսաների հետ, այն մասսաների, վորոնք հանդիսանում են մեր ամենահավատարիմ դաշնակիցները և մեր ամենահզոր հենարանը՝ թշնամու բանակում։

Քաղաքացիական պատերազմի փորձից, ինչպես և կապիտալիստական պետությունների (վորոնք աշակցում էին խռովարար հակա-հեղափոխական գեներալներին) անցյալ ինտերվենցիայի փորձից մենք գիտենք, թե դեռ այն ժամանակ ինչ ահագին ոգնություն է հասցրել մեզ միջազգային պրոլետարիատը, վորը իր բուրժուազիայի փեշերից շարունակ կախված՝ յետ էր պահում նրան և վորը մի անգամ չէ, վոր խանգարել է նրան իր դահճային գործը հաջողությամբ ի կատար ածելու մեր յերկրում։ Բոլորին հայտնի յե ֆրանսական նավաստիների խռովությունները Ոդեսայում, բոլորին հայտնի յե, թե ինչպես Արխանգելսկի ճակատից Թողին հեռացան անգլիական զորախմբերը, բոլորը գիտեն, թե ինչպես Ցեվրոպայի բանվորական մասսաները շատ անգամ են խանգարել զորքերի, հրանյութերի և զենքերի փոխադրման, վոր մեր Թշնամիները հատկացնում էին խորհրդային մատաղ հանրապետությունների հախիցը գալու համար։ Այդ փորձը մեզ ցույց է տալիս, վոր միջազգային պրոլետարական համերաշխությունը և առհասարակ աշխատավորների համերաշխությունը մի դադարկ խոսք չէ, վորով կարելի յե իրեն մխիթարել և վորով կարելի յե զբաղվել տոն օրերին։ Վո՛չ, դա ամենաուժեղ զորձն է, վոր մեր

բողջ բախտի, մեր ամբողջ ապագայի, մեր ամբողջ զարգացման ուղիների հարցի վերաբերմամբ ամենախոշոր նշանակություն ունի։

Այդպիսով, ոտարազգի զորաբանակների ավինների ծայրով հին կարգերի վերականգնումից ապահով լինելու վերջնական յերաշխիքը կարող է ծառայել միայն միջազգային հեղափոխությունը, վորի համախոհը, կողմնակիցը, կրողը պետք է լինի մեր կուսակցությունը։

Սակայն դուրս մեզ վիճակված է վոչնչանալ վո՛չ թե արտաքին Թշնամու հարձակումից, այլ մեր խակ սեփական հետամնացությունից, նրանից, վոր բավական յերկար ժամանակի ընթացքում ուրիշ յերկրների հաղթական պրոլետարիատի կողմից չստանալով տեխնիկական և եկոնոմիական ոգնություն, մենք անխուսափելիորեն կընկնենք՝ վորպես զոհ մեր հետամնացության, մեր եկոնոմիական թուլության։ Դուրս է՝ մեր յերկրի մանր-բուրժուական բնույթը, այն հանգամանքը, վոր նրա ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը գյուղացիություն է, իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների յերկար տարիներում ավելի ևս ուժասպառ յեղած բանվոր դասակարգի աննշան քանակը,— այդ ամենի հետևանքը դուրս այն կլինի, վոր «յերկաթյա անհրաժեշտությամբ» կկործանվի մեր ամբողջ շինարարությունը։

Այդպիսի պնդումները, վորոնք խորը թերահավատություն են արտահայտում մեր հեղափոխության ուժերը, կատարելապես սխալ են ու անհիմն։ Ճիշտ է, ուրիշ յերկրների բանվոր դասակարգի (այն բանվոր դասակարգի, վորը այդ յերկրներում դժբախտաբար դեռ չի գրավել իշխանությունը) կողմից մեզ համար կարևոր տեխնիկական և եկոնոմիական ոգնության բացակայությունը վե-

րին ասպիճանի կղանդակերպի մեր տնտեսական աճումը և դրա հետ միասին մեր յերկրի սոցիալիստական շինարարության ամբողջ թափը։ Յեթե մենք այդպիսի հավելյալ ոգնություն ստանայինք, անհամեմատ ավելի արագ առաջ կգնայինք տնտեսական ուղիով և դրա հետ միասին ավելի՛ արագությամբ կզարդացնեյինք մեր շինարարական գործը՝ և՛ եկոնոմիական, և՛ քաղաքական, և՛ կենցաղա-յին-կուլտուրական, և՛ ամեն տեսակ գիտությունների ու այսպես կոչվող «հոդեկան կուլտուրայի» բնագավառներում։ Ի հարկե, առանց այդպիսի ոգնության՝ մեր զարգացումն ավելի դանդաղ կընթանա, բայց մենք այնուամենայնիվ անշեղ առաջ կգնանք, ինչպես դա բավականին պարզ ցույց տվեց առաջին տարիների փորձը, տարիներ, յերբ մենք ազատ եյինք քաղաքացիական պատերազմից և կռվի դաշտում անմիջականապես աշխատանքներ տանելուց։

Իսկապես, այս գրքույկի ամբողջ ընթացքում մենք շատ անգամ ենք խոսել այն մասին, որ ընդհանուր առմամբ բարձրացնելով մեր յերկրի ժողովրդական տնտեսության արտադրողական ուժերը, միևնույն ժամանակ մեր ժողովրդական տնտեսության մեջ նկատում ենք սոցիալիստական ձևերի ավելի մեծ աճում, և այդ ժողովրդական տնտեսության այնպիսի ձևեր, որոնք ավելի ու ավելի յեն զարգանում սոցիալիստական ուղիով։ Վոչ մի կերպ չի կարելի ասել, որ, մի կողմից՝ մասնավոր-ձեռնարկուական կապիտալի, իրա բոլոր տեսակներով ու յերանգներով հանդերձ, և մյուս կողմից՝ պետական ձեռնարկությունների ու կոոպերացիայի միջև տեղի ունեցող տնտեսական պայքարում մասնավոր կապիտալը հաղթող ե հանդիսանում։ Ընդհակառակը, մենք գիտենք, որ նա համեմատաբար յեռին պլանն ե նահանջում, և որ ավելի ուժեղ, ավելի զորեղ են դառնում պետական տնտեսության հրամանատարական բարձունքները, և որ այդպիսով սոցիալիզմի գործը առաջ ե ընթանում։ Յեթե նա արդեն առաջ ե ընթանում առաջին իսկ խաղաղ տարիներում, ապա ո՞րն ե այն հիմքը պնդելու, որ հետագայում մենք կունենանք հետադա՛րձ շարժում։ Ո՞ր-տեղ են ապացույցների գոնե նշույլը, գոնե սաղերը, թե պետական տնտեսության ու կոոպերացիայի համար զարգացման պայմանները հետագա տարիներում ավելի անբարենպաստ կլինեն, քան նրանք յեղել են մեր տնտեսական վերելքի առաջին տարիներում։ Ընդհակառակը, յեթե այդպիսի ապացույցներ չկան, ապա կարելի յե ցույց տալ մի շարք պատճառներ, որոնք վկայում են ապագայի ավելի մեծ հաջողությունների հավանականության մասին։ Ամենից ու ամենից՛ յերկաթգծային տրանսպորտի առավելությունները, ավելի մեծ եկոնոմիա, ավելի մեծ ոգուտ կատարվի պետական տնտեսության համար՝ նրա պլանաչափության աճումից, այսինքն այդ տնտեսության բոլոր նյութական միջոցների և բանվորական ուժի պլանաչափ և ավելի նպատակահարմար ոգտագործումից, պետական իշխանության տրամադրության տակ ավելի մեծ գումարներ կգտնվեն, որ նա կարող կլինի, կոոպերացիաները կազմելու միջոցով, գյուղացիության կազմակերպման գործին ավելի լայն չափով ոգնելու, և այլն և այլն։

Ըստ եության, մենք արդեն այժմ ել ապացուցել ենք, որ կարելի յե սոցիալիզմ կառուցել նույնիսկ առանց ուրիշ յերկրների տեխնիկական-եկոնոմիական անմիջական ոգնության։ Ճիշտ ե, մեր սոցիալիզմի ձևերը նրա շինարարության մոտակա շրջանում անխուսափելիորեն կլինեն սոցիալիզմի հետամնաց ձևեր, բայց դա ցավ չի նրա՛ համար, որ այդ հետամնաց ձևերն անդամ մեզ յերաշխավորում են մեր հետագա առաջընթացի

շարժումը, դեպի սոցիալիզմի ավելի ճիշտ, ավելի կատարյալ ձևերը։

Հարկավոր է հիշել, որ նույնիսկ կապիտալիստական իրավակարգը, որը մի շարք դարերի ընթացքում է զարգացել, իր զարգացման վախճանի շրջանում՝ իսերիալիստական եպոխայի շրջանում, ունեցել է, չնայած իր պատկառելի հասակին, զանազան ձևեր և զանազան՝ այսպես ասած՝ «ազգային գծեր»։ Ամերիկական կապիտալիզմը դեռ այժմ էլ բավական խիստ տարբերվում է ֆրանսական կապիտալիզմից, գերմանականը—անգլիականից և այլն և այլն։ Ամերիկական կապիտալիզմը կրում է մոնոպոլիստական կապիտալիզմի պերկ արտահայտված գծեր, որտեղ տիրապետում են հայրենի արդյունաբերական զորեղ կազմակերպությունների (տրեստների) հետ միասին աճող բանկերը։ Ֆրանսական կապիտալիզմը—դա յերկրի ներսում համեմատաբար թույլ զարգացած արդյունաբերությամբ, ուրիշ պետություններին փոխառություն տվող, այդ պետությունների արյունը ծծող և յերկրի ներսում էլ արտադրողական վերին աստիճանի թույլ գործնեյությամբ աչքի ընկնող, առավելապես վաշխառուական տիպի կապիտալիզմ է. նրա ծոցում ոքևան են դեռ և մանր գյուղացիական տնտեսությունները, մինչդեռ, որինակ, անգլիական կապիտալիզմի սիստեմում, այդ կապիտալիզմը արդեն ամբողջովին կլանել, լափել է ազատ գյուղացու տնտեսությունը և կարողացել է միջազգային կողոպտիչի գծերը միացնել իր սեփական հայրենի արդյունաբերության զարգացման ուղղությամբ ունեցած յեռանդուն գործնեյության հետ։ Ռուսական արդյունաբերությունը նույնպես ունեցել է իր առանձին գծերը։ Այդ գծերը ամենից առաջ կայացել են նրանում, որ առհասարակ կապիտալիստական իրավակարգը մեզ մոտ թույլ է յեղել զարգացած՝ յեթե ընդհանրապես վերցնելու լինենք ժողովրդական ամբողջ տնտեսությունը։ Դա իր արտահայտությունը գտել է նրանում, որ Ռուսաստանի կապիտալիզմի սիստեմում խոշորագույն նշանակություն է ունեցել մանր գյուղացիական տնտեսությունը, կիսաճորտատիրական տիպի ագրարկալվածատերը (վարձու աշխատանք գործադրող կապիտալիստ-կալվածատիրոջ փոխարեն). խոշոր նշանակություն է ունեցել նույնպես և մանր արդյունաբերությունը (արհեստավորները, տնայնագործները), որին վոչ ամբողջովին է կարողացել կուլ տալ խոշոր կապիտալը իր հաղթական ընթացքում։ Բայց միևնույն ժամանակ յեթե վերցնենք միայն խոշոր արդյունաբերական արտադրությունը, ապա այդ խոշոր արդյունաբերական արտադրության բնագավառում մենք ունեցել ենք բավականին նշանակալից տոկոս այսպես կոչվող «հսկայական ձեռնարկություններ» (ավելի քան 10,000 բանվորներ ունեցող, ինչպես եյին՝ Մորոզովի մանուֆակտուրան, Հարավ-Ռուսական պողպատաձուլական գործարանները և նման արդյունաբերական հսկաներ)։ Դա նշանավոր չափով բացատրվում է ո տ ա ր յ ե ր կ ր յ ա կ ա պ ի տ ա լ ի ազդեցությամբ, որը մեր յերկրում հիմնել և խոշոր ձեռնարկություններ՝ դրանց կառավորելով հաճախ ըստ Արևմտյան-Յեվրոպայի տեխնիկայի վերջին խոսքի։

Ահա և այս սարսափելի, կիսաճորտատիրական բարբարոսության և առհասարակ տնտեսական սարսափելի հետամնացության միացումը ամենասառաջավոր ձևերին, որոնց հետ կապիտալիզմը, կազմում հասել է արևմտյան-յեվրոպական կապիտալիզմը, կազմում են ռուսական կապիտալիզմի տարբերող առանձնահատկությունը, նրա՝ ինչպես անվանում են՝ «ազգային դեմքը»։

Բայց չե վոր շարժումը դեպի սոցիալիզմ՝ գոտարկ տեղից չե՛ սկսվում. շարժումը դեպի սոցիալիզմ սկսվում է բանվոր դասակարգի կողմից իշխանությունը գրավելուց հետո, ըստ վորում այդ բանվոր դասակարգին բ ա ժ ին է

ընկնում կապիտալիստական իրավակարգի թողած ժառանգությունը։ Վերը ասածներից միանգամայն պարզ է, որ կապիտալիստական տարբեր յերկրներում այդ ժառանգությունը տարբեր պետք է լինի։ Յեվ յեթե կապիտալիզմը զանազան յերկրներում ունեցել է իր առանձնահատկությունները, ապա միանգամայն հասկանալի յե, որ սոցիալիզմն ևս, իր զարգացման առաջին շրջանում, մինչև որ աշխարհիս բոլոր յերկրները իմի կձուլվեն միասնական մեկ ամբողջի մեջ, անխուսափելիորեն նույնպես կտարբերվի իր առանձնահատկություններով, որոնք կբղխեն նախընթաց զարգացման առանձնահատկություններից։ Այն հանգամանքը, որ մեզ մոտ՝ խորհրդային կապիտալիստական առաջավոր ձեռնարկությունների հետ կապակցված՝ գոյություն են ունեցել ծայր աստիճանի հետամնաց տնտեսական ձևեր, անխուսափելիորեն իր կնիքն է դնում և մեր յերկրում կառուցվող սոցիալիզմի ձևերի վրա. և մանր առևտրականները ու մանր ձեռնարկողների ներկայությունից բղխում է, որ նրանք մի որոշ ժամանակ գոյություն կունենան նաև մեր ռեժիմի որով. գյուղացիության ահագին խավերի ներկայությունից, մեր յերկրում նրա տնտեսական անհավասարությունից բղխում է նախ՝ լրիվ սոցիալիզմին հասնելու համեմատաբար յերկար ուղին, և յերկրորդ՝ հակայական նշանակությունը գյուղատնտեսական կոոպերացիայի, որպես գյուղացիական տնտեսության զարգացման՝ դեպի սոցիալիզմ ընթացող հիմնական ճանապարհի. իսկ իր պատերի մեջ հազարավոր պրոլետարներ միացնող խորհրդային ձեռնարկությունների ներկայությունից բղխում է պրոլետարական դեկավարության հնարավորությունը մեր յերկրում։

Ուրիշ յերկրներում (յեթե չասենք գաղութների մասին), որինակ, Անգլիայում, ուր գյուղացիական տնտեսությունը աննշան դեր է խաղում, ժողովրդական տնտեսության կազմակերպության ձևերը անխուսափելիորեն այլ պետք է լինեն, և զարգացման ընթացքը, համեմատած մեր զարգացման հետ, պետք է զանազանվի ավելի արագ քայլով։ Ընդհակառակը, յեթե մենք քննենք և այն խընդիրները, որոնք կկանգնեն արևմտա-յեվրոպական պրոլետարիատի առաջ՝ նախկին գաղութների վերաբերմամբ, ուր ապրում են գյուղացիական ազգաբնակչության ահագին մասսաները, ապա այնտեղ կլինեն շատ խնդիրներ և տնտեսական շատ այնպիսի ձևեր, որոնք կհիշեցնեն այն հարցերն ու խնդիրները, որ մենք լուծում ենք մեզ մոտ, ինչպես և տնտեսական կյանքի այն կազմակերպչական ձևերը, որոնցով տարբերվում է մեր շինարարությունը։ Մենք ամենևին չպիտի ամաչենք այն բանից, որ մեր սոցիալիզմը, որը մենք կառուցում ենք, անխուսափելիորեն հանդիսանում է սոցիալիստական շինարարության հետամնաց ձևը։ Դրա մեջ մեղքը մերը չե. բայց մենք ուրիշ հնարավորություններ՝ անվերջ առաջ դնալու, այդ ձևերը կատարելագործելու, մեր հետամնացությանը վերջ տալու, ավելի և ավելի արագացնելու անցումն դեպի սոցիալիստական հասարակության իրոք կատարյալ տիպին։

Մեր յերկիրը այժմ դեռ նոր-նոր է սկսել դուրս գալ իսկապես որ սարսափելի աղքատությունից, և ուղղակի անմտություն կլիներ անգամ մտածել այն մասին, թե ժամանակ է ննջել դափնիների վրա կամ սկսել հանգանալ։ Մենք դեռ պետք է վերացնենք սարսափելի աղքատությունը, սովի, կեղտի, տգիտության, բարբարոսության, անշարժության հետացորդները։ բայց մենք մեր առաջ արդեն պարզ տեսնում ենք այն լայն և ուղիղ ճանապարհը, որով և մենք կհասնենք մեր վերջնական հաղթանակին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. *Մենք դուրս ենք գալիս աղքատ դրությունից։ Մենք կառուցում ենք նոր տնտեսություն՝ առանց կալվածատերերի և խոշոր կապիտալիստների* 3

II. *Ինչո՞ւ մենք մինչև այժմ հաղթել ենք (բանվորների և գյուղացիների դաշինքը)։* 9

III. *Բանվոր դասակարգը և գյուղացիությունը* 17

IV. *Բանվոր դասակարգի պայքարը բուրժուազիայի դեմ՝ գյուղացիության համար* 29

V. *Թե ինչպես կարող և հին ռեժիմը վերադառնալ յեսևի դռնից* . 40

VI. *Մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հիմնական ուղին* . . 45

VII. *Արդյունաբերությունն ու գյուղական տնտեսությունը պետք և փոխադարձաբար ոգնեն միմյանց* 60

VIII. *Կոոպերացիայի զարգացումը և դասակարգային պայքարը գյուղում* 71

IX. *Սոցիալիզմի շինարարությունը և դասակարգային պայքարի յեղանակները* 77

X. *Ո՞ւմ վրա պետք և հենվենք* 92

XI. *Պրոլետարիատի դիկտատուրան և նրա տարբեր նշանակությունը տարբեր դասակարգերի նկատմամբ* . . 103

XII. *Պրոլետարիատի դիկտատուրայի ձևերը* 114

XIII. *Եկոնոմիական անհավասարությունը և նրա պարտասումը* 125

XIV. *Քաղաքական անհավասարությունը, նրա պարտասումը և առհասարակ քաղաքականության վոչնչացումը* 138

XV. *Ղեկավարության ուղիղ քաղաքականության ապահովումը և կոմունիստական կուսակցությունը* 146

XVI. *Միջազգային հեղափոխությունը և ԽՍՀՄ* 154

ԽՍՐՀՄԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

——Հայկական սեկցիա——

Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10.

Ի. ՍՏԱԼԻՆ—Գյուղացիական հարց։ Գինը 50 կոպ.

Ի. ՍՏԱԼԻՆ.—Ազգային հարց։ (Տպագրվում է)։

Վ. ԼԵՆԻՆ—Պատգամներ յերիտասարդության. գինը 15 կ.

Ն. ԲՈՒԽԱՐԻՆ—Սոցիալիզմի ուղին յեվ բանվորա-գյուղացիական դաշինքը։ Գինը 1 ռ.։

Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՑ—Մեր առաջին բանվ. գյուղ. հեղափոխությունը Գինը 70 կոպ։

Ն. ԿՐՈՒՊՍԿԱՑԱ—Լենինի պատգամները ժողովրդական լուսավորության մասին։ Գինը 20 կ.

Լ.ԱՎՐԵՆՏԻԵՎ—Ինչպես աշխուժացնել խորհուրդները։ Գինը 30 կ.

Զ. ՑԱՎՈՐՍԿԱՑԱ—Կարա ցեցկին (կենսագր.)։ Գինը 10 կ.

Ն. ՏՈՒՐՑԱԿՈՒԼՈՎ—Ազգային հարցը յեվ դպրոցը։ Գինը 40 կոպ.

Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ—Հասարակագիտությունը I ասիճանի դպրոցում։ Գինը 65 կ.

Ն. ԵԼԻԶԱՐՈՎ—Ի՞նչ վորոշեց կուսակցության XIV համագումարը։ 112 եջ, գինը 30 կ.

Ա. ԴՄԻՏՐԵՎԱ—Տգիտությունը յեվ սնահավատությունը։ Գինը 15 կ.

Մ. ԼԻՎԵՆՍԿԻ—Գյուղատնտեսական հարկ։ Գինը 20 կ.

ՑԵՍԻՊՈՎ—Գյուղացիության պահանջները յեվ խորհրդային դպրոցի ծրագրերը։ Գինը 12 կոպ.

Ս. Լ.—Գեղջկուհին յեվ յերեխաները։ Գինը 30 կ.

Պ. ՎԼԱՍՈՎ—Հողի մշակումը յերաշտի ժամանակ։ Գինը 40 կոպ.

Լ. ՑՈՋԵՖՈՎԻՋ—Գյուղ կանգնի գերան կկոտրի (կոոպերացիան գյուղում)։ Գինը 30 կոպ.

Ի. ՊՈԴՑԱՊՈԼՍԿԻ—Ասծու կամքը թե՞ գյուղատնտեսական գիտությունը։ Գինը 20 կ.

Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ—Թե ինչպես կարելի յե գյուղում էլեֆտրականություն անցկացնել: Գինը 15 կ.

Ն. ՌՈՒՏԻՆ — Գյուղացիական հողաշինարարության այբուբենը: Գինը 30 կ.

Պ. ԼԻԽԱՉԵՎ—Խոզը գյուղացու կերակրողն է. Գինը 18 կ.

Ն. ԲՐԱՒՒԴԵ—Թե ի՞նչպես գերմանացին սպիտեց, վոր կովը տարին յերկու անգամ ծնի: Գինը 15 կ.

Ա. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ—Ինչպես ընտրել կաթնատու կով: Գինը 12 կոպ.

Ա. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ—Առաջին ոգնությունը հիվանդ կենդանուն: Գինը 17 կ.

Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ—Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդություններ: Գինը 17 կ.

Ն. ՍԵՄԱՇԿՈ—Թոխախ (պատկերազարդ): Գինը 25 կ.:

Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ—Ձերեխաների վարակիչ հիվանդություններ: Գինը 30 կ.

Վ. ԲՐՈՆՆԵՐ—Վեներական ախտեր (պատկ.) գինը 25 կ.

Եժ. ՆԱԴԵՅԻՆ—Ինչ, յեվ ինչպես կռվել նրա դեմ:

Ա. ՍՊԵՐԱՆՍԿԻ—Մոր այբուբենարանը: Գինը 16 կոպ.

Ն. ՍԵՄԵԿԻՆ—Առեվը, նրա վորդիները յեվ բոռները: Գինը 40 կ.:

Վ. ՑԱՉՎԻՅԿԻՑ—Մարդկային բնակարանի պատմութ. Գինը 15 կ.

Դ. ԳՐԱՎԵ—Ի՞նչպես է սարված տիյեզերքը: (49 նկ.): Գինը 95 կ.:

ԳՐԵՄՅԱՑԿԻՑ—Վորոս, կայծակ յեվ յելեֆտրականություն: Գ. 40 կ.

ԱԴՈԼ—Կենդանիների յեվ մարդու ծագումը: Գինը 35 կ.

Մ. ԳՈՐԿԻՑ—Ցերիտասարդ գրողը: Մարդը: Գինը 15 կ.

Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ—Պատմվածքներ:

Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ—Մոծակի յեվ արջի մասին: (Պատկերազարդ): Գինը 15 կ.

Պ. ՈՐԼՈՎԵՑ — Ճամբորդություն այերոպլանով: (Պատկերազարդ): Գինը 22 կ.

Պ. ՈՐԼՈՎԵՑ—Քիմիկոս Կուզկան: (Պատկ.) գինը 28 կ.

Ե. ԿՈՒՊՐԻՆ—Ցերկրի խորհրդում: (Պատկ.) գինը 15 կ.

Ա. ՆԵՎԵՐՈՎ—Ինչպես եյին ապրում տիկնիկները յեվ ինչ արեց արհեստ զինվորը: (Պատկ.) Գինը 16 կոպ.

Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ—Ինչպես Սաշոն կարմիր բանակային դարձավ: Գինը 35 կոպ.

Ֆ. ՖՈՔՍ—Մինիատյր մեկ ժամով: (Պատկ.) գինը 18 կ.

Ցե. ՌԱԴԻՆ—Պիոներ, պատպանիր առողջությունդ: Գինը 10 կ.

Պ. Ռ. Պատանի պիոներ: (Ժողովածու): Գինը 60 կ.

Պ. ԽԱՆԻԿՈՎ—Կարմրամորքներ (Հյուս. Ամերիկայի հնդիկների կյանքից): Գինը 45 կ.

ԵԴՄ. Դ'ԱՄԻՉԻՍ—Անձնվեր տղան: Գինը 10 կ.

ՈՒՅԴԱ—Փոքրիկ հերոսուհին: Գինը 10 կ.

ԹՌՉՈՒՆՆԵՐ, գունատիպ այլբոմ մանուկն. համար: Գինը 20 կոպ.

Դիմել՝ Центриздат, Москва, Никольская, 10. կամ՝ Հայաստանի Պետհրատին:

Բ11-88-4554/9ск -- 24599 52/14

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲ. 25 ԿՈՊ.

Н. БУХАРИН.

ПУТЬ К СОЦИАЛИЗМУ

и рабоче-крестьянский

с о ю з.

На армянском языке

Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва, Никольская, 10.

ՀՀ Ազգային գրադարան
NL0411104